

199
28

Unk. J. W.
1922

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ



ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ
ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

391.99 4
2-28

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՒԱ, 1922

252/6- Լ. 3.

ՏՊԵՐ Ե
ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՂՏՈՒՐԱՅԻ ՏԻՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ
ՄՈՍԿՎԱ 1922 ՓԵՏՐՈՍԻՆ

ԵՐԿՈՒ ԽՕՄԲ



4272-50



for Mr. Gurber



Իմ այս «Նրկերի ժողովածուն», թւում է
թէ, շատերին պիտի զարմացնի: Եւ զա հասկա-
նալի է միանգամայն: Եւ ահա թէ ինչո՞ւ:

Իմ գրական գործունէութեան սկզբի օրից ես
ստիպւած եմ եղել իմ հրատարակութիւններն
ինքս անել և քանի որ այդ գործը միշտ կապ-
ւած է եղել նիւթական որոշ հնարաւորութիւն-
ների հետ—ուստի և ես մինչև օրս ինչ որ հրա-
տարակել եմ—հրատարակել եմ պատահմամբ և
երբէք հնարաւորութիւն չեմ ունեցել սխառեմա-
տիկ կերպով հրապարակ հանելու իմ ստեղծա-
գործութիւնը,—մի հանգամանք, որ չափազանց
նպաստում է ոչ թէ գրողի մասին ոչ ձիշտ՝ պա-
տահական կարծիք կազմելուն:

Եւ ահա հիմա, երբ հնարաւորութիւն ու-
նեմ իմ ամբողջ ստեղծագործութիւնը հրապա-
րակ հանելու—մի տխուր երկմտութիւն պարու-
րել է ինձ: Հրատարակել արդեօք այն բոլոր
հին բանաստեղծութիւնները, որոնք անքակ-
տելի օգակներ են կազմում իմ հոգեկան—

նոյնպէս և ստեղծագործութեան — զարգացման
բաւականին երկար ընթացքի, — թէ՛ թողնել,
որ նրանք, այդ ձախող պայմաններից գրգռած
անլոյս մնացած երկերը այնպէս էլ մնան թղթե-
րում և իզուր սպասեն ոչնչացման: Աւելի քան
բնական պիտի թւաւ այս երկմտութիւնը, որով-
հետեւ ստորեւ հրատարակած իմ երկերից շատ-
շատերը կարող են թւալ անհասկանալի և՛ որ
աւելի հաւանական է՝ անտեղի: Բայց սխալած
կլինեն այդպէս մտածողները: Ամեն մի հեղի-
նակ պարտաւոր է իրեն հրատարակել այնպէս,
ինչպէս ինքն է հասկանում և ո՛չ թէ այնպէս,
ինչպէս պատահամբ հրատարակած երկերի վրայ
հիմնելով՝ պատահական տպաւորութիւն են ստա-
ցել ուրիշները:

Այսքանը—Pro domo sua. Մի քանի խօսք
ևս աւելորդ չէր լինի ասել հրատարակութեան
կարգի մասին:

«Երկերի ժողովածուն» խմբագրելիս ես գրե-
խաւորապէս մտահոգւած եմ եղել նրանով, որ
ամբողջ հրատարակութիւնը եթէ ոչ լիակատար
—գոնէ մօտաւոր պատկերը հանդիսանաւ իմ մինչ-
այժմեայ ստեղծագործութեան:

Այդ նպատակով ես ամբողջ գործը բաժա-

նել եմ երկու սուար հատորների, ըստ որում
առաջինի մէջ մտնում են լիրիքական բանա-
ստեղծութիւնները, և պօէմները, իսկ երկրորդի
մէջ—էպիքական պօէմները: Ինչպէս առաջին,
նոյնպէս և երկրորդ հատորում ես բանաստեղ-
ծութիւններն ու պօէմները դասաւորել եմ ժա-
մանակագրական կարգով, ի նկատի ունենալով
այն հանգամանքը, որ յիշեալ բանաստեղծու-
թիւնը գրւում է տւեալ թւականին ո՛չ թէ պա-
տահմամբ, այլ, եթէ կարելի է այսպէս արտա-
յայտել՝ ներքին ժամանակագրական կարգով,
որը և ամենաէականն է որեւէ բանաստեղծի
հասկանալու համար: Այս թերեւ մի քիչ չի վե-
րաբերում «Սառն բանաստեղծութիւններին»,
որոնք տեղաւորւած են, թէպէտեւ նոյնպէս ժա-
մանակագրական կարգով, բայց բանաստեղծու-
կան շարքերից առանձին՝ գրքի վերջին մասում՝
գրքի ամբողջութիւնը չխախտելու նկատառումով:

Ինչ վերաբերում է նախկին հրատարակած-
ներիս ուղղումներին—կարծում եմ այդ ոչ մի-
այն անհրաժեշտ, այլ անխուսափելի է լեզ-
ւական խնդիրների և ոճային նկատառումների
սահմաններում: Եւ իմ բոլոր ուղղումները, կար-
ծում եմ, չեմ անցել յիշեալ սահմաններից:

Վերջում՝ աւելորդ չէր լինի յիշատակել, որ
իմ առանձին հրատարակութեամբ լոյս տեսած
պօէսները բոլորն էլ սպառուել են վաղուց և վա-
ղուց սպասում էին երկրորդ հրատարակութեան:

Ե. Զ.

ՄՈՍԿՈՎԱ 1921
Դեկտեմբեր

ԵՐԿԵՐԻՍ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ—ԱՐՓԻԿԻՆ

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՅ

ՄՈՍԿՈՎԱ 1921 XII

ՈՐՊԷՍ ՍԿԻԶԲ

1

Գիշերը ամբողջ հիւանդ, խելագար,
 Ես երազեցի արեւի մասին:
 Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չկար—
 զուհառ էր շուրջս՝ գիշեր ու լուսին:

Ես երազեցի արեւի ոսկին,
 տենչացի նրա հրաշքը խնդուն՝
 ուզեցի սիրել շշուկն իմաստուն
 արեանման, արնավառ խօսքի:—

Բայց շուրջս այնպէս զուհառ էր, տկար,—
 խօսքեր չկային ու արեւ չկար...

Ո՞վ կհանդիպի, ո՞վ կրարեի,
 ո՞ւմ հոգեհամբոյր խօսքը կլսեմ:
 Ո՞ւմ ուրախացած դէմքը կարեւի՝
 բարեկամական հրճանքով վսեմ:

Ո՞վ կհամբուրի, ո՞վ կհեկեկայ,
 ո՞վ կհիանայ անսուտ հրճանքով:
 Գուցէ աշխարհում, դուրսը, մէկը կայ,
 որ ապրում է իմ անուրախ կեանքով:

Գուցէ իմ սրտում, երգերում իմ մութ,
 խօսքերում՝ առած իմ հոգու մասին —
 հեռաւոր մէկի անըջանքն եմ սուտ՝
 նետւած աշխարհի անսուտ երազին:

Գուցէ՝ ապրելով նրա երազում՝
 երգում եմ նրա սաղնապները խոր —
 և թւում է ինձ աշխարհի մութում,
 որ ինձ եմ երգում, կեանքս մենաւոր: —

— Ողջն քեզ, սնյալտ, անծանօթ ընկեր,
 խաղաղութիւն քեզ, հեռաւոր եղբայր.
 — Ողջն ձեզ, վաղւայ չծնւած կեանքեր:

— Ես՝ եղբայրօրէն ու մտերմաբար՝
 ողջունում եմ ձեզ անցած խաւարի
 խմտատուն, տխուր ժպիտով բարի...



4272-56

Ես գալիս եմ ահա:—Նայեցէք, նայեցէք:
 Ես գալիս եմ ահա—գարերից...
 Ու բերել եմ ինձ հետ երազները իմ սէզ
 ու երգերը ցնդած օրերի:

Նայեցէք,—նայեցէք. դուք ինձ չէք ճանաչում.
 Ես սիրել եմ աշխարհը—այնքան...
 Բայց հիւանդ օրերի թուաւոր կանաչում
 ես թաղել եմ թեքս արնաքամ:

Թաղեցի օրերում, երբ գիշերը անհուն
 խաւարով փայփայում ու գերում էր—ձեզ:—
 —Ես գալիս եմ ահա՝ հազարդէմ, բիւրանուն,
 պոռնիկի պէս լնկած, ազօթքի պէս հեզ...

1915—1921
 Կարս—Մոսկու

ՅԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՄԲՈՐՐԵՆԵՐԸ

И так мы живем, что нельзя нам не жить.

Պետ.

Յարգազողի ճամբորդներ ենք մենք երկու՝
երկու ճամբորդ պատահառած շորերով:
Ու սիրել ենք տրամութիւնը մեր հոգու՝
անըջական կարօտներով ու սիրով:
Մենք սիրել ենք տրամութիւնը մեր հոգու՝
անըջական ինչ-որ կարօտ, ինչ-որ սէր:
Ու սիրում ենք առաւօտից— իրիկուն
ճամբայ երթալ— ու յաւիտեան երազել:
Աչքերիս մէջ մենք պահել ենք երկնային
ճամբաների հեռուները զիւթական—
ու անցնում ենք ուղիներով երկրային,
ուր բիւր մարդիկ երազեցին ու չկան:
Մշուշի պէս մեր մանկութիւնը անցաւ՝
գորշ, անարեւ, անմխիթար մանկութիւն:
Զառանցանքի պէս մանկութիւնը անցաւ—
ու հեռացանք: Ու չենք դառնա կրկին տուն:
Լնււ հեռացանք ու քայլեցինք անդադրում,
երազելով յաւերժական հեռուներ:
Կեանքը դարձաւ յաւերժական մի փնտրում—
մութ, անհեթեթ, տարօրինակ կեանքը մեր:
Ու օրերում բազմագոյն ու բազմազան

փառուեց, փառուեց ողջակիզուող սիրտը մեր, —
 բայց աչքերը մեր — արևներ չառաւան,
 և մեր սրտերը — լուսաւոր հեռուներ:
 Ու մշուշոտ մեր աչքերը յաւիտեան
 սրտնեցին պատահական աչքերում
 Յարգազողի ուղիները ոսկեման,
 նրա անձիր, անծայրածիր այն հեռուն:
 Բայց աչքերում նրանք երկինք չգտան,
 ու սրտերում — արեգակներ ոսկեփառ,
 ու բզկաւեց հայեացքներից անկենդան
 որը սիրտը մեր՝ երազօրէն — հոգեփար:
 Ես ուղեցի երգել գովքը Աստծու,
 երգել փառքը պայծառ սիրոյ ու հացի.
 սիրտս լցւեց... բայց չգիտեմ, թէ ինչու —
 գորշ օրերի տաղակութիւնը երգեցի...
 Քաղաւթ մնաց իմ աչքերում մի անհուն,
 կապուտաչեայ երջանկութեան առասպել.
 մի երկնային առնշտութեան պատմութիւն —
 ու կարծրացաւ սիրտս՝ անլոյս ու անբեր:
 Ձէ՛ որ կեանքում չհասկացաւ ոչ-որ մեզ, —
 ու խնդացին լուսաւոր մեր աչքերին,
 բռն ճեղնեցին մեր կարօտները հրկէզ —
 ու հեռացան: Ու ո՛չ մի լոյս չբերին:
 Քոյրը խնդաց, բարեկամը ծիծաղեց,

օտար մարդիկ հայհոյեցին ու անցան:
 Միայն պոռնիկը մշուշում համբուրեց
 և խելագարը բարեկց կիսաձայն:
 Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պէս,
 կեանքը դարձաւ անմիջիժառ գառանցանք.
 — մենք կժպտանք, զսփ կժպտանք մեռնելիս,
 որ երազում երազեցինք ու անցանք...

1916—1917

*

Մենք բոլորս, որ գնում ենք մենակ, արտում,
 որ գնում ենք խանութներում գինի ու հաց,
 որ փնտրում ենք անկարելի մի խնդութիւն,
 բայց չենք գտնում՝ վազքով տարւած ու գբաղ-
 ւած։—

մենք բոլորս, որ, յոգնաբեկ, չենք նայում վեր—
 մոռանալով աշխարհային չարը, բարին՝
 արտում կօրհնենք մի իրիկուն օրերը մեր—
 ու կնայենք Յարգազողի ճանապարհին...

1917

ԱՍՏՂԻԿ ՂՈՆԴԱԽԶԵԱՆԻՆ

ԵՐԵՔ ԵՐԳ ՏԽՐԱԴԱԼՈՒԿ ԱՂԶԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Et c'était le dernier amour du soir antique...

Albert Samain.

1. ՃԱՄԲԻՆ...

Օրօրւելով կառքն էր վազում սրինթաց
դաշտի միջին, ճանապարհով ցեխապատ:
Թօնն էր մազում միապաղաղ, ցուրտ ու թաց:
Օրն էր մարում հիւանդոտ ու մեղմ-վհատ:

Օրօրւում էր կառքը, վազում ու վազում:
Կառապանը երգում էր մի ինչ-որ երգ:
Թոքախտաւոր կինն էր մօտիս դառն հազում:
Մութն էր գրկում արեմուտք ու արեւելք:

Թօնն էր մազում միապաղաղ, ցուրտ ու թաց:
Ազաւաները անցնում էին քրքջալով:
Թոքախտաւոր կինը տխուր հեծկլատց:
Քամին անցաւ՝ մէկի մասին ողբալով:

Եւ կառապանն, օրօրւելով, դեռ երկար
երգում էր իր օրերի երգը անզոյն:
Գնում էինք: Ո՛ւր—չգիտեմ: Վերջ չկար:
Գնում էինք: Անխօս: Անձայն: Ու անքուն...

2. ԱՆՔՈՒՆ ԳԻՇԵՐԻՆ

Քնել չի լինում...

Հիմա, երբ այնպէս ուզում եմ քնել,
ամեն, ամեն ինչ մտքիցս հանել:
Հայեացքներս՝ անփակ՝ թափառում են լուռ—
ու միտքս, տարտամ, զեղերում է մութ
զաշտերում տխուր:

Մթութեան գրկում լալիս է դողդոջ
լոյսը լապտերիս՝ մեռնող աղջկայ
հոգեվարքի պէս...

Մէկը բաղխում է դռներն անցածի—
ու յիշում եմ քեզ:

Մոռացած երգի նւագի նման
զոգում է հոգիս լոյս մատների տակ—
և ահա մէկ-մէկ շարւում են իմ դէմ
պատկերներ, դէմքեր, որ կորել էին
առանց յիշատակ:

Այնտեղ, մութի մէջ յայտնւում է ահա
տեսիլդ գունատ ու տխրադալուկ,—

• ր երի անյայտ մշուշից ելած

գունատ աչքերու:

Ու յիշում եմ ես անձրևոտ մի օր—

մի հին իրիկուն.

հեռու երգերի խնդավառ օրօր,

հարսանքի հանդէս.—

մաղող անձրևի կաթիլների տակ

կանգնել էի ես...

է, քնել, քնել...

Աչքերս փակեմ ու սեղմեմ ամուր

ու հմտածեմ ոչնչի մասին:

— Միթէ, երբեմն, չէի՞նք միասին...

— Ախ, օրօր առա, անդորր ու օրօր.

քնել եմ ուզում՝ գիշերն անց կացաւ...

— Նրա՞յ էր արդեօք, գառանցանք, թէ ցաւ...

— Յաւ, ցաւ էր անշուշտ.

դու երբէք, երբէք ինձ չես ժպտացել—

քո ժպիտն անգամ ցաւ է թւացել

իմ հոգուն տկար...

Ես քեզ կանչեցի երկար ու երկար—

դու չեկար, չեկար, —

ցանկացայ լինել քո դէմ մի հլու

ու անկամ գերի—

և ես իմ սիրով քեզ ձանձրոյթ բերի...

Օտար էր հողիս քեզ համար, ինչպէս
օտար գաշտերից բերած ծաղիկեփունջ.
սանձանքի վարդեր, յոյզի ծաղիկներ,
երազի սատղեր, յոյսերի ցոլքեր—

ու կարմիր, կարմիր խաշխաշներ ցաւի:—
այս ծաղիկներով դարդարեալ հողիս քեզ նւէր
բերի,

որ քս կոյս հողին իմի հետ ցաւի...

Ու ես չեմ յիշում, թէ ինչպէս մի օր—
օտար, անմեկին—

եւ քեզ կորցրի նոր կեանքի շեմքին...

Ձէ, դու գնացիր, չգիտեմ թէ ուր:
եւ էլ գնացի: Ի հարկէ, այնտեղ,
ուր ապրել ես դու երկար ժամանակ—
ապրել չէր լինի:—

Ձէ՛ր լինի տեանել լոյսերը ձեր տան,
չէր լինի տեանել լոյսն փողոցը ձեր,
որ մինչև հիմա ես չեմ մոռացել...

Թողնենք, ախ, ինչ հող.

չէ՛ որ չգիտէ, չգիտէ ոչ-որ,

թէ ինչո՞ւ կեանքում աշխատէ եղել.—

սէրը մեզ համար—արցունք ու արիւն,

սէրը մեզ համար մահւոն գին ունի,

իսկ կնոջ համար—հրճանքի գինի...

Այս անքուն, անքուն ու լուռ գիշերին
ախ, էլ չեմ ուզում վերջիշել կրկին
անցեալը անմիտ ու անմխիթար.

էլ ինչո՞ւ ես դու գալիս անդադար

և ուշ գիշերով փորել ես ուզում

իմ հողին տկար...

Դրա համար ես դու աշտեղ եկել
օ, նենգոտ տեսիլ...

Ուզում ես հոգուս վերքերը պեղել,
որի գանձերը չուզեցիր տեսնել...

Օ, զգուշիկ կին,—

քեզ արատ է պէտք, սին արատ հոգու,

որ լուռ ծիծաղես ու չարկամ խնդաս—

և ամբողջ հոգով հրճանքից թնդար...

Ուզում ես՝ պատմեմ, թէ ինչպէս յանկարծ
ինձ համար փոխւեց ամեն, ամեն բան—

և ես կորցրի երազի ճամբան...

Մի գիշեր էր մութ: Անձրև էր գալիս:
Խաւար էր իջել իմ միջնած հոգում:—
Ամայութիւնն էր հեկեկում այնտեղ
հին, անվերադարձ երազների տեղ:
Եւ ես դուրս եկայ: Յեխոտ փողոցով
քայլեցի երկար:
Զգիտեմ, թէ ուր. ինձ համար արդէն
ճանապարհ չկար...

Երկար քայլեցի:
Եւ իմ գէմ ահա—մի երկար փողոց:
Հեռեւում—դեղին, տարտամ կրակներ:
Եւ ես մօտեցայ այն կրակներին,
որոնք իմ սրտին մի հին լուր բերին...
Մի հին լուր՝ հոգուս մէջ պահւած ծածուկ—
և ես այն շեմքը անցայ կամացուկ...

Ու... այս եմ յիշում՝
մի հին անկողին—թաղւած մշուշում:
Ու մի մերկ մարմին:
Ու ցաւոտ, ճնշւած հեկեկանքը իմ...

Ու դուրս եկայ ես:
Զգացի միայն, որ ցուրտ է, քամի,—
որ կեանքն ինձ համար էլ կատակ է մի...

Ինձ համար մեռաւ ամեն սրբութիւն:
Գնա, սիրելիս:
Թող կեանքը գլխիս մրրիկներ տեղա
ռ մոխիր ցանի—
էլ ո՛չ մի զղջում իմ երազը հին
յետ չի դարձնի...
Գնա, սիրելիս.
ու թող մի վայրկեան քեզ մտքից հանեմ,—
ուղում եմ քեւում—տխ, ինչպէս քեւում...

3. ՄԵՌԵԼՈՅ

Երեկոն անձրևոտ էր ու թայ:
Փողոցները—զատարկ, անազմուկ:
Ու քամին էր անցնում սրընթաց
ու տամուկ:

Ու գիշերը իջնում էր մթին.
Երևում էին մութ հեռում
փողոցի կրակներն երերուն,
յանձնաժամօթին ու սափն:

Ու գնում էի ես յամբընթաց,
ինքս ինձ քո անունը ասում:
Հեռում ինչ-որ մէկը խնդաց
փողոցի անձրևոտ երազում:

Ու օրհնում էի ես իմ սրտում
մոռացած դամբարանը քո մութի:
Մէկն ասաց, որ ստում եմ, ստում,—
ու լսում էր հեռում մէկի լացն անօգուտ...

Պարս 1913

ՏԵՍԻԼԱԺԱՄԵՐ

1

Թի լուսէ աղջիկ, լուսէ մի մեռել
 օրերի միգում երևում է ինձ:
 Թարթում են միգում կրակները գեռ
 ու կարօտը հին խեղդում է նորից:

Անցնում է, օրպէս անմարմին տեսիլ
 ու նորից միգում երևում է նա:
 Ու նորից չկայ: Ու նորից գիշեր—
 փողոցի վրայ ու հոգուս վրայ:

Կրակներ, ջահեր: Անցնում են նրանք,
 կանչում են նրանք, ակնարկում են ինձ:
 Կանգնում են թարթող կրակների տակ,
 ներկած աչքերով կանչում են նորից:

Ու լուռ է հոգիս: Ու մենակ եմ ես:
 Երագուն, տխուր: Հաւատում եմ դեռ:
 Ու անցնում է նա—անմարմին, անտես,—
 մի լուսէ աղջիկ, մի լուսէ մեռել:

Ես նստում էի անմարդ բուլվարում՝
աշնան արևի համբույրին գերի:
Խմում էր հոգիս երկնքի հեռուն,
լսում էր հոգիս երգը զանգերի:

Ու անթանթ, անթանթ նայում էի ես
անսահման, անծիր երկնքի հեռուն:
Ու թանց աչքերով տեսնում էի քեզ—
յաւիտենութեան կապոյտ դաշտերում:

Եւ երբ երեկոն մեռնում էր բոցում
ու իջնում էր պարզ, աստղազարդ գիշեր—
կապոյտ ջրերի հեռու զնգոցում
ես լսում էի քո շշուկը գեռ...

Հոգուս մէջ իջել ու փռել էր մի
հիւանդոտ, հիւանդ տխրութեան հանգիստ:
Հաշտել էի ու լռել էի:
Ու լուռ էր հոգիս՝ լուռ ու լռանիստ:

Եւ մէկը յանկարծ ինդաց խաւարում—
դուբար, դաշտերի մենակութեան մէջ:
Մէկը դաշտերում տազնայ էր փռում—
ու մութ սենեակում հսկում էի ես:

Դուբար, դաշտերում, քրքշում էր քամին:
Ճշում էր հոգիս՝ հիւանդ ու տկար:
Սուերները լուռ օրօրում էին:
Ու լուռ էի ես: Չկայիր: Չեկար:

Եւ մի իրիկուն զանգերի երգում
լսեցի վճիռ խոստումները քո:
Կարծես թէ հոգիդ իրիկայ միգում
կանչում էր անտես... Խաղաղ երեկոյ:

Ու զօղանջները կապոյտում անծայր
թիթեռի նման ճախրում էին դեռ—
երբ հեռուներում զնգալով անցար,
որպէս մի զօղանջ, մի լուսէ թիթեռ...

Անցար—լուսաւոր, հեռաւոր, թեթեւ,
ճառագայթի պէս իրիկնամուտի:
Իսկ սիրտս՝ տխուր, յոգնաբեկ, անթեւ,
խմում էր իջնող տաքնապը մութի...

(Հայրենիքում)

Ձիւնապատ լեռներ ու կապոյտ լճեր:
Երկինքներ, որպէս երազներ հոգու:
Երկինքներ, որպէս մանկական աչեր:
Մենակ էի ես: Ինձ հետ էիր դու:

Երբ լսում էի մրմունջը լճի
ու նայում էի թափանցիկ հեռուն—
դարձնում էր իմ մէջ քո սուրբ անուրջի
կարօտը այն հին, աստղային, անհուն:

Կանչում էր, կանչում ձիւնոտ լեռներում
մէկը կարօտի իրիկնամուտին:
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն,
խառնելով հոգիս աստղային մութին...

Եւ մի առաւօտ, մշուշ էր ու մէջ,—
մոռացել էի ու չէի յիշում—
երբ եկար յանկարծ՝ տխուր, յուսաբեկ,
հովի պէս անցար, անունդ—Աշուն...

Անցնում էիր դու անմարդ պուրակում
և ընկնում էին քո ոտների տակ
տերևներ, թերթեր՝ դեղին, սպիւզոյն,
մոռացած միգում, որպէս յիշատակ:

Լուս ընկնում էին տերևները վար,
ու ծածկում էին ճանապարհը, քեզ:
Ու ցուրտ պուրակում, մենակ, հոգեվար
մեռնում էր հոգիս ու լուս էի ես...

Հիմա չգիտեմ, մոռացել եմ ես
ճամբաները քո: Մշուշ ու թախիծ:
Մոռացել եմ ես, մոռացել է քեզ
օրերի միգում կուրացած հոգիս:

Անցնում են, հոսում օրերը անծայր:
Ճամբորդների պէս գնում են հեռու:
Յիշում եմ միայն, որ մի օր անցար
օրերիս նման—ու յետ չես գալու:

Եւ գուցէ մի օր, մի վերջին գիշեր,
երբ վերջին միգում աչքերս մարին—
արթնանայ յանկարծ անխմտաւ մի սէր
ու աստղը ժպտայ մոխրացած քարին...

Ե Ր Ե Ք Ը

(ԳՕԷՄ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ)

1

Մի հին զգեստում ապրում էին զոց
երեքը—նրանք. զգեստում այդ հին:
Նրեկուսն էլ նրանք այդ երազ-կնոջ
տապեաներն էին:

Ու ապրում էին փակած ու մենակ,
աշխարհից հեռու, զգեստի միջում:
Ու հին զգեստի կամարների տակ
հոսում էր նրանց կեանքը անանուն:
Ի՞նչ էին անում այդ երեքը միշտ,
այդ հին զգեստում ի՞նչ էին անում:
Կեանքը զգեստում երանգ էր, թէ վիշտ—
ուշ-ուշ չգիտէր ու չէր իմանում:
Որպէս մի հէքեաթ, որպէս հինաւուրց
դարերում ապրած լեզենդի կտոր—
կեանքը զգեստում դարձել էր անուրջ:
Նալբեցին անձայն ու անցան մի օր:—

2

Մէկը զգեստում մենակ էր առաջ
երազ—կնոջ հետ: Մենակ էր ու գոհ:
Թւում էր նրան աշխարհը—երազ,

ու լոյս էր անդառնալ. կապույտ երկկոյ:
 Նստում էր մենակ և հսկում էր նա:
 Կինը զգեստավում և կար, և չկար:
 Նստում էր մարմար սանդուխտի վրայ՝
 աչքերը — վճիռ ու սիրտը — պայծառ:
 Եւ մի իրիկուն — հրատ, հրավառ
 արեւը մտաւ գիրկը լեռների:
 Կինը զգեստավում և կար և չկար.
 Նա նստած էր լուռ՝ երազին գերի:
 Արեւը մտաւ խորը լեռների —
 ու թւաց նրանց գիշերի միգում,
 որ ո՛չ մի հրաշք էլ յետ չի բերի
 անցած արեւի հուրը սակեգոյն...
 Անշուշ նստած լսեց, որ անցան,
 անդարձ հեռացան... Մի՞թէ չգտաւ:—
 Եւ նա չտեսաւ, թէ ինչպէս, անձայն,
 միւսն այն գիշեր զգեստը մտաւ...

« Դու կանչել էիր » — շշնջաց նրան:—
 « Եւսու զաշտերից, արեւի երկրից:
 « Արեւը անցաւ ու ժպտաց միայն:
 « Արեւի երկրից կանչել էիր ինձ: » —

Երբ գիշերն իջաւ զգեստի միգում
 երեքը — նրանք — կրակ չունէին:
 Ու թւաց, որ դեռ երեկ իրիկուն
 երեքն էլ նրանք զգեստավում էին:
 Նայեցին իրար — ու թւաց, թէ դեռ
 դարերի միգում, սկզբի օրից
 երեքն էլ նրանք այստեղ են եղել —
 միշտ իրար կապւած՝ հեռու լուրից...

Ասաց շշուկով կինը երկունսին. —
 « Գիշերը հազար հրաշքներ ունի,
 « Գիշերի գրկում ընկնում է հոգին
 « հազարաառողների գիրկը անհունի: »
 Նայեցին իրար, նայեցին նրան:
 Վառւում էր սակի հայեացքը կնոջ:
 Կարծես ասելու ոչինչ չգտան:
 Կարծես գողացին շրթերը դողդոջ:
 Եւ մէկը յանկարծ հեծկտաց միտում...
 Միւսը ժպտաց: — Ու տեսան իրար:
 Նստւում էր մի տեղ զգեստի կառուն
 ու դուրսը քամին խնդում էր խելառ:

Ու կինը, հիւանդ, մտաւ անկողին:
 Հսկում էին լուռ երկուսը նրան:
 Ու գրկել էր մութ լուսթիւնը հին
 նրանց—երեքին: Ու լուռ էր միայն:
 Ու մութ էր այնպէս: Ու հիւանդ էր նա:
 Եւ երկուսն էլ, լուռ, անկողնի առաջ
 երազում էին պատկերը նրա—
 հեռաւոր նրա հմայքը երազ:
 Երազում էին: Երկուսն էլ կային:
 Այնքան հարազատ ու մօտիկ այնքան:
 Եւ սուրբ խօսքերով օրօրում էին
 կնոջը հեռու: Երկուսն էլ—նրան:

Ու լուռ էր այնպէս: Ու լուռ էր: Ու գոյ
 լուսթեան գրկում թւում էր նրանց,
 որ կեանքը մահից անհուն է ու խոր,
 մահու պէս գազանի, անթափանց, անանց:
 Ու հիւանդ էր նա: Բայց մահը չկար:
 Միայն մշուշում երկու կրակներ
 կարծես բռնկող, կարծես հոգեվար,
 երազի նման ժպտում էին դեռ:

Եւ մէկը յանկարծ առաջ միւսին.—
 «Արեւը երեկ անցաւ—ուր գնաց...»
 Միւսը նայեց ու ժպտաց կրկին.—
 «Արեւը չկայ: Արեւը—երազ...»
 Եւ մէկը ուղեց անդարձ հեծկատալ,
 բայց բարձր ճշաց.—«Օ, ցնւրա է այնքան...»
 Միւսը ժպտաց:—Ու երկնք-երկնք
 լուցին նրանք՝ անբառբառ, կարկամ:
 Եւ երկուսն էլ լուռ նայեցին նրան:
 Լուռ քնել էր նա: Լուռ էր ու լին:
 Եւ վերջին միգում վերջին լուսթեան
 երկուսն էլ հլու սպասում էին:

Եւ միւսն յանկարծ բարձրացաւ տեղից
 ու սուր, լուսթեան զգեակում կարկամ,
 ուր իջել էր մի անսահման կսկիծ—
 ճշաց ու կանչեց տատերկու անգամ:
 Տատերկու անգամ կանչեց, բայց չկար:
 Արնոտ էր նրա ձայնը մշուշում:
 Տատերկու անգամ կանչեց, խելագար—
 ու զուրսը սոնաց յուսահատ մի շուն:

Լուսնի երեսին սունաց ու լուսնի:
Եւ վերջին անգամ նա կանչեց նրան:
Կինը բարձրացաւ, ժպտաց, համբուրեց—
ու մշուշի մէջ երկունսն էլ կորան...

Իսկ մէկը, նստած անկողնի առաջ
սպասում էր դեռ: Կարծում էր, որ նա
դեռ պառկած է իր անկողնի վրայ,
որպէս լոյս-ցնորք ու հոգու երազ:
Չտեսաւ, կարծես, որ ջահը հանդաւ:
Չտեսաւ, կարծես, որ անգարձ ընկաւ,
անգարձ փշուեց բաժակը հոգու,
որ դնգում էր դեռ երեկ երեկոյ:
Միթէ չլսեց կանչը խելագար.
տասերկու անգամ կանչեց ու տարաւ:
Միթէ չտեսաւ, որ ջահը չկար,
որ ջահը յանկարծ արխունեց—մարաւ:
Լուսնստած էր նա անլոյս սենեակում,
աղօթում էր դեռ ու հսկում էր նա:
Եւ կամաց-կամաց տագնապը թաղուն
իջնում էր նրա կարօտի վրայ...

«Դու ի՞նչ ես ուզում. աշտեղ եմ ահա:
«Նստել եմ քեզ մօտ—միթէ չգիտես:
«Լուսնեան գրկում սպասում է նա:
«Շրթերդ հրօտ համբուրում եմ—ես»:
Եւ կինը գրկեց, համբուրեց նրան:
Ջահերը նորից գղեակի միգում
արնաւուն լուսով բռնկւած—կորան:
Եւ խաւարն իջաւ անդուռ գղեակում:
Եւ կինը կարծես չտեսաւ, որ լուսն,
որպէս մի ուրու, որ կայ ու չկայ—
մօտեցաւ յանկարծ լուսաւոր, տխուր,
ախորժէն վճիտ երազը նրա...
Միւսը կարծես չիմացաւ ինքն էլ,
թէ ինչո՞ւ յանկարծ թւաց, որ միգում
մէկը, անտնուն, անտես մօտեցել
ու խուլ տագնապով դռներն է թակում...

Ու լուսն կանգնեցին իրարու դիմաց
երկուսը—կարծես առաջին անգամ:
Կինը հեծկտաց ու նորից ժպտաց—
ժպիտն էլ, լացն էլ—օտար էր այնքան:

Ու կանգնած էին նրանք դէմ ու դէմ՝
ու չգիտէին՝ ինչ էին ուզում:
Բայց զգում էին, որ մի լուր գիտեն
երկուսն էլ հոգու անլուր երազում:
Եւ զգում էին, որ ճամբայ չկայ:
Եւ զգում էին, յագնած ու տխուր,
որ կնկնի, կնկնի լոյսը հեռակայ
վերջին խառնուրդի գիրկը անաւոր:
Եւ զգում էին. վերջին անհունում,
արեւից յետոյ ու լոյսից յետոյ—
երկուսն էլ նրանք՝ անդէմ, անանուն՝
կղանան հլու ողջակէզ ու զոհ...

Ու վերջին անգամ նայեցին իրար...
Ծանօթ էր այնքան աչքերի հեռուն...
Այն ուր է տանում յորձանքը վարար—
լոյսը հոգեվար մարդ աչքերում:
— Դու ինչ ես ուզում... Դու մըսէլ ես, հա:
— Իսկ դո՛ւ, դո՛ւ, որ միշտ արեւի բովում
այլում էիր— եկել ես հիմա
ու փնտրում ես իմ լուսնային հեռուն...
Ու աչքերը, խոր, խորունկ խորացան

միւս աչքերի խորութեան մէջ խոր:
Կարծես յիշեցին, կարծես մոռացան,
որ եղել են, կան, ապրում են մի օր:
Եւ կինը խնդաց արնոտ մշուշում—
ու եկաւ, կանգնեց երկուսի առաջ:
Միթէ նա է— նա: Միթէ չի՞ յիշում
աստղերը վառած, աստղերը մարած:
Թէ՞ ուրու է նա: Եկաւ— ու չկայ:
Կանգնած են նրանք դէմ առ դէմ էլի:—
Վերջին սղարտութեան վայրկեանը հիմա
կհնչէ անդարձ... Եւ ուշ կլինի:

... Ու վայրկեանը, քար, ընկաւ անողոր:
Հնամեայ մի կամք, անդարձ ու տոկուն,
որպէս դարերի վիթխարի բողոք—
խտացաւ նրանց աչքերի միգում:
Եւ միւսն յանկարծ չճաց— քարացաւ.
կոյր, զգաց յանկարծ, որ սառցէ մի սուր
մեխէն իր սրտում: Սառցի պէս մի ցաւ
կաշկանդեց նրա էութիւնը հուր:
Բայց վերջին միգում տեսաւ, որ նա էլ—
մէկը, յուսահատ, տասերկու անգամ

ճշաց ու կանչեց՝ վանդակում անել—
 և նոյնպէս—լնկաւ.

Խաւարի գրկում դղեակը այն հին
 երեբայ յանկարծ:—Ու երկանր, երկանր
 գայլերը զաշտում զեռ սմնում էին:
 Ու լուռ էր այնպէս: Ու ոչինչ չկար:

1915—1916

Կարս—Մոսկա

ՀԵՏԵՐԱ.—ԵՐԱԶ

(ԷՊԻԼՈԳ)

1

Երբ վեր ալացան հրոտ, հրակամ
 հրթիռները հուր, հրավարս ու հիւր—
 աստղային ծիրից նորից վայր ընկան
 ու գդեակը հին դարձրին մոխիր:

2

Ու ընկած էր նա մոխիրի վրայ:
 Ընկած էր մենակ: Ու լուռ էր չորս դին:
 Մոխիրի վրայ սպասում էր նա՝
 աչքերը յառած կոյր, անդէմ մութին:
 Եւ մէկը կարծես մօտեցաւ նրան,
 մօտեցաւ, խնդաց ու կանչեց միգում:
 Յիշեց, որ կային—չքացան—կորան
 աստղերը՝ հոգու երկնքում, հոգում:
 Ու ժպտաց, ժպտաց ասպետը յանկարծ:
 Ձեռքերը պարզեց—աչնքան մօտ է նա:
 Գուցէ բռնկւեն աստղերը հանգած
 ու նորից վառւեն մոխիրի վրայ...
 Ձեռքերը պարզեց ու լռեց միայն:
 Ու խնդաց նորից սիրտը մշուշում:
 Ու չկար ոչ-ոք: Թւում էր նրան
 աշխարհն էլ, ինքն էլ—մի մութ վերայիշում:

Ու խոր հեծկտաց ասպետը, ընկած
 ձերմակ զղեակի մոխիրի վրայ:
 Ու յիշեց բոլոր ասպետը հանգած,
 ու յիշեց հրոտ հմայքը նրա:
 Եկաւ—ու չկայ: Բայց չէ՞ որ երբ դեռ
 հրդեհն էր լափում զղեակը իր հին՝
 բոցերի ծովում մի ոսկի թիթեռ
 գնգում էր, շաչում—հրաւարս մի կին:
 Օ, թող գայ, թող գայ: Լինի արիւնտա:
 Մեխի իր սրտում, որպէս քաղցր սուր:
 Թող նորից վառի համբույրը հրոտ
 ու հմայքը հուր...
 Եւ թո՛ղ չլինի երազն աստղային—
 ձերմակ զղեակի անմարմին ուրուն...
 Եւ չէ՞ որ ոսկի կրակներ կային
 մեռնելուց առաջ նրա աչքերում...

Դու ինձ մօտ էիր: Ժպտացիր—ու հուր
 համբույրի ժամին հողիս՝ գոհ, դժգոհ՝
 ընկաւ գիշերի խոռոչի մէջ խոր—
 բայց օրհնում էի հրդեհները քո:

Եւ օրհնում էի: Ժպտում էիր դու:
 Ու հրդեհեցի իմ զղեակը հին,
 որ իմը լինես, չգառնաս ուրու,
 որ ինձ մօտ մնաս՝ պարզ ու երկրային...
 Բայց ուր դնացիր, ինչո՞ւ հեռացար:
 Թէ՞—այստեղ ես դու, բայց մենակ եմ ես:
 Ինչո՞ւ հեռացար ու ցնորք դարձար՝
 հեռաւոր ուրու—անմարմին, անտես:

ձերմակ զղեակի մոխիրի վրայ,
 յիշելով ոսկի հրթիռը մարած—
 անգոր շշնջում ու կանչում էր նա.
 —Հէտէ՛րա-ցնորք, հէտէ՛րա-երազ...»

ՀՐԳԵՀԸ

Հսկա շէնքերը հուր ու ծխի մէջ,
 շէնքերը հսկա վառում են, փլչում:
 Բոցերը՝ կարմիր նայեաղների պէս
 ծխերի միջից երկինք են թռչում:
 Այն սրտեղ էին, սուր էին պահած
 փէրիններն ալան կրակի, հրի,
 անմահ Վահագնի հարսներն հրավարս,
 նայեաղները այս կարմիր փրփուրի:
 Երգով ու ծափով երկինք են թռչում,
 դէպի արևի գիրկը մոռացւած.
 շէնքերը սահայն փլչում են, փլչում,
 նրանց կարօտին ողջակէզ դարձած:

Մոխրի միջից—կարմիր կրակներ:
Միթէ չի մարել, միթէ չի հանգել:

Աչքեր են կարծես—կասկածոս, հրտո:
Բոցկլաում են՝ հին հրդեհին կարօս:

Մոխրի միջից հսկում են, հսկում.
չէս տեսնում մահը—աչքերի ոսկում:

Ահա ինդացին: Չէս ստսկում հրից:—
Հէ՛յ, հասէ՛ք—հասէ՛ք. հրդեհ է նորից:

ԵԶԵՐՔԸ ԱԻԴ

Հոգու հեռաւոր դարբասից անդին,
 ուր մշուշ է, մէդ,—
 ուր թանձր միզում վխտում են մթին
 կաւկածները նենդ.
 ուր չի թափանցում նայւածքը երբէք—
 խոհը միամիտ,—
 կայ մի մութ եղերք, շնունը—Աիդ:

Հոգու այդ վերջին դարբասի առաջ
 հսկում է անքուն
 այդ մութ եղերքի արքան աներազ—
 սեահեր մի շուն՝
 կոյր նայւածքը իր կուրորէն յառած
 հիւանդոտ մուժում:

Հսկում է, մռայլ, իր եղերքը մառ,
 իր եղերքը հին,
 ուր վերջին, ճղճիմ գոյութեան համար
 յանձնած մութին՝
 տառապում է մեր մարդ, հոգեվար
 երազի հոգին:

Ու մութ է այնտեղ, աներազ մութում,—
 ապագուկ, ամայի:
 Ու ցուրտ է այնտեղ՝ Ստիքան է հոսում,
 Գանգէսը մահի՝
 յաւիտենութեան լաբիրինթոսում
 անիմանալի:

Ու այն եղերքի սեաներ արքան—
 անկուշտ, անօթի,—
 հսկում է, որ ջինջ երազները դան—
 բանի, յօշոտի,—
 ու երազների զիերն անկենդան
 Ստիքսը նեախ:

Ու հոգու վերջին դարբասից անդին
 նենգ, հսկում է նա:
 Հսկում է, որ ջինջ երազներն ընկնին
 եղերքը նրա:
 Եւ ոռնում է նա լոյս գիշերներին—
 լուսինի վրայ:

ՄԱՐԻ, ԷԳ ԹՌՁՈՒՆ...

Զգիտեմ, Մարի, երկնքի մովից
 ինչո՞ւ էր հոգիս կաբօտով կանչում,
 որ ճախրես, թռչես, վերանաս նորից,
 Մարի, իմ Մարի, Մարի, է՛գ թռչուն:
 Դաշտերը միայն գրաւում են քեզ,
 դաշտերը կանաչ, գոհարը ցողի:—
 Դաշտերի միգում կորցրել եմ ես
 մի հին, երկրային բերկրանքի ուղի:
 Մոռացել եմ ես դաշտերի ուղին,
 մոռացել է իմ երազող հոգին
 հովը դաշտերի, դմբուխտը կանաչ,
 աշխարհը մեռաւ յաւերժի առաջ—
 և ես մոռացայ բախտը աշխարհի՝
 աշխարհի հեռուն ու բախտը բարի:
 Լուսնեակ գիշերով ես ճամբայ ընկայ
 ու կեանքը թողած, ու կեանքի հեռուն—
 թաղեցի հոգիս լուռ ու լուսնկայ
 յաւիտենութեան մեռած դաշտերում:

Ու լուռ է շուրջս—ձմեռ ու գիշեր,
ու երգը մահի, որ կոչւում է—սէր։—

Մեռած է, Մարի, իմ սիրտը հիմա:
Շուրջս—լուսթիւն, ու գիշեր, ու մահ.
շուրջս քարացած երազը մահի.
—կուգէի այնպէս, որ յետ դառնայի
ու համբուրէի շրթերը հոգի.
փնարէի մի պարզ, երկրային ուղի,
հոգը լիզէի, որպէս համբ շուն—
ու լնու կորչէի աշխարհի փոշում...
Ախ, ցուրտ է այստեղ—երկնի կամարում—
չի վառում այստեղ ճառագայթը հուր.
երկնքում չկայ ծագիկ ու դարուն
ու սուտ է հոգու բերկրանքը մաքուր:
Մարի, իմ Մարի, մնացիր նախշուն,
արևոտ ու տաք դաշտերում երկրի,
թող հոգիդ զնգն երկրի մշուշում,
աշխարհի մութում թող հոգիդ բերկրի:
Մի նայիր դու վեր. թող կեանքդ լինի
ոսկի մի դողանջ. վստ բախտի հնչիւն,
թող կեանքդ լինի հուրհրող զինի,
Մարի, իմ Մարի, Մարի, է՛գ թռչուն...

—Իսկ ե՛ս. ի՞նչ անեմ ես, որ մնացի
երկնի դաշտերում—ու մեռաւ հոգիս,
եւ, որ երկրային կեանքս թաղեցի—
լսում ես, Մարի,—ի՛նչ արի ես ինձ:
Ինչո՞ւ արևի համբոյրը երբեք
չվառեց իմ մէջ ցանկութիւն ու դող
ու չհրդեհեց սիրտս յոգնաբեկ
քո հուր մարմնի հմայքը զիւթոյ:
Բայց չէ՞ որ հոգին, ասում են, ունի,
կամ գուցէ առաջ ունեցել է նա—
կարմիր կարօտը կարմիր արիւնի
ու հրդեհումի երազը անահ:
Ախ, մարդու հոգին, ասում են, առաջ
ապրել է այնտեղ—արևի վրայ,
եղել է վառման խնդապին երազ,
հրոտ, հրամազ, ու անունը—Ռա:
Վառել է անմար արևի հոգում՝
ինքը զո՞հ իրեն ու զոհաբերող,
ու սփռել է մութ օրերի միտում
հրդեհ ու կարօտ, ցանկութիւն ու դող:
Ու եղել է այս կեանքը երկրային
արևի առաջ խանձւած մի զոհ.
աղօթք են արել հրակամ Ռաին—
ապրել են հրում ու անցել են զոհ:

Յոգնել եմ, յոգնել երազից, մահից,
անտարբերութեան վիճակից երեւ.
ուզում եմ զգալ, շօշափել նորից,
չունենալ երազ, թուիչք ու թեւեր:
Կուգէի լինել հաստատ ու կարող,
աշխարհը զգալ, որպէս քաղցր զոդ,
և ամբողջ կեանքով մի պահ երկարող —
վառել ու մարել հրճանքում բանտող:
Եւ ինչո՞ւ համար իմ մարմինը լոյս,
մարմինը մարող, մարմինը հիւանդ
զեռ պէտք է կրի զիակը հոգում,
որպէս ծանր բեռ՝ հնամեայ աւանդ:
Ճնշում է, ճնշում ուսերիս վրայ
զիակը այդ ցուրտ, ծանր, անբաժան,
ինչո՞ւ եմ կրում ես բեռը նրա,
այդ բեռը դաժան:
Եւ ինչու հիմա, օրերիս ծոցում,
ուր բերել է ինձ բախար այս գիշեր —
եւ ինձ եմ փնտրում ու մեռելոցում
վերջին տագնապում, որ կոչւում է — սէր...
Եւ ինձ եմ ուզում, ինձ, լսում ես, կին,
ինձ, որ չեմ լինի էլ ուրիշ անգամ,

որ վաղը պիտի հոգ դառնամ կրկին
ու անցնեմ անդարձ ու աշխարհ չգամ:
Ի՞նչ անեմ ես, կին, — ի՞նչ անեմ հիմա,
թէ զգամ, որ ես անցել եմ անդարձ —
ու ցուրտ մշուշում ձերմակ երևայ
մահը՝ աստղային զգեստներ հագած:
Եւ ցոյց տայ նա իմ երազած ուղին՝
յաւիտենութեան սահմանը ունայն —
և ես հասկանամ, որ յաւերժը հին
վերջ չի ունենալ, որ հանգստանամ...
Երբ զգամ յանկարծ, որ հասել եմ ես
յաւիտենութեան սահմանը — ու նա,
քարացած հոգիս՝ աներազ, անտես՝
ցուրտ յաւերժութեան եզերքում մնա:
Ձէ՞ որ ով հասաւ յաւիտենութեան
ու նիրանայի լուսնաշխարհը սառ —
նա էլ չի դառնա կեանքի անսահման
ովկիանը, որ կոչւում է Սանսար...

Օ, ծանր է, ծանր է, օ ծանր է այնքան
ուսերիս համար բեռը յաւերժի.
— ախ, լինել թեթեւ, հրճա, հրապան,
վառել, որպէս զոհ, զոհս չմերժի
արեւը — արեւ, ու Ագնի, ու Ռա.

Վառուէլ ու մարէլ աշխարհի վրայ՝
 զոհի՛ր պէս արդար, ինքնատմօքիչ—
 ու մահից յետոյ չլինի՛ ոչինչ...

1916

ԿԱՐԻՆԷ ՔՈԹԱՆՃԵԱՆԻՆ

ԾԻԱԾԱՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Դու ի՞նչ գնացի՞ն, հեղինակի՞ն, աստղայի՞ն քոյր...

81
Ես, աստղային մի սօհա, Լալիբինժում քո Կապույտ,
քոյր, անցնում եմ, որպէս աստղ, հոգիս—մեռած աստղի վայել-
այնքան տրտում է հոգիս, քայք միշտ ժպտում է հոգուդ,
որ երազը չզատնայ Գողգոթայի մանապարհ...

Հոգին չի մոռնում: Մարմինը խողած երկրային փոսում—
 Թափառում է նա Տինգարական Լաքիթին թոսում:

Անցնում է բոլոր ճամբաները սուտ ու անրեր կակրի,—
 ու պայծառ, մարտ, դարձերից յետոյ.—Ըո գրկում ընկեր:

Բայց երբ կրճատի հոգին, որպէս սէգ, սրբացած մի գոհ,—
 Մայրամուտային Եղերրս նստոյտ.—յոյս եղերրս Ըո...

Ծ Ի Ա Ծ Ա Ն Ը

1

Լուսամփոփի մէջ աղջիկ աստճածամօր աչքերով,
 թոքախտաւոր, թափանցիկ, մարմինն պէս երազի,
 կապոյտ աղջիկ, ալաթի ու կաթի պէս հոգեթով,
 լուսամփոփի պէս աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
 որ չմարի իմ հոգին քս ալաթէ աչքերում.
 Ես ի՞նչ անեմ, որ մնայ ծիածանը երեքգոյն,
 որ չցնդի, չմարի իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի պէս աղջիկ աստճածամօր աչքերով,
 թոքախտաւոր, թափանցիկ, մարմինն պէս երազի,
 կապոյտ աղջիկ, ալաթի ու կաթի պէս հոգեթով,
 լուսամփոփի պէս աղջիկ...

Երեք գոյն կայ երազային քո երկրում —
 երեք գոյն:
 Թափանցիկ են այն գոյները քո երկրում —
 քո հոգում:

Դու ժպտում ես. քո լուսաւոր աչքերում —
 երեք փայլ. —
 ու բացում է, կապոյտ աղջիկ, քո հետուն
 լուսափառ:

Եւ տեսնում եմ գլեակներդ երկնահուպ,
 գմբէթներդ սէգ:
 Եւ յիշում եմ ոսկեծաղիկ մի ասուպ,
 որ ընկաւ երեկ:

Ու լսում եմ, որ իրիկւայ մշուշում,
 անձրիից յետոյ,
 իրիկնային զանգակներն են կարկաշում
 ու կանչում են, զոհ:

Եւ տեսնում եմ, որ գաշտերիդ, լճերիդ,
 լճյա երկրիդ վրայ —
 ահա իջել է անապակ ու վճիտ
 մի կապոյտ հիմա:

Ու տեսնում եմ իրիկնային կապոյտում
 բռնկւած կրկին —
 գմբէթներիդ երկնաւայ ու ժպտուն
 խաչերի ոսկին...

Եւ երազի պէս պարուրում է յանկարծ
 երկիրդ իմ հոգում.
 ջինջ երկիրդ՝ աչքերիդ մէջ — միգամած
 իրիկուն...

3

Երեք ճաճանչ, երեք երանգ, երեք զոյն,
որ անցան—
քոյր, կապել են քո աչքերում, իմ հոգում—
ծիածան:

Կ Ա Պ Ո Յ Տ Ը

1

Կապոյտը հոգու աղօթանքն է, քոյր,
կապոյտը—թախիժ.
Կապոյտը—կարօտ թափանցիկ, մաքուր,
ու յստակ, ու ջինջ:

Կապոյտը քրոջ աչքերի անհուն
առաւօտն է թաղ:
Կապոյտում հոգիս մի հին իրիկուն
անզօր հեծկլտաց:

Կապոյտը ծէգին աղօթքի կանչող
զօղանջն է զանդի:
Կապոյտը—արցունք, ու կապոյտը—ցող
հոգու, երկնքի:

Կապոյտում անսուտ խօսքեր են հասում
երկնքից-երկնք:
Հոգիս—կապոյտի լաբերին թառում
սրբացած կնիք:

Այն, որ չի եղել, որ պէտք է լինի
մանկական սրտում—

հոսում է, որպէս լուսաւոր զինի—
հոգու կապոյտում:

Արեւից առաջ և ոսկուց առաջ—
տրտնւմ է այնքան.
խմում է հոգին բաժակը երազ
այդ կոյս տրտմութեան:

Արեւից առաջ, երբ կապոյտը՝ հեղ,
սիրիքնս, գունատ—
հիւանդ աղջկայ երազ է կարծես՝
աղօտ, լուսակաթ:

Երբ աստղը՝ մի պահ զանաւորով անտես՝
վառւում է յանկարծ:
Երբ տիեզերքը աղօթք է կարծես՝
հոգու մէջ հանգած:

Երբ դեռ ո՛չ մի ձայն չի ընկնում հոգու
բաժակի մէջ լուռ:—
Երբ որպէս ուրու դեռ քնած ես դու
կապոյտում մարութ:

Առաւօտ կանուխ, երբ արեւ չկայ,
լուռ զգում եմ ես,—
որ լուսէ հոգին քնած աղջկայ
մօտիկ է ափսոս:

Ու լսում եմ ես, լսում եմ միայն,
երազուն-արտում:
Ժպտում է հոգիս անդորր արամութեան
զունատ կապոյտում:

Զգում է հոգիս շրթերի վրայ՝
անմարմին, դողդոջ—
կապոյտ, երկնագոյն համբոյրը նրա—
լուսաւոր քրոջ:

Քոյր, արցունքները— մաքուր
ղօղանջներ են, որ
յղանում են երկնագոյն
զանգ-աչքերդ խոր:

Ղօղանջներ են—լուսաւոր,—
կնյա թռիչք ու թև.
ղօղանջներ են—թևաւոր
ու թեթև, թեթև...

Նրբ չկայիր կարծես զու՝ զգեակում հոգու
անշշուկ քնած,—
քո՛յր, իմ հոգին, աստղային, որպէս նինջը քո—
կապոյտում մնաց։—

Պատահանից զգեակի ես տեսնում էի
երկինքները բիւ։
Շրթերիս մէջ, հոգուն մէջ մի խօսք ունէի.
—քո՛յր, քնիր, քնիր...

Միայն զգում էի ես՝ լուռ, արտում այնպէս՝
որ ամեն ինչում—
քո լուսաւոր էութեան հարազատ ու հեղ
կապոյտն է շնչում։

Նւ չկայիր կարծես զու՝ զգեակում հոգու
անշշուկ քնած։
—Քո՛յր, իմ հոգին, աստղային, որպէս նինջը քո—
կապոյտում մնաց։

Կապոյտի մէջ, կապոյտի մէջ—արևի ոսկին։
—Քնիր, քնիր, կապոյտ աղջիկ, չգարթնեա ծէգին։

Կարասները լճերի մէջ, ջրերի վրայ
դեռ քնել են, դեռ նիրհում են. կարթնանան հիմա։

Ու գանգերը զօղանջում են՝ կարկաչուն, հնչուն,—
փախցնում են աստղերի շուն ու կանչում, կանչում։

Ունջը փանքի, երգը գանգի—կապոյտում վերջին.
—գարթիր, գարթիր, կապոյտ աղջիկ, ու նայիր խաչին...

Նա ոսկի է, երկինք նետած մի կտոր ոսկի.
նա — մի երազ, ոսկի միրած արթնացած խօսքի։

Ու արևի թեւ ահա լճերի նիրհում
հրդեհում է աստղանկար արամութեան հեռուն...

Ու մարում են, ու մեռնում են այն աստղերը, տես։
Արթնացել են կարասները ու կանչում են մեզ։

Քո՛յր, վայրկեանը սրբազան է—բռնկում ու մահ.
կարասները, որ կանչում են, կմեռնեն հիմա։

Ու կմարի խաչը փանքի կապոյտում վերջին.
—գարթիր, գարթիր, կապոյտ աղջիկ, — ու նայիր խաչին...

Մերի ոսկին ինչու է փակում
մեր աչքերը թաց—
երբ՝ կապոյտ երազն արթնացած հոգում
հայտւմ ենք յանկարծ:

Երբ բայց ենք տնում աչքերս՝ կապոյտ,
աստղային նիրհից,—
որ տեսնենք ոսկու ծիծաղը՝ անփոյթ
յղացած հրից:

Ինչու է խոցում, ասեղի նման,
ոսկին արեւ—
մենաւոր ժամին վերջին տրամաթեան
վերջին բարեւ...

Դու արտում ես, բայց արեւի բռնկւած ոսկին
ոսկեգօծել է քո կապոյտ, աստղային հոգին:

Ու սփրթնած զէմքիդ վրայ—բռնկուող մի փայլ.
այն արեւն է, այն արեւն է, աստղային եղբայր.

Դու չես ուզում, դու չես ուզում արեւի ոսկին.
չես հաւատում արեւի տակ շիկացած հասկին...

Միայն հայիր ու հասկացիր, օ, հայիր ու տես.—
մի ոսկեգոյն քօղ են հազել դաշտ, անտառ ու սէղ:

Ու լեռնային, երկինք տանող ձիւնածածկ ուղին
հրաժեշտ է տալիս հիմա բիլ մառախուղին...

Եւ ամեն տեղ, ինչպէս և այն լեռնուղու վրայ—
բռնկւել է ժպիտ-ոսկին Արեւի—Նրա...

Օ, նայիր ու տես, նայիր ու ժպտա,
 օ, նայիր հեռուն.—
 փառել է ահա մի սակի շղթայ
 քրոջ աչքերում...

Սփրթնած, գունատ կապոյտը արդէն
 չքացաւ, չկայ.
 Ժպտուն, սակեփայլ փառում են քո զէմ
 աչքերն աղջկայ:

Շղթան սակեգոյն, հրաշքի շղթան
 բռնկւել է, տես:
 Նայիր ու ժպտո, գու ժպտո միայն
 արևոտ—ու հեզ...

Եւ թող սուրբ թեա, որպէս կոյս հեռուն
 կապոյտ մենութեան—
 արևածագին քրոջ աչքերում
 բռնկւած շղթան...

Յղակ-օղակ, սակեգոյն ու հրաշէկ,
 օրօրում են ալիքները լճերի:
 —Կապոյտ նիրհում սպասումը չմաշէք,
 թող արևը մի նոր բախտի լուր բերի:

Ահա ձերմակ առադասաները՝ սակի
 արևի զէմ հարմների պէս շիկացած՝
 օրօրելով, նազանքներով, կողք-կողքի—
 ճամբայ ընկան զէպի հեռուն սակերաց...

Դէմը, հեռուն, կապուտաշեայ ջրերում,
 սակենկար զէմքը արև-արքայի—
 հուր ժպտի սակի թերթեր է թափում,
 որ լառերի ճանապարհը զարդարի...

Առադասաները, սակեգոյն քոյ հազած,
 արևելեան հարմների պէս նազանուտ,—
 օրօրելով ճամբայ ընկան թեաքայ՝
 զէպի սակի հեռաստաններն արևոտ...

Հրո՞ւ, հրաշէկ ոսկին արե՛ի՝
հրդեհեա՛ծ հոգու հոմն է երե՛ի...

Հու՛ր հովը հոգու՝ հրդեհեա՛ծ հիմա —
լեռնային վանքի խաչերի վրայ:

Փարւել է վանքի ոսկեթե խաչին՝
ժպտա՛վառ՝ որպէս համբոյրն առաջին:

Որպէս կարմրութիւնն ա՛յն այրող, հրո՞ւ՝
հարսնական զէմքիդ՝ ամօթխա՛ծ կարօտ...

Որպէս թափանցիկ կարմրութիւնն հոտո՞ղ՝
այտերիդ վրայ՝ ոսկեզոյն մի շող...

Ես հաւատում եմ հասկի շշուկին, խօսքին —
երբ հազել ես արե՛ի թափանցիկ ոսկին:

Հեռատունները հացի — ոսկեզոյն, ոսկեզոյն:
Դու նայեցիր, ժպտացիր իմ գունատ հոգուն:

Աչքերիդ մէջ, հոգնու մէջ, քո՛յր իմ, կնո՛ր, քո՛յր իմ, կար՝
ոսկու շշուկ, ոսկու փայլ, ոսկու ճաճունչ ոսկեփառ:

Եւ հոտում էր ոսկեծուփ կապոյտից զէպի վար՝
արտերի գիրկը բերրի՝ մի հեշտութիւն հրա՛վառ:

Ու ժպտում էր շունկեա՛ծ ոսկին՝ անշէջ ու անփոյթ՝
կապոյտ հոգուս, աչքերիդ, ու երկնքի մէջ կապոյտ:

Եւ հաւատում էի ես հասկերի խօսքին,
ու վառում էր կապոյտում արե՛ի ոսկին...

Այժմը — սրպէս մի ոսկի թիթեւ:
Իսկ երկինքը կայ — ու կապոյտ է դեռ:

Զնգում են թևերն՝ արնագոյն ու վառ,
այլուում է նա — ինչո՞ւ, ո՞ւմ համար:

Վառւում են, վառւում կապոյտում անծիր
թևերը նրա ու պսակը հիր:

Ու ճախրում է նա — մի ոսկի թիթեւ:
Իսկ երկինքը կայ — ու կապոյտ է դեռ...

Ու թուլացած, ու սիրթնած կմարի
արևի ոսկին —
վերջին անգամ եղերքի մօտ կամարի
բռնկւած կրկին:

Ու կապոյտը՝ արևի մօտ շիկացած,
վարդագոյն —
քո՛յր, կփռի դէմքիդ վրայ — ամօթխած
կարմրութիւն:

Ու կապոյտը, ձուլւած ոսկուն, հեռուներում
կամարի —
քո՛յր, հոգուս մէջ, աչքերիդ մէջ, երկինքներում
կմարի...

Ու կտարածւի մի տրտում մշուշ
մանուշակագոյն.

Կապոյտի, ոսկու տրտմունակ մի յուշ—
խանձւած հոգում...

Արեւ ժպտաց, երբ կոյս էր հեռուն,
ու գունատ էր դեռ:

Արեւ անցաւ—կապոյտ դաշտերում
մի ոսկի թիթեռ:

Կապոյտը վառեց, խանձեց ոսկում,
արեւ—անցաւ.

արեւ—անհուն ու որբ կապոյտում՝
բռնկւած մի ցաւ:

Իջնում է ահա մի տրտում մշուշ
մանուշակագոյն.—

Կապոյտի, ոսկու տրտմունակ վերյուշ՝
խանձւած հոգում...

Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Կ Ա Գ Ո Յ Ն

1

Կապոյտից յետոյ և ոսկուց յետոյ,
քոյր, փռեց ահա իմ տրտմած հոգում,
որպէս երագում ապրած երեկոյ—
մի խամրած մշուշ մանուշակագոյն...

Յիշում եմ հիմա, որ մի իրիկուն,
ժպտալուց յետոյ, երբ ոսկի շղթան
ընկաւ ամօթխած գիրկը լութեան—
փռեց քո դէմքին, իմ տրտմած հոգում
մի խամրած մշուշ մանուշակագոյն...

Աչքերիդ վճիտ ու թաց կապոյտում—
ժպիտը ոսկի.

մայրամուտային մշուշը տրտում՝
այաներիդ վրայ.

և, որպէս շշուկ չքաղւած հասկի,
մեր հոգնած սրտում—

սպասումը, որ ցրտաբեր քամին
հիմա կտուրայ...

Ըսուերներն իջնում ու փարւում էին
դէմքիդ, իմ հոգուն.

մթնում էր հեռուն խանձւած հոգու,
որպէս իրիկուն.

երազները, քոյր, երանգներ էին,
խամբեցին միգում,—

խամբեցին, հանգան մայրամուտային
իրիկնամութում մանուշակագոյն...

Ու տրտում էին քո աչքերը թաց,
ու մթնում էին գոյներն իմ հոգում,
երբ վերջին անգամ տրամօրէն ժպտաց
դէմքդ մշուշում մանուշակագոյն...

Նւ քո թաց, վճիտ, ցոլոտ աչքերում
լոյսի ճաճանչներ ճախրելով անցան—
ու բացւեց յանկարծ միգամած հեռուն՝
քո ջինջ աչքերում— պայծառ ծիածան...

Քոյր իմ, այն մեռնող արեւն էր— ժպտաց,
մի վերջին անգամ բռնկւեց միգում,
որ ծիածանէ քո աչքերը թաց
ու տրտում հոգիս մանուշակագոյն...

Իրիկուն էր: Իրիկնային տրամութեան
յուշն էր հիւսւում—մայրամուտի մի երազ:
Դու հարազատ ու մօտ էիր ինձ այնքան,
քո աչքերով իրիկնային, ցողաթաց...

Քո աչքերի ու երկնքի կամարում
ճառագայթները, այնքան հեզ, այնքան ջիւնջ,
ճախրում էին, հոգեվարում ու մարում՝
համբուրելով ծիածանը ամոքելչ...

Եւ լոյսերը, որ ճախրեցին ու անցան,
իրիկնային ժպիտի մէջ այն վերջին—
անըջացած, երազ դարձած սրբացան,
որպէս դէմքը քո լուսաւոր—իմ հողին...

Աղօթքի պէս, երգի պէս
հողիս ճախրեց դաշտերում.
միայն զգում էի ես
քո հմայքն ու քո հեռուն...

Միայն զգում էի, որ
երկինքներում կուսական
բռնկումները բոլոր
նւազեցին ու հանդան:

Հաշտութիւն էր ու ներում
քո ժպիտը սրբագան—
քո արցունքոտ աչքերում
անըջացած ծիածան...

Քո՛յր, երազներն ալբեցին ու անցան,
 և ջինջ մնաց քո աչքերում, իմ հոգում—
 մի սրբացած, անընչացած ծիածան՝
 վերջին սիրոյ մի լուսաւոր ամոքում:

Ու յիշում եմ առաւօտը գունաթափ,
 ու կապոյտը այն սփրթնած ու անհուն,
 ու յիշում եմ, որ քեզ կանչեց մի կարապ,
 երբ արթնացար արեծագի զղեակում...

Ու յիշում եմ ես երկինքը վարդագոյն,
 ոսկի վարդեր, որ բացեցին ու չկան...
 Ու յիշում եմ իրիկնային երկնքում
 հրաժեշտը ոսկեժպիտ կարմրութեան...

Ու յիշում եմ հուր արեւը — մի թիթեռ, —
 ճախրեց, անցաւ, աննխախտացաւ ու չկայ.
 իսկ իմ հոգին այնքան յատակ, ջինջ է դեռ—
 մի լնյա ժպիտ լուսաժպիտ աղջկայ...

Իսկ երազներն ալբեցին ու անցան:
 Բայց ջինջ մնաց քո աչքերում, իմ հոգում—
 մի սրբացած, անընչացած ծիածան՝
 վերջին սիրոյ մի լուսաւոր ամոքում...

ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԵԿՈՆ

1

Ջինջ ճախրում են դօղանջները հորիզոնից-հորիզոն.
— Ինչ արանում է, կապո՛յա աղջիկ, հրաժեշտի երեկոն...

Տրամուլթիւն ու լոյս է իջել քո աչքերում, իմ հոգում.
օրհնենք, օրհնենք այս երկրային հրաժեշտի երեկոն...

Եւ թող հալւեն, ձուլւեն, մարւեն իրիկնային կապոյտում
մեր կոյս հոգու իրիկնային սպասումները արտում:

Եւ զանգերը անըջօրէն, հորիզոնից-հորիզոն,
օրհներգելով թող օրօրեն հրաժեշտի երեկոն...

2

Դու մօտեցար որպէս քոյր—ու հեռանում ես ահա.
աղօթք դարձած, խնկարոյր—դու հեռանում ես ահա:

Ինչո՞ւ եկար, և ինչո՞ւ անըջացար ու չկառ.
հրաժեշտի մի համբոյր—ու հեռանում ես ահա...

Դուցէ սո՛ւտ է սէրը այս—հրաժեշտի մի երազ,—
քո՛յր, յնչ դարձած հեռուոր, դու հեռանում ես ահա...

3

Գու գնում ես, բայց հոգիս սպասում է քեզ.
— Կապո՛յտ ազջիկ, քո՛յր իմ հեզ, գու յետ չե՞ս գալու...

Ես ժպտում եմ, որ երկար ճանապարհին չարամեւ.
հոգիս մնաց սրբ աշխատե՛ս — գու յետ չե՞ս գալու...

Գու գնում ես, բայց կարծես կայարան եմ եկել ես,
որ հանգիստեմ, քոյր իմ, քեզ, — գու յետ չե՞ս գալու...

4

Կանցնեն օրերը բոլոր
և տրամօրէն խոնարհ, գոհ, —
այն կայանը հեռուոր
կհասնենք մի երեկոյ:

Եւ ցուրտ հովր, սրտէս քոյր,
կարօտակէզ ու զթոտ,
կհամբուրէ սիրալիբ
մեր աչքերը արցունքոտ:

Եւ զանգերը կարկաշտն,
հորիզոնից-հորիզոն,
տրտում կօրհնեն մեր վերջին
հրաժեշտի երեկոն...

Գ Ա Ջ Ե Լ Ե Ր

1

Կապոյա բաժակը հոգեթով դու խմիր,
սիրադ լցւի թող հեքեաթով—դու խմիր:

Իրիկնային երկինքը բիւ թող անվերջ
հոգիդ լցնի կապոյա կաթով—դու խմիր:

Թող լո՛ւռ լինի. անըջաւար ու տրտում—
կապոյա բաժակը հոգեթով դու խմիր:

2

Իմ խօսքերը կարկաչում են կապոյտում,
կարկաչում են ու կանչում են կապոյտում:

Կարօտներ կան, որ անմարմին ու տրտում—
միայն շշուկ ու հնչիւն են—կապոյտում:

Երազներ կան, որ կարօտներ են միայն,
լնյա կարօտներ, որ կանչում են կապոյտում...

3

Ո՛ւմ եմ երգում. ինձ թէ քեզ—չգիտեմ.
Իմ երգում ինձ կգտնես—չգիտեմ:

Թէ՛ ես ինձ եմ որոնում, բայց գտնում եմ քեզ.
Կորցրե՛լ ենք արդեօք մեզ—չգիտեմ:

Գուցէ ես եմ՝ քո երգում, գուցէ ինձ ես դու երգում.
Ո՛ւմ ես երգում. ինձ թէ քեզ—չգիտեմ...

4

Կայ հոգու մէջ ու աշխարհում—մի ոսկի օղակ:
Բռնկւում է նա ու մարում—մի ոսկի օղակ:

Ո՛վ չի գտել—ժպտալով, ժպտալով—
սնդուլ վազքի ճանապարհում—մի ոսկի օղակ...

Բայց ես ինչո՞ւ, քո՛յր իմ, ինչո՞ւ տրտմեցի այնքան,
երբ բռնկեց քո աչքերում մի ոսկի օղակ...

Գու կապոյալ սիրեցիր—չգտար,
սիրտդ դարձաւ ձիւնածիր, —չգտար:

Երկինքներին՝ հեռաւոր, հեռաւոր՝
դու մանկօրէն ժպտացիր—չգտար:

Կոյր աչքերից՝ աղօթքով, աղօթքով՝
մի քիչ կապոյալ մութացիր—չգտար...

Քոյր, զանգերի տխուրեան մի զօղանջ է քո հոգին:
Դղեակի մէջ մենութեան—բախտի կանչ է քո հոգին:

Եւ մենակ է, քոյր-աղջիկ, այնքան մենակ ու տրտում.
Իրիկնային կապոյտում մի ճաճանչ է քո հոգին...

Ո՞ւմ ես կանչում ե ինչո՞ւ. զանգերը ո՞ւմ են կանչում.
Բայց չես գտնի, քոյր-աղջիկ, թող չկանչէ քո հոգին...

Բոլոր խօսքերն իմ երգում—ճաճանչներ են լոկ:
Կապոյա միգում—ոսկեգոյն ճաճանչներ են լոկ:

Քո աչքերից, քո գէմքից, քո լուսէ երկրից
ճառագայթած իմ հոգում—ճաճանչներ են լոկ...

Իմաստ չկայ, միտք չկայ խօսքերում այս հին,
բայց ինչո՞ւ են ամոքում—ճաճանչներ են լոկ...

Քոյր, իմ հոգին լուռ ու տարտամ—մի սուեր է լոկ,
դղեակի մէջ քո մենութեան—մի սուեր է լոկ:

Եթէ նայես—կճանաչես, կտեսնես յանկարծ,
որ ձեերիդ այնքան նման—մի սուեր է լոկ:

Գուցէ ժպտաս, գուցէ տրամես, երբ զգաս, որ նա—
եղերական երկուութեան մի սուեր է լոկ...

Կողանջեն օրերը քո—կմարեն.
կկարկաչեն—մի երեկոյ կմարեն:

Ու կողանջող օրերից մէջ երգւած
երազները քո լուսաճեմ—կմարեն:

Յետ կնայես ու կճշաս կարօտից.
Չինջ արցունքներ կճաճանչեն—կմարեն...

Մենք չգիտենք, քո՛յր իմ, մեզ կապոյտը ո՞ւր կտանի.
Թէ լուռ լինենք, լուռ ու հեզ—կապոյտը ո՞ւր կտանի:

Նա—արտմունակ մի կարօտ, նրա անունը սակայն
ո՛չ դու գիտես, քո՛յր, ոչ ես, —կապոյտը ո՞ւր կտանի...

Կորցրել ենք աշխարհի ճամբաները հին.
Իմ հրը ընկեր, քո՛յր իմ, մեզ կապոյտը ո՞ւր կտանի...

Քո՛յր, կողանջի՛ր պէս ճախրել ու գնալ,—
հմայւած ու հեզ—ճախրել ու գնալ...

Երկնքից-երկինք, իրիկւայ մովում,
անմարմին, անտես—ճախրել ու գնալ...

Դէպի Սմէնտի եղերքը կապոյտ
քո՛յր, կողանջի՛ր պէս ճախրել ու գնալ...

Ինչ տրտում են գանգերը, քո՛յր, մայրամուտի,—
գանգերը թաց ու ցողաբո՛յր մայրամուտի...

Ահա կոյսերը գնում են աղօթելու.
սղահանդէս, տրտում թափոր մայրամուտի...

Լուսամփոփի պէս կախել է երկինքը բիւ
հոգուս վրայ—օ, սուրբ անդորր մայրամուտի...

Մահը, գիտե՞ս, մի լուսաւոր առասպել է, քոյր:
Կեանքը այնքան մեղի ու անգոյն ու անբեր է, քոյր:

Մահը անուշ, անըջալոյս արամութիւն ունի.
Կեանքը սակայն շաշող, փախշող, անհամբեր է, քոյր:

Կեանքի կանչը անկումների ազդարար է լոկ.
Մահը սակայն կապոյտ երկրի մի բաներ է, քոյր...

Իրիկուն է, քոյր,—աչքերդ փակիր,
յոգնաբեկ, տխուր,—աչքերդ փակիր:

Թարթիչների թող չթարթեն միգում.
միգամած ու խոր աչքերդ փակիր:

Կոպերիդ տակ թող երազս թաղեմ.
Իրիկուն է, քոյր,—աչքերդ փակիր...

Դիր մատներդ կոյս աչքերիս վրայ, —
հոգեվար հոգուս—աչքերիս վրայ...

Յագնեցի կապոյտ մշուշից, մովից.
զիր մատներդ կոյս—աչքերիս վրայ...

Մահու պէս քնքուշ զիր մատներդ սուրբ—
խոնջացած, անյոյս աչքերիս վրայ...

Իրիկունը ու կապոյտը կանչեցին, քոյր, —
ճամբայ ընկանք սաարսպիկ, երկնային քոյր...

Ու գնում ենք դէպի Յաւերժի ամօքիչ.
մահն է թեթեւ, մահն է բարի, անմարմին քոյր...

Յետ չնայես, յետ չնայես թաց աչքերով,
դու իմ վերջին, իրիկնային, աստղային քոյր...

Որքան ցաւ կայ, որքան ցաւ կայ այս կարօտում իրիկնային,
ինչ տենչում ենք միթէ կտայ այս կարօտը իրիկնային...

Թաց աչքերդ հոգն է շոյում շիրիմների վափսուկով.
Թաց աչքերիդ գուցէ գթայ այս կարօտը իրիկնային...

Հսկումների պահը սուրբ է. ժպտան, ժպտան, մահացող քոյր,
որ չհանի քեզ Գողգոթա այս կարօտը իրիկնային...

Թող ապրի հոգին—կապոյտ վանդակում.
Կան զանձեր անդին—կապոյտ վանդակում:

Դու—ծարաւ աղջիկ, կապոյտը—գինի.
Դու—արբած մի կին—կապոյտ վանդակում:

Ինչ պիտի անես, ինչ պիտի անես,
եբբ թափւի գինին կապոյտ վանդակում...

Մարում է հոգիս, քոյր, քո աչքերում ու մեռնում է նա:
Մթնում է անա քո կապոյտ հեռուն—ու մեռնում է նա:

Մեռած, մարած ասող՝ նա ինչո՞ւ ընկաւ երկինքները քո.
նա ինչո՞ւ վառեց երկրի խաւարում—ու մեռնում է նա:

Շողի պէս վերջին, ասողոս երկնքից ընկած շողի պէս՝
աչքերիդ վճիռ ցոյցն է համբուրում—ու մեռնում է նա...

Իրիկնային քոյր իմ հեզ, մեռելի՛ պէս դու անցիր,
Թող զանգերը օրհներգեն ու օրհնեն քեզ,—դու անցիր:

Վարդեր թափեմ արծաթէ, արծաթէ աստղեր՝
զիափառքիդ, հոգնւդ մէջ, դադաղիդ մէջ,—դու անցիր...

Մահատեսիլ ու անդարձ, օրերիս պէս միֆ դարձած,
անվերադարձ, յամբընթաց, սպանանդէ՛ս դու անցիր...

Կապոյտ կարօտը գուրգուրեմ ու լռեմ,
աղօթք անեմ, խոնկեր բուրեմ— ու լռեմ:

Այն կարօտը, որ աչքերդ տւեցին,
քոյր, հոգուս մէջ ողջագուրեմ— ու լռեմ:

Այն կարօտով իրիկնային ու անուշ—
բապիկ ոտքերդ համբուրեմ ու լռեմ...

Շրթունքներիդ հոգեվարքն է, քոյր իմ,—հեղ
աղօթք արտ, որ աստղերի մէջ թաղեմ:

Քոյր, շրթունքներիդ արևին չերկարես.
շունչդ սուրայ, որ աստղերի մէջ թաղեմ...

Շրթունքներիդ զխաղաղութ, քոյր իմ, ես
հոգին ատարայ, որ աստղերի մէջ թաղեմ...

Սիրոյ երգի կտրած տողն ես հոգուս համար,
սուրբ է կարօտդ՝ մոխրագէտ հոգուս համար:

Դու մի՛Ք վարձած ու սրբացած մեռելների
սուզը անող արտում քօղն ես հոգուս համար:

Իրիկնային մեռելոցի այս սուրբ պահուն—
հին կարօտի վերջին դողն ես հոգուս համար...

Քեզ կհամենեմ, քոյր իմ, ես—Ամէնտի Երկրում,
երբ յուշ վարձած կքնես—Ամէնտի Երկրում...

Կհամբուրեմ, ջինջ ախպէս, շրթունքներիդ ես,—
կհամբուրեմ, քոյր իմ, քեզ—Ամէնտի Երկրում...

Մենած աստղի լոյսի պէս, որ ժպտում է մեզ—
դու իմ հարսը կլինես—Ամէնտի Երկրում...

Կմօտենանք մի իրիկուն Յաւերժական Կապոյտին...
 Կմօտենայ երկրի հեռուն Յաւերժական Կապոյտին...

Վերջին սիրով կհամբուրեմ քո ստները յոգնաբեկ,
 դու կմեռնես՝ նայւածքդ հեռուն՝ Յաւերժական Կապոյտին...

Եւ մարմինը քո խնկարոյր—հնամենի խունկեղէկ—
 կայրեմ, որպէս զոհաբերում—Յաւերժական Կապոյտին...

Եւրոս 1916

Մոսկւա 1917

ՈՂԶԱԿԻԶԻՈՂ ԿՐԱԿ

Ի Ր Ի Կ Ո Ւ Ն Ը

1

Նոյնն է կարօտս հիմա՝ անսփոփ ու որբ,
 նոյնն է աշխարհը վառւոյ ու արեւ բորբ:

Նոյնն է երկինքը կապոյտ ու լճակը ջինջ —
 և չի փոխւել իմ սրտում, իմ հոգում — ոչինչ:

Նոյնն է սէրը՝ կրակւած իմ սրտում հիմա՝
 նոյն կարօտը անսփոփ ու անունը — Մահ:

Հուրը լափում է հիմա սուրբ մարմինը քո:
Շուրջդ մութ է, շուրջդ—մահ,—երեկոյ:

Կոպերի տակ քո փակւած, կրակուն,
այլում է քո հոգին կրակում:

Հուրը լիզում է տարփոտ շրթերով դեղին
քո երկնագոյն աչքերի, քո սրտի ուղին:

Հուրը լափում է հիմա սիրտդ աղջկայ—
շուրջդ մութ է, շուրջդ—մահ,—ու փրկում չկայ...

Դէպի երկինք է տանում ճանապարհը հին:
Քո հմայքն եմ ես երգում այս երգում կրկին:

Քո հմայքը հեռաւոր, քո հմայքը կոյս,—
նորից ժպտում ես ահա կարօտած հոգում:

Քո ժպիտն եմ ես տեսնում արևի հոգում,
քո ժպիտը վարդագոյն—լրբիկա՞ միգում:

Հո՛ւր է դարձել ու կրակ քո ժպիտը հե՛զ—
քեզ եմ նետում ես նորից սիրտս ողջակէզ:

Թող բորբոքւի, թող վառւի կրակուն—
քո արնաշաղ, քո կարմիր կրակում:

Հրափթիթ վարդերի ոսկեշաղ, մաքուր,
գարնանային երեկոյ է քո մարմինը, քոյր:

Գարնանային երեկոյ է, ուր արևը հիւր
մայր է մանուկ՝ արնաշագախ ու կարմիր, կարմիր:

Ու սուրում է, կարծես հեռու աշխարհից ուրիշ
քո մարմինի բոյբը, որպէս այլուած հաշիշ:

Հովը սուրաց, զիշերն ընկաւ... Ու դառնում է, ախ, —
քո մարմինը — հրափթիթ վարդերի դադադ...

Օրերը, որ գնացին, չեն դառնա հիմա:
Օրերը մեզ բերեցին մենութիւն ու մահ:

Տխրութիւններ, որ կեանքում այս անուն չունին.
—մութ էր տազնապը հոգուս, ու կարօտը՝ հին:

Դաշտերի մէջ երկրային, հեռաւոր ու մօտ,
մեզ չէր ժպտում ո՛չ մի լոյս ու կրակ աղօտ:

Զգիտէիր, սիրտ իմ, որ՝ խաւարում հեռւի
պէտք է երկրի կրակով քո հեռուն վառւի:

Բռնկւել է, սիրտ իմ, տես, քո հեռուն հիմա —
շուրջդ խաւար է սակայն, ու մշուշ, ու մահ...

Կապոյտ աչքերդ ահա—աներազ ու պազ,
երկինքներ են—անարև, անուրախ:

Երկինքներ են, ուր արև ու կրակ չկայ—
կապոյտ աչքեր մի մեռած, մարած աղջկայ:

Ու խաչել են քո կրծքին ձերմակ ձեռքերդ շուշան,
ծաղիկներ են—արևին չհասան...

Էլ աչքերդ երկնագոյն չեն ժպտում հիմա.
դու պառկել ես դադարում, քո՛յր իմ, Մահ...

Կապոյտ կարօտը մեռաւ: Պառնուց հրին:
Արեւի շողքը ահա զարկել է սարին:

Որպէս հսկա աղամանդ, տես, գազաթը ձիւն
բռնկւել է իրիկւայ կապոյտի միջում:

Բո՛ց է դարձել ոսկեգոյն—չի հալչում սակայն.
գազաթներում յուշ դարձող երազներ չկան:

Յուշ չի դառնայ ձիւնը՝ ջինջ գազաթի վրայ՝
սիրտս—սառոյց, սիրտս—ձիւն,—կրակի քուրա...

Այս աշխարհում իրիկնային, ուր ապրեցիր միայն մի ժամ,
հրաշք էր, սիրտ, հրափթիթ ծագկումը քո հրաշուշան:

Բայց որք հոգիս, կարօտիս պէս աստեղանհ ու խելագար՝
մի ալ կեանք փայլ էր կարծես, փայլ էր կարծես, կար-
ծես չկար:

Փայլ էր հոգիս՝ շառագունեամ իրիկնային քո երազում
ու կարօտով անմխիթար լոյսի մասին երգ էր ասում:

Ու որք հոգիս քո կարօտում յաւերժօրէն միանց, միանց,
որպէս կարմիր մի ողջակէզ՝ արիւնոտեամ, հրէ մի խաչ:

Դու ծագկեցիր, սիրտ իմ, որպէս հրափթիթ, կարմիր
զարուհ—
նա յուշ դարձած ցնդեց, կորաւ իրիկնային աչս աշխարհ-
հում...

Կապոյտ կարօտը ոչինչ, մեզ ոչինչ չաւեց:
Մութ է խորհուրդը կեանքի, ու անհուն, ու մեծ:

Մութ է խորհուրդը կեանքի, բայց կեանքի մթում
հազար հրդեհ կայ հոգու ու հազար խնդում:

Ես հասկացայ ու գիտեմ, որ աշխարհը մի
երգ է հնչեղ, հրաշունչ—հրաշունչ քամի:

Ջերմ քսում է մեր հոգու շրթերին պապակ,
որքան զոներ կան հոգում՝ հեռաւոր ու փակ...

Երկինքներ կան մեր հոգում՝ անապակ ու ջինջ—
կապոյտ կարօտը սակայն չաւեց ոչինչ...

Կապույտ լճի վրայ, բացերի մէջ պարապ,
օրօրում է ահա մի սպիտակ կարապ:

Վարը, որպէս երկինք, լիճն է ծփում օրօր,—
վերը, որպէս մի լիճ, կապույտ երկինքն է խոր:

Ծիրն ու սահման չկայ, չկայ երկինք, երկիր,—
հոգիդ փռիւ արձակ, ո՛ղջ աշխարհը գրկիր...

Անըջօրէն սպրիւթ թիւեղերքում հրափ—
որպէս անդարձ մի երգ, որպէս ճերմակ կարապ...

Խինդ կայ հիմա իմ յոգնած սրտում.
Խինդ կայ հիմա—այս վառուղ արտում:

Հետու հրով կրակած, երազուն՝
օրօրում է՝ յոգնաբեկ ու հասուն...

Քո՛յր է հովը՝ անմարմին ու անշուք,
երգը նրա—կարօտի մի շշուկ...

Երգ է ասում հասկերին միգամած,
երգ է ասում՝ քաղցրաճայն ու կամաց:—

Արտը հրաճ է կարծես երազում—
ու ծփում է՝ յոգնաբեկ ու հասուն...

Իմ հեռուոր, իմ հեռու եղերքում
կարծես գնում եմ հիմա ու երգում:

Հովը շոյում է թեթե իմ աչքերը թաց
ու թռչում է սրաթե, սրլնթաց:

Սիրոյ խօսք է իմ սրտին փափսում,
ժամանակն է՝ երազուն ու հոսուն...

Ժամանակն է, որ անցաւ—ու չկայ.
տրոփում է, որպէս սիրտ աղջկայ:

Քաղցր կանչում է զէպի օրերի հեռուն...
որքան խի՛նդ կայ այս հեռու դաշտերում...

Ցորենների արտի վրայ, հրաբորբոք,
անցնում է մի իրիկնային կարմիր մորմոք:

Հով է կարծես, կարմիր մի հով, հրէ մի սիւք,
որ անցնում է հրաբորբոք, հրաշշուկ:

Վերը, հեռուն, արիւնամած հորիզոնում,
մէկը կարծես—հրէ մի մարդ—գո՛հ է անում:

Երկնից լիցած հորիզոնի գծի վրայ—
փառել է մի ոսկերոտոր, կարմիր քուրա:

Ու քուրայից կարմիր, կարմիր հոսում է վար՝
արտի վրայ՝ մի խնդութիւն արեամբա:

Ձերմ ծփում է արտի վրայ հրաբորբոք,
որպէս հեռու մի խնդութեան կարմիր մորմոք...

Տունս դաշտում հեռու սպասում է հիմա:
Շուրջը մութ է ու մութ—կարմիր մշուշ ու մահ:

Տունս թողած հեռուն, թողած խոնջէնք ու սէր—
ես գնում եմ դէպի մահացում ու գիշեր:

Բայց կարօտս հիմա—հրափթիթ մի վարդ—
բռնկեւել է միզում ու վառում է գլարի:

Ու վառում է հոգին տառապանքով անուշ,
տունս թողած հեռուն, որպէս ցնդած մի յուշ:

Դեռ մայր չի մտել երկնքում
արեւը՝ արիւնոտ ու կարմիր.
դեռ չի մոխրացել իմ հոգում
քո վերջալոյսը կարմիր:

Վառում է՝ արիւն ու կրակ,
փռել է արնահոտ մի փռչի.
վառում է ու իջնում արագ—
աշխարհը թողնելով ուրիշի:

Գնում է, բայց կրկին պիտի գայ՝
այլ կեանքի ժպիտով ու երգով,
գնում է—ու կրկին պիտի գայ—
բայց մի այլ—մի ուրիշ կրակով:

Ես լուել եմ հիմա, խոնարհւել եմ հլու—
սիրտս գիտէ միայն՝ արշալոյս է զայլու:

Սիրտս գիտէ հիմա՝ պիտի իջնի գիշեր,
պիտի մեռնի, մարի ամեն կարօտ ու սէր:

Մութը պիտի իջնի ու աշխարհը այս հին
պիտի ցնո՛րք դառնա, պիտի գգւի մահին:

Պիտի ցնդի, մարի, որպէս հեռու մի յուշ—
մինչև կարմիր վառւի արշալոյսը անուշ:

Մինչև վառւի մութում արեւը հուր, հզօր—
ու նո՛ր փայլով խնդա հորիզոնը բոսոր:

Սիրտս գիտէ հիմա, որ արեւը մեր այս—
փայլ է ուրիշ կեանքի, ուրիշ կեանքի երազ:

Պիտի իջնի, մարի երկինքներում բոսոր—
որ արթնանա նորից՝ հեռաւոր ու հզօր:

...Մայրամուտի այս սուրբ, հրակարմիր միգում,
բոբբ արևի վառուղ, ողջակիզուղ հոգում,
որպէս անդարձ երազ, որպէս անցած մի յուշ—
մոխրանում է անա քո մարմինը անուշ:
Որպէս կարմիր մի վերք, մի արնադոյն քուրա,
բռնկւել է անա հորիզոնի վրայ,
այլում է, որպէս իրիկնային մի սէր,
ու գնում էի զէպի մայրամուտ ու գիշեր...

Սիրտս է կարծես միում,
սիրտս—մաքուր, գւարթ,
սիրտս—երկնի մովում
կարմիր բացւած մի վարդ:
Այլում է, բոսոր,
վա՛ր է իջնում արազ—
հրաբորբոք, հզօր
սիրտս՝ կարմիր կրակ...

Սիրտս—արեւ, սիրտս—զարուհ,
հրի բաժակ ու սիրոյ,—

իրիկնային այս աշխարհում—
քանզի զոհ...

Յերեկների թոյնը բոսոր
սիրտ իմ, տանք, սիրտ իմ, տանք,—
թող տարածւի գիշերը խոր
ու արդար:

Մայր մտիր, սիրտ, ու ծածկւիր—
խաւարում, խաւարում.
յո՛ւշ է կեանքը, ոսկի մոխիր
ու մարում:

Մայր մտիր, սիրտ, կարմիր երազ,
երկինքներում ցուրտ ու սին,—
որ վաղը, սէգ, դու բարձրանաս
արևի հետ միասին...

Արևն իջաւ:—Մօտ է ծիրին:—
Փնոք հրաշէկ երկնաւորին:

Նա չի տանի դէպի կորուստ.
զո՛հ է նա մեզ՝ վառւած վերուստ:

Արեւը—մի ոսկի հրաշք,
հրէ մի սիրտ, հրէ մի աչք:

Արեւը, որ խենթ է հիմա,
արեւը—կեանք, արեւը—մահ:

Նա է տալիս թախիժ ու թոյն,
կարմիր ժանտախտ, հիւանդաւթիւն:—

Բայց զո՛հ է նա՝ վառւած վերուստ—
ու չի տանի դէպի կորուստ...

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

1

Երբ երկնքի մովում վերջին աստղը հանգաւ՝
 նա իր տունը թողեց ու ճանապարհ ընկաւ:
 Գէմը՝ դաշտն էր հերկած՝ արդաւանդ ու խոնաւ,
 վերը, հեռու-հեռուն, որպէս հրէ մի նաւ,
 աստղաստղ փռած, հրամանաւ ու հիւր՝
 բարձրանում էր հեռու արեգակի կարմիր:
 Զով էր դաշտում, չկար դեռ տափնապ ու կրակ,
 ու քայլերով թեթեւ նա գնում էր արագ,
 հեռանում էր անգարձ, անսփոփ ու լսին
 ու նայում էր հեռու հորիզոնի ծիրին:
 Տարօրինակ, մենակ, սրտում կարօտ ու հուր՝
 նա գնում էր արագ ու երգում էր անուր,
 ու նայում էր հեռու հորիզոնի ծիրին
 և լսում էր մի ձայն, որ կանչում էր լսին:
 Հեռուններից կապոյտ մեղմ կանչում էր նրան
 մի հեռաւոր ընկեր, կարօտակէզ մի ձայն, —
 մեղմ կանչում էր նրան դէպի երկնի հեռուն
 ու սուբում էր նրան մոռացում ու դարուն:

2

Ու քսում էր անուշ հովը նրա դէմքին,
 համբուրում էր նրան, որպէս սիրող մի կին,
 գութը գութում էր նրան, աներեւոյթ ու մութ,
 ու կանչում էր դէպի հեռունները կապոյտ:
 Նա գնում էր թեթեւ, որպէս անփոյթ — ուրու
 ու ձգում էր ուղին դաշտում — հեռու, հեռու,
 ոլորում էր անվերջ, որպէս անգարձ մի երգ,
 որ դաշտերը թողած, թողած հովիտ ու հերկ,
 սէզ լեռների միջով, ոլորաններով վերին
 խառնում է հեռու հորիզոնի ծիրին: —
 Ու կանչում էր նրան կարօտակէզ մի ձայն,
 շշուկներով անուշ նա ասում էր նրան.
 «...Ամեն տափնապ ու հոգս թողած երկրի հողին՝
 քայլիր, քայլիր անվերջ կարօտներիդ ուղին.
 մի կարօտ է հոգիդ, հեռու աստղի մի փայլ —
 քայլիր, քայլիր անվերջ, լաւերժառէ՛ր եղբայր...
 Արեգակը, կարմիր, կբարձրանայ հիմա
 ու կփռէ հովտում կարմիր տափնապ ու մահ,

խենթ կինդայ վերից՝ տափասէր ու զագիր—
 քայլիւր, քայլիւր անվերջ ու լեռները հասիր:
 Հովիտներին թողած ամեն տաղնապ ու յուշ՝
 տար լեռներէ հովին կարօտներդ անուշ,
 որ դաշտերի կարմիր, աղէտաբեր մուժում
 չխառնուի հոգիդ ուղիների փոշուն...»
 Ու քայլում էր շտապ, սքտում ուրիշ մի հուր,
 հեռանում էր անդարձ ու երգում էր տխուր,
 ու քսում էր քամին նրա տխուր դէմքին,
 համբուրում էր նրան, որպէս սիրող մի կին...

3

Իրիկունն էր արդէն փուել շուրջը նրա,
 երբ նա նստեց ձիւնէ ճանապարհի վրայ:
 Ճանապարհը՝ կապոյտ՝ ոլորում էր առաջ
 ու լեռնային մաքուր պտոյաներով սառած՝
 վեր էր ձգւում անվերջ՝ խորհրդաւոր ու մութ՝
 ու կորչում էր հեռու երկնքի մէջ կապոյտ:
 Լնու էր շուրջը այնպէս: Չկար շշուկ ու ձայն:
 Իրիկունն էր ու զով լռութիւն էր միայն:
 Հովը քսում էր պաղ նրա յոգնած ուսին
 ու պատմում էր հեռու երկինքների մասին...
 Բայց չէր լսում կարծես նա խօսքերը նրա—
 յոգնութիւն էր իջել նրա հոգու վրայ:

Ու թւում էր նրան, որ քայլել է մի դար...
 Լնու էր շուրջը այնպէս, շուրջը ոչ որ չկար:
 Ու թւում էր նրան կեանքը հեռու մի յուշ,
 որ ցնդել է՝ արդէն ու դարձել է մշուշ...
 Յուրտ էր շուրջը այնպէս, լուռ էր շուրջը այնքան—
 ու վար նայեց յանկարծ նա աչքերով տարտամ:
 —Վարը, որպէս հեռու, անդարձ կեանքի մի յուշ՝
 տարածել էր մի նուրբ ու թափանցիկ մշուշ:
 մայր էր մտնում հեռուն արեգակը բոսոր
 ու ժպտում էր կարմիր, հեռաւոր ու հզօր...
 Ու կարմրածոր վառուղ, կարմիր սրտից նրա
 վար էր ծորում՝ թմրած հովիտների վրայ՝
 ջերմ արիւնը նրա կաթիլներով հրկէզ—
 ու վառւում էր դաշտում, հրդեհում էր կարծես:
 Ու արիւնը նրա իրկնային մուժում
 խառնւում էր հեռու ուղիների փոշուն...

4

Նա նայում էր մեռնող արեգակի հրին
 և, չգիտէր ինչո՞ւ, արտասւում էր լռին:
 Սիրտը զարկում էր խուլ, որպէս ջարդած մի զանգ
 ու անցնում էր հոգուց մի հրաշունչ հոսանք:

—Որպէս վառուղ մի սիրտ, ողջակիզւող կրակ,
մայր էր մտնում հեռուն արեգակը հրակ,
որ զիշերից յետոյ, որպէս հրէ մի վարդ,
նորից վառւի ծիրում ու բարձրանայ գւարթ—
և լափւելով անվերջ իր կարմրակէզ հրից՝
երկինքների մոփում ողջակիզւի նորից—
որ դաշտերին խոնաւ, ճահիճներին ճղճիմ
տա՛ իր վառուղ հոգու ոսկիները վերջին...
Նա լալիս էր անօդ, երբ սրտաբեկ զգաց,
որ բռնկւեց սրտում արնաշաղախ մի կայծ:
Ոտքի ելաւ յանկարծ, շուրջը նայեց մի պահ—
լնու էր շուրջը այնպէս, լուսթիւն էր ու մահ:
Հովը նորից քսւեց նրա յոգնած ուսին
ու փափսաց հեռու երկինքների մասին...
Բայց չսեց նրան:—Սրբեց աչքերը թաց
և արևի հրին կարօտակէզ ժպտաց:
Եւ հայեացքը յառած արեգակի շողին—
նա ժպտալով բռնեց վերադարձի ուղին...
Եւ վայր իջաւ արագ հեռուններից պարապ—
ու ճչում էր հոգին, որպէս մեռնող կարապ.
սէզ լեռների վրայ, լուրթ երկինքի միջում
գոմքն էր երգում մահի, որպէս մեռնող թռչուն:

—Մայր էր մտնում հեռուն արեգակը հրակ—
ու քայլերով թեթև նա իջնում էր արագ,
որ համբուրէ այնտեղ, հովիտներում ճղճիմ,
բոլբ արևի թողած ոսկիները վերջին...

1918 յուլիս

Ա. Ռ. Ա. Ի. Օ. Տ.

1

Իմ անցած օրերի պէս,
 հնացած օրերի պէս,
 ես արդէն հեռացել եմ,
 հնացել եմ ես.
 ես արդէն հնացել եմ,
 ես արդէն հիմա ծեր եմ,
 հեռացել ու անցել եմ—
 ծերացել եմ ես:

Բայց այս վառ օրերի մէջ,
 երբ հողմերն աղմկում են,
 աղմկում ու երգում է
 անցած սիրտը իմ.
 ես կարծես դեռ ջահել եմ,
 ինձ կարծես հմայել են
 և իմ սիրտը պահել է
 կրակները հին:—

Ախ, գիտեմ, որ այդ գուռ ես,
 որ այդպէս հմայում ես,
 հմայում ու նայում ես
 օրերում այս հուր.
 դու անուշ կարկաչում ես,
 դու կանչող մի հնչիւն ես,
 կարկաչում ու կանչում ես
 չգիտեմ, թէ ուր:

Եւ հիմա ես լսում եմ,
 որ վերջին երազում իմ
 քո կարօտն սկսում է
 իմ հողին յուզել—
 ես կարծես ծերացել եմ,
 ծերացել ու դարձել եմ
 ու նորից երազել եմ
 կարօտանք ու սէր...

Օրերը հուր են հիմա,
 օրերը հողմ են հրէ.
 քաղցր է կեանքը, որպէս մահ,
 քաղցր է աշխարհը հրէ:
 Ո՞վ գիտէ՝ ո՞վ է վառել
 հուրը, հրդեհն այս հսկա.
 ես գիտեմ՝ դու՛ւ ես վառել
 հուրը, հրդեհն այս հսկա:—

Հնչում են խօսքերը, բառերը,
 յանգերը, վանկերը բոլոր,
 երբ քաղցր կարօտդ վառել է
 սրտիս մէջ նոր սէր ու օրօր:

Սրտիս մէջ վառել է, վառում է
 կարօտդ անուշ ու հրկէզ —
 իսկ դուքսը հողմի պէս տարւում են
 օրերը շեշտով այս երգիս:

Օրերը փրփուր են, ալիք են,
 ծփում են փրփուր առ փրփուր,
 հողմի պէս թռչում է գալիքը —
 յուզւում են օրերը պուրպուր:

Յուզւում ու ծփում են օրերը,
 ինչպէս իմ երգերը բոլոր,
 երե քաղցր կարօտդ վառել է
 սրտիս մէջ նոր սէր ու օրօր:

Հնչում են օրերը, կանչում են,
 օրերը—կարմիր ու բոսոր.
 օրերը զօղանջ ու հնչիւն են,
 գնդում են՝ հրէ ու հօր:

Ու սիրտս զնգում է, զնգում է,
 թռչում է՝ կրակ է ու բոց.
 լսում ես սրտի իմ զնգունը,
 լսում ես, լսում ես, թէ ոչ...

Կրակ կայ սրտիս մէջ, կրակ կայ,
 հրդեհ է՝ վառւում է հրկէզ.
 գալիքը կուգեմ որ արագ գայ—
 անդարձ է կարօտը երգիս:

Կուգեմ որ կեանքի մէջ գալիք այն
 երգերս զնգան ու ու հնչեն—
 կուգեմ որ լսէ, ախ, գալիքը
 երգերս այս վառ ու հնչեղ...

Նոր է կարօտս հիմա. հուր է կարմիր ու հրդեհ:
 Նոր է հմայքը, որով դու ուզում ես կախարդել:

Հո՛ւր ես դարձել ու կրակ, փայլ ես կարմիր ու փրփուր,
 ինչպէս օրերը այս տաք, ինչպէս օրերը պուրպուր:

Շուրջդ օրերը վառւում ու հորովւում են արագ,
 օրերը տօթ ու այրող, ինչպէս հայւածքդ հրակ:

Ինչպէս երգեմ, չգիտեմ, կարմիր հմայքը քո այս,
 ինչպէս ասեմ աշխարհին, որ աշխարհում արդէն կաս...

Կանչում են՝ դարձիր, դարձիր—
 օրերը՝ անցած, լազուր—
 բայց նոր է իմ դէմ անծիր
 աշխարհը հրահրօր...

Ու շուրջս արդէն հիմա
 շեփոր է հնչում ու շեր.
 շեփոր է ամեն մի մահ,
 ամեն վերք—հրէ մի սէր:

Կանչում են՝ դարձիր, դարձիր,
 օրերը—խղեր ու զուր.
 բացել է իմ դէմ անծիր
 աշխարհը հրահրօր...

Դու հրէ մի ուրու ես, աղջիկս,
 դու մօտիկ ու հեռու ես այնպէս:
 Դու փրփուր ու պուրպուր մի աղջիկ ես—
 ու մօտիկ ու հեռու ես այնպէս:

Քո փայլով դու վառել ես երկիրը,
 կարօտով ու փայլով քո անուշ.
 քո կարօտը վաղճւց ես երգել եմ—
 քո կարօտը ու փառքը անուշ:

Դու հիմա կարկաշում ես, կանչում ես,
 երերում ես հրէ օրերում.
 դու կարմիր քայքայի մի հնչիւն ես—
 կարկաշում ու կանչում ես հեռու...

Ես յաճախ մտածել եմ, զգացել եմ
օրերում այն անգոյն ու անել—
որ քո փայլը անհուն ու անծիր իմ
տխրութիւնն ու կարօտն է ծնել:

Որ քո փայլն յղացել է օրերում այն,
երբ ամեն փայլ մեռնում էր հրում.
Իսկ հիմա այն օրերը հեռու են,
այն օրերը տամուկ ու տրտում:

Եւ հիմա ոսկեփայլ դու շիկնել ես
օրերում այս այրող ու անգին—
ու տալիս եմ անա շշուկներս
քո այրող, քո անուշ կրակին...

Բրնդ ես, հուր ես,
բրնդէ սուր ես,
բրնդէ փառք ես,
բրնդէ փայլ—
բայց դու զնւր ես,
ախ, իզնւր ես
կոտորում սուրս
արեւո:

Ինչպէս քաղցր
մեր երգերը—
մեր վերքերը
հրաբոյր—
դու միշտ նոր ես,
ու հզօր ես,
ու բասոր ես,
քաղցր քոյր...

Բրոնզ ես, հուր ես,
բրոնզէ սուր ես,
բրոնզէ փառք ես,
բրոնզէ փայլ—
բայց ափսոս որ
դու հեռու ես—
դու ուրու ես
արեւոս...

Ու վառւում է օրերում սիրտս, որպէս ողջակէզ.
Չեքմ հողմերում ու հրում քեզ եմ տեսնում հիմա ես:

Փռել ես հուրդ ոսկի, վառել ես կեանքը մթաւ,
վառել ես սիրտս՝ խօսքի կարկաչներով արեւոս:

Բայց ես թողել հողմային քո նժույգները կարմիր,
որ հրդեհեն կեանքը հին ու քաղաքները մարմար:

Ու թռչում են սրննիմայ քո նժույգները հիմա—
քաղցր է աշխարհը սրտիս, քաղցր է կեանքը, որպէս մահ...

կարմիր նժույգները թռչում են սրնթաց,
 կարմիր նժույգները՝ բաշերը փրփուր:
 վառում, բոցկլտում են պայտերը նրանց—
 պայտերը սփռում են բոցկլտուք ու հուր:

վառել է երկիրը կարմիր կրակով—
 կարմիր նժույգները վառել են երկիրը, —
 թռչում են—հողմի պէս—անընդհատ շարքով,
 ամեն տեղ—երանշտ է, տապանապ է, զրգիւ է:

Դոփում են պայտերը, կայծկլտում են վառ—
 կայծերը նետի պէս ճեղքում են գալիքը.
 հողմի մէջ փլչում են շէնքերը մարմար.
 ամեն տեղ հրդեհ է, ու հուրը—բարիք է:

Թռչում են, թռչում են անվերջ, սրնթաց
 կարմիր նժույգները, բաշերը—փրփուր,
 վառում, հրդեհում են հետքերը նրանց—
 կարմիր նժույգները հրդեհ են ու հուր...

Արտիս մէջ մղկաում է կարօտը,
 արտիս մէջ մորմորում է մարմանդ.
 —աշխարհը հեկեկանք է, կարօտ է,
 արտիս մէջ մորմորում է մարմանդ:

Նայում եմ՝ օրերի մէջ, հրի մէջ
 երում է, երերում է պատկերդ.
 ախպէս դու հեռացել ես, հեռու ես,
 հեռու է, հեռանում է պատկերդ:

Օրերը թեաւոր են, թռչում են.
 թռչում ես՝ թեաւոր ես, ուրու ես:—
 կարօտս օրերի հետ թռչում է—
 բայց միշտ դու հեռանում ես, հեռու ես...

Ճամբայ եմ ընկել ես մենակ,
բայլել եմ՝ դարեր ու դարեր:
Երգում է սիրտս մահուկ—
փլչում են շենքերը քարէ:

Հեռու է տունս:— Հեռու:
Ուր է, ինչո՞ւ է... Հիմա
շուրջս գալարք է հրի,
շուրջս մրրիկ է ու մահ:

Հողմը սոսնում է հեռուն.
հուր է՝ թռչում է արագ:
Սիրտս տեղ եմ հրին—
սիրտ իմ, կարօտ ու կրակ...

Գնում եմ: Ուր եմ... Ինչո՞ւ:—
Շուրջս գալարք է հրի:
Շուրջս քայլերդ է հնչում:—
Հեռու է տունս, հեռու...

Յուշի պէս թեւ մի բարակ
կապում է սիրտը իմ քեզ.—
Երկիր իմ, սիրտդ արդեօք
զգում է հուրը երգիս:

Զգում է տենդը հոգուս,
երկունքս կարմիր ու մառ.
Երկնում է այսօր հոգիս,
երկիր իմ, քոյր իմ ու մայր...

Հեռու եմ,— ուր եմ հիմա...
Երգում եմ: Երգս—կրակ:—
Մրրիկ է կեանքը այս մի,
թռչում է՝ հողմից արագ...

Ինչպէս երկիրս անսփռի, ինչպէս երկիրս բախտագուրկ,
 ինչպէս երկիրս աւերակ ու արնաներկ—
 մխում է սիրտս հիմա սրբ, մխում է սիրտս բախտագուրկ,
 մխում է սիրտս՝ աւերակ ու արնաներկ...

Եւ այս երգերը իմ կարմիր, ախ, այս երգերը իմ կարմիր,
 որ երգում է անսփռի սիրտս կրակուն—
 ինչպէս պիտի արդեօք հնչեն ախ, այս երգերը իմ կարմիր—
 իմ աւերակ, իմ սրբ երկրում...

Ինչպէս երկիրս անսփռի, ինչպէս երկիրս աւերակ—
 այնպէս էլ սիրտս—անսփռի, այնպէս էլ սիրտս—անուրախ,
 վէրք է դառնում սրտիս խորքում օրերի փայլը այս հրակ—
 ախ, սիրտ իմ՝ բո՛րբ ու անսփռի,—երկիր իմ՝ սրբ ու
 անուրախ...

Վառում ես՝ մարմանդ, մարմանդ,
 սրտիս մէջ դառնում ես հուր:
 Վառում ես մարմանդ, մարմանդ
 հրով քո՝ շարմադ, մաքուր:

Սնրախտ եմ, սրբ եմ ու խեղճ,
 ինչպէս իմ երկիրը, որ—
 կորել է աշխարհի մէջ,
 լռել է՝ անտէր, անօր:—

Ես ինչպէս կանչեմ հիմա,
 որ տաս ինձ շրթերդ կաս.—
 ախ, ինչպէս կանչեմ հիմա,
 որ ձայնս լսես ու դաս...

Տեսնում եմ՝ վառ օրերում, օրերի հրում
 դեմքդ ժպտում է ահա աշխարհին ամբողջ.
 բացել է դեմդ ահա աշխարհի հեռուն,
 շիկնել է դեմդ ահա տիեզերքը ողջ...

Դու, որ ժպտում ես հիմա, որ վառել ես այդ
 խնդութիւնդ հրեղէն—ամենքի՛ համար,—
 նայիր մի պահ քո հրէ աչքերով զւարթ
 դէպի երկիրը իմ մութ, իմ երկիրը մառ...

Վառիր երկիրս քո դէմ—մի կարմիր կանթեղ,
 նետիր ժպտող վերջին իմ աւեր երկրին.
 տուր վերքերին նրա մառ, վերքերին անդեղ
 կարմիր ժպտար քո սուրբ, քոյր իմ, Սօմա, կի՛ն...

Դու—հողմային մշուշ ու մահ,
 դու—կրակի դուստր բարի,—
 քեզ է կանչում սիրտս հիմա,
 քեզ է կանչում սիրտս՝ արի:

Հասել է փառքդ արդէն վառ
 մինչև Հաբաշ ու Հնդուշին.
 քեզ եմ նետում եղբայրաբար
 իմ արիւնի ճիշը վերջին:

Բո՛րբ աչքերիդ նայածքը թող
 արիւնոտէ սիրտս հիմա—
 և թո՛ղ տեսնի սիրտս վառւող
 մահւան մէջ—սէր, սիրոյ մէջ—մահ...

Վառում է հեռու մի սէր
սրտիս մէջ, գառնում մոխիր.
միտում է յուզմունքը զուգ—
հարբել եմ բոյրով հողի:—

Վառել եմ, առել հրին
բոլոր այն երգերը, որ
սրտիս մէջ փռել էին
յոգնած սէր, յոգնած օրօր...

Երկունք կայ սրտիս մէջ մի,—
վառել եմ շէնքերը բիլ.
օրհնում եմ կեանքում հիմի
ամեն հուր, ամեն մոխիր:

Հոգմի պէս հնչեց երգեր
հնչում են սրտում իմ ջինջ.
տեսնում եմ—մի նոր երկիր
բացում է իմ դէմ քիչ-քիչ...

Ելել են նորից...
Հսկում ես երգերը հնչեղ...
Շիկնել է աշխարհը հրից:—
Պատրաստ ես, եթէ քեզ կանչեն...

Աշխարհը—զգում ես.
շեփոր է. գնում է անուշ...
Շիկնել է, շիկնել է հսկումս
և սիրտս—կրակ է և ուժ:

Զգում եմ՝ սրտիս մէջ
ծփում է ալիք առ ալիք
արիւնը նրանց, որ ելել սէզ՝
գնում են դէպ կեանքը գալիք...

Օ, երգ իմ, թռչում ես.
գիտեմ, որ—ուր էլ որ թռչես—
երգիս մէջ կզգայ ջերմ ողջոյնս
լնկերը, կամ քոյրը հրկէզ...

—Օ, երգ իմ, օ, քոյր իմ հրկէզ...

Որքան դաշտեր որ կան,
 որքան որ կան լեռներ,
 որքան գիւղեր, հիւղեր
 ու քաղաքներ հսկա—
 կուզեմ ողջոյն աշնքան
 հոգւոյ խորքից թևէ՛ր.
 կուզեմ ամեն ժխոր
 հոգիս ապրի, զգա:—

կուզեմ երգում իմ այս
 հոգիս հրթիռ դառնա,
 թռչի հեռուն՝ հրկէ՛զ.—
 ամեն անցորդ ապրի,
 ամեն անցորդ զգա
 խենթութիւնը երգիս...

կուզեմ շնչում երգիս
 ամեն անցորդ զգա—
 խենթութիւնս հրկէզ,
 խնդութիւնս հսկա...

ԷՄԱԼԷ ՊՐՕՖԻԼԸ ՉԵՐ

(ԳԱԼԱՆՏ ԵՐԳԵՐ)

Ս Օ Ն Է Տ

Ես ինչպէս Ձեզ չսիրեմ: — Դուք արեւստ էք ու հոգի:
 Օ, կարելի է արդեօք պրօֆիլը ձեր չսիրել:
 Ով երգ ունի իր սրտում ու սովոր է գեղեցկի՝
 նա պարտաւոր է Ձեզ բիւր, հազար սօնէս նւիրել:

Դուք այնպէս մեղմ էք խօսում: Երբ դուք կարգում էք, տիկին,
 Ձեր շրթունքները գունատ նմանում են յամբիկի:
 Եւ Ձեր աչքերը, գիտէք, առանց ներքին կրակի,
 լուսաշող են՝ Ձեր կրծքի քարերի պէս թանկագին:

Իսկ երբ աղանջ եմ դնում ես Ձեր թեթեւ քայլերին —
 թւում է ինձ, թէ նոքա արիօլէտներ են երգում
 և այդ երգով հմայւած՝ սիրտս տխրում է լոխ:

Եւ Դուք գիտէք, որ սիրուց հիւանդացած իմ հոգում
 ես միշտ լսում եմ թեթեւ, թաւ թրթիռներ ջութակի —
 երբ համբուրում եմ ես Ձեր բարակ մատներն ապակի:

Էմալէ պրօֆիլը Չեր,
 Չեր յակինթ աչքերը բիւ
 ես այսօր կուգեմ երգել,
 որպէս մի անյայտ գը Լիլ:
 Արդեօք ո՞ր վարպետը մեծ
 յօրինել է գէմքը Չեր.
 արդեօք ո՞ր Ոգին տւեց
 Չեր գէմքին լուսէ գծեր:
 Կուզէի երգեր կապել
 և գովել երգով անծիր
 էմալէ պրօֆիլը Չեր,
 Չեր յակինթ աչքերը բիւ:

Որպէս մի ցնդած պօէտ՝
 ես այսօր կուգեմ երգել
 էմալէ պրօֆիլը Չեր—
 և երգով լինել Չեզ հետ:
 Կուզէի յոյսով արեգ,
 աչքերում Չեր բիւ ու խոր
 գուշակել երգերը, որ
 դուք մի օր պիտի գրէք:
 Չեր կապոյտ հրով վառւած՝
 կուզէի լսել ես յար
 Չեր վճիռ երգերը վառ,
 որ այսօր դեռ չեն գրւած:
 Եւ որպէս ցնդած պօէտ—
 կուզէի անվերջ խմել
 լազուրէ երգերը Չեր—
 և երգով լինել Չեզ հետ:

*

Ես այնքան փոքր եմ դեռ,
երեխայ եմ կարծես,—
բայց ես սիրում եմ Ձեզ
ու ջինջ երգերը Ձեր:

Գիտե՞ք արդեօք, որ ես
վախենում եմ, երբ Դուք
նայում էք աչքերիս
հայեացքներով բարբոթ:

Սիրում էք Դուք երգել
սիրոյ երգեր յուզիչ:
—վախենում եմ ես Ձեր
հմայքների ու ժից:

*

Երագի պէս անուշ
ինչ որ բան կայ, գիտե՞ք—
երբ Ձեր գլուխը լոյս
Դուք մերթ բռնում էք թեք—
և գլխարկի կապոյտ,
թաւշէ ֆօնի տակից—
ուղարկում էք անիոյթ
ժպիտները Ձեր ինձ:

Երբ ես տեսնում եմ Ձեզ—
 տնդարձ անցած մի սէր
 սկսում է իր հեզ
 հէքեաթները հիւսել:
 Յիշում եմ ես յանկարծ
 կապոյտ լամպեր գազի,
 որոնք վաղուց հանգած
 սպասում են լոյսի:
 Յիշում եմ ջինջ, մաքուր
 ապակիներ կորած,
 կապոյտ ծովի փրփուր՝
 փխրուն գիպսից փորած:
 Ինչ-որ մի տեղ գնած
 ֆօլիանտի թերթեր—
 ու թիթեղից շինած
 դիակառքի վարդեր:

Յստակ հոսում են իմ
 երգերը Ձեր մասին.
 տրեւի եմ Ձեր բոյրին,
 Ձեր մեղմահոս լոյսին:

Յստակ, յստակ է այս
 տխրութիւնը իմ նոր,
 որպէս մանկան երազ,
 որպէս մանկան օրօր:

Սրտիս վրայ մի հեզ
 քնքշութիւն է իջել—
 թեթեւ, թեթեւ, որպէս
 կապոյտ վուալը Ձեր:

Առեւ եմ գիրքը Ձեր
ու նայում եմ նրան:
Ձգւում են բիւ գծեր
գրքից՝ հոգուս վրայ:

Նայում եմ թերթերին
և սպասում եմ, որ
երգերը թրթռան,
որպէս լոյսի օրօր—

և անսահման, անծիր
թրթիռներից երգի
հիւսիս պրօֆիլը Ձեր
և սրտամոք երգի:

Որպէս հեռու բոյրի,
հրապոյրի կարօտ—
թողէ՛ք, որ գուրգուրի
սիրտը իմ մէջ ու մութ—
քնքշութիւնը անծիր
Ձեր սրտամոք յուշի՝
կապոյտ վռալը Ձեր
ու վռալի փռչին:

Ձեր գեմքի կարօտը վէս
իմ հոգում հեռու հրի
մի կապոյտ փայլ է վառում.
կարծես ես տեսնում եմ Ձեզ
մոգական մի լապտերի
լուսազարդ, բիլ նկարում:

Մոգական մի լապտերի
կապտաւուն լոյսի նման
այս գիշեր կարօտս անձիր —
Ձեր հեռու հրին գերի
ուղեղիս լաթի վրայ
նկարում է գեմքը Ձեր:

*

Ելէքտրական լամպի
Ֆոսֆորագոյն լոյսում
Ձեր էմալէ գեմքի
տխրութիւնն է հասում:
Հասում է լոյսը Ձեր
փողոցների հեռուն —
ու մի անձիր, անձիր
թովշութիւն է փռում:

*

Կարդում էիք Դուք թաւ ձայնով
տարօրինակ ու կանացի
երգերը Ձեր մարմանդ ու մով:

Երբ բարձրացայ ու գնացի—
լսել էր ձայնը Ձեր երգուն,
բայց իմ սրտում, իմ սրբ հոգում
թաւջութակներ էին երգում:

*

Երբ ես տեսնում եմ դէմքը Ձեր
և Ձեր մատները չափակի,
և Ձեր դէմքին լուսէ գծեր
ինչ-որ հեռու արեգակի—
սիրտս զգում է ցաւը նուրբ
Ձեր ուսերին նիրհող շալի,
մետաքսի վիշտը անսփոփ,
անբառ թախիծը ոտեալի,
ու բաժակում նիրհող թէյի
անմահ ձանձրոյթը յորանջող—
ու ջահագարդ սենեակների
մարմանդ մոլորութիւնը մեզ տանջող:

*

Թղթից շինած ծաղիկների պէս հիւանդոս,
 Թորախտաւոր ստեղծների պէս ոռեալի,
 փոշուց կերած նկարների նման անթով,
 որպէս մեռած գեղեցկուհու մի հայելի—
 հոգիս արել է անբառքառ ու չգիտէ
 ինչո՞ւ է օրն իրիկնանում ու լուսանում—
 երբ ոչ մի լոյս դրսից ընկած ճառագայթի
 չի ամփում նրա կարօտը անանուն:

*

Երբ էս յիշում եմ Ձեզ—
 հաւատացէք, որ ինձ
 համակում է մի հեզ
 ու մեղմահոս թախիծ:
 Սիրում է սիրտս բիւ,
 երազանքով անյոյս,
 կաթիլ-կաթիլ խմել
 տխրութիւնը Ձեր լոյս:
 Օրերում այս հրէ,
 յորձանքներում վարար,
 երբ որ ամեն քարի
 զարնում է մի քար—
 հեռուններից Ձեր կոյս
 Թող շիթ առ շիթ սուրա
 տխրութիւնը Ձեր լոյս
 վառուղ հոգուս վրայ:

*

Ես հիմա օրհնեցում եմ
 մի անուշ ախրութիւն, որ
 իմ հոգին ամոքում է
 Ձեր հետու կարօտով նոր:

Ես երգով միշտ Ձեզ հետ եմ
 Ձեր բոլորից յաւիտեան գոհ.
 Ես հիւանդ մի պօէտ եմ.
 —օգնեցէք, օգնեցէք, ճ...

ՏՐԻՕԼԷՏՆԵՐ

*

Իմ երգը միշտ Ձեզ է երգում
 Դուք երգ ու հմայք էք, աիկին.
 լսէք, ախ, լսէք իմ երգին —
 իմ երգը միշտ Ձեզ է երգում:
 Օ, թող իմ ամեն մի երգում
 իր փայլը գգայ Ձեր հոգին —
 իմ երգը միշտ Ձեզ է երգում,
 Դուք երգ ու հմայք էք, աիկին:

*

երեկ Ձեր պրօֆիլը այնքան,
 այնքան հմայիչ էր, գիտէ՞ք,
 և Ձեր սանրւածքը թեք
 երեկ հմայիչ էր այնքան:
 Դիւթիչ էր Ձեր ժպիտը մանկան,
 Ձեր քաղցր ժպիտը՝ սրտաբեկ.—
 երեկ Ձեր պրօֆիլը այնքան,
 այնքան հմայիչ էր, գիտէ՞ք...

*

Ձեր դէմքի էմալը երեկ
 յստակ էր, որպէս ապակի.
 կարօտ էր հրի, կրակի
 Ձեր դէմքի էմալը երեկ:
 Արդեօք ո՞վ պիտի կրակի,
 արդեօք ո՞ւմ պիտի նւիրէք
 Ձեր դէմքի էմալը, որ երեկ
 յստակ էր, որպէս ապակի...

*

Այսօր Ձեր մատները, տիկին,
 նման են հեռու մի յուշի:

մաղում են կապոյտ մի փռի,
 այսօր Ձեր մատները, տիկին:
 Հին բոյրն եմ զգում ես կրկին,
 հին բոյրը անցած, ուրիշի,—
 այսօր Ձեր մատները, տիկին,
 նման են հեռու մի յուշի...

*

Գիտէ՞ք, որ գարուն է արդէն,
 բոլորը թափւել են փողոց—
 լսում էք անուշ մի զնգոց—
 գիտէ՞ք, որ գարուն է արդէն:
 Դիւթում են շրթերը վարդէ,
 սրտերը կրակ են ու բոց—
 գիտէ՞ք, որ գարուն է արդէն,
 բոլորը թափւել են փողոց:

*

Շրշում են իմ շուրջը, շրշում
 շորեր ու շորեր կանացի.
 անցնում են մայթով փողոցի—
 շրշում են իմ շուրջը, շրշում:
 Լնում են գարնան մի շրշուն,
 կարծես թէ անտառ գնացի—
 իսկ շուրջս շրշում են, շրշում
 շորեր ու շորեր կանացի...

*

Երգում է ծովը, դաշար, հովը,
 ամեն ինչ երգ է ու շշուկ,
 երբ սիրալ խենթ է ու գինով է:
 Երգում է ծովը, դաշար, հովը.—
 գիտե՞ք, որ սիրալ դաշտ է, հով է,
 և երբ վարթնում է սերն անշուք—
 երգում է ծովը, դաշար, հովը—
 ամեն ինչ երգ է ու շշուկ...

*

|| (Տրիօլէտ ինտիմ)

Հիմա ամեն ինչ անիմաստ է,
 իզուր այդպէս դու շիկնեցիր.
 Ինչի՞դ է կեանքը, իր իմաստը:
 Հիմա ամեն ինչ անիմաստ է.
 Թողել ենք նաւը, զեկը, լաստը,
 Իսկ ծովը մնւթ է ու անծիր.—
 հիմա ամեն ինչ անիմաստ է—
 իզուր այդպէս դու շիկնեցիր...

*

— Ես անդարձ Ձեզ սիրել եմ և իմ սիրտը հուր է
 Թող ցրէ իմ հուրը տխրութիւնը Ձեր.
 տխրութիւնը թոյն է, ժանգոտած մի սուր է:
 Ես անդարձ Ձեզ սիրել եմ և իմ սիրտը հուր է.—
 օ, Թողէք որ, քոյր իմ, մորմոքող իմ հուրը
 Բռնկի յոյսով նոր մշուշում անծիր.—
 Ես անդարձ Ձեզ սիրել եմ և իմ սիրտը հուր է—
 Թող ցրէ իմ հուրը տխրութիւնը Ձեր:

✱

Ձրնգում է շուրջս աստղագարդ գիշերը
 ու պարում են շուրջս լուսագարդ յուշեր—
 այս գիշեր իմ սիրտը Ձեզ նսրեց յիշել է...
 Ձրնգում է շուրջս աստղագարդ գիշերը.
 օ, ինձ ի՞նչ, որ երբն իմ ու գինով իմ սերը
 շարժելու են ծաղրը ու ծիծաղը Ձեր—
 զրնգում է շուրջս աստղագարդ գիշերը
 ու պարում են շուրջս լուսագարդ յուշեր:

Երևան, 1920 II

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՊԶՐՈՒՀՈՒՆ

(ԵՕԹԸ ԲԱԼԼԱԴ)

1. ԽՐԱԽԱՆՔ

Ձահերն աշտեղ կապածոս
 ակնարկում են ու թարթում
 • գիշերային, սակայն աօթ
 հմայքների թակարկում:
 Այնտեղ շքեղ ու փարթամ,
 մանրկէսի պէս կիներ
 ծախում են սուտ խենթութեան
 թիթեղաձայն ոտկիներ:
 Ու մեռելի նման պաղ
 մարդիկ յոգնած ու դեղին
 աշտեղ լցւում են ուրախ
 խենթութիւնով հրեղէն:
 Անցիր մենակ:— Կէս մթում,
 ակնարկներով հրակէզ,
 հմայքներով անպատում
 կհմայեն նրանք քեզ:
 Նստիր աշտեղ: Թող նրանք
 սրահներում իրենց մութ
 վառեն կարմիր մի կրակ՝
 անհրապոյր ու ազօտ:

Անհարազատ թող լինին՝
 կարօտակէզ քո հոգուն—
 թէ երգերը նրանց հին,
 թէ ժպիտները բեկուն:
 Համոզիր քեզ, որ վաղուց
 դու երազել ես սիրով
 ծախուող հմայքը այդ ուշ
 խրախճանքի ու սիրոյ:
 Աւ կզաւնայ ողջը—սուտ,
 ու գինու պէս քո հոգին
 յորդ՝ կթափուի նրանց մութ
 ու մահահոտ յատակին:
 Աւ էլ մինչև տառաւոտ
 պիտի մնաս նրանց հետ՝
 խրախճանքում նրանց տօթ,
 անխմատ ու անհեթեթ:
 Ել յանձնւիր մինչև լոյս,
 որպէս գերի մի անկամ—
 խրախճանքին նրանց ուշ,
 անուրախ ու արնաքամ:
 Ո՛չ մի վայրկեան չկասէ
 թող յորձանքը ժրջան—
 հարբիր սիրով նրանց սև,
 որ շրթերդ չճշան...

2. Շ Ա Մ Ի Ր Ա Մ

Նորից՝ անմար կարօտով գգւանքների ու հրի՝
 դու եկել ես տեսնելու քաղաքները Նաիրի:

Անհրապոյր ու կանաչ քո աչքերը մեռելի
 ցանկութիւնով հրահրած՝ անյագ վառել են էլի:

Դու անցնում ես ու տեսնում քաղաքները հիմա այն,
 որոնց տեղ խոտ էր բուսնում, երբ դեռ ապրում էր Արան:

Այլ է աշխարհը հիմա, այլ է հիմա Նաիրին.
 ո՛չ մի արքայ էլ չկայ, որ չտուի քո հրին:

Մտիր ակումբը հիմա, մտիր թատրոնն ու կաֆէն՝
 հազար արքայ ու Արայ կհանգիպեն ժպտադէմ:

Ո՛չ վէճ է էլ հարկաւոր, ո՛չ պատերազմ մահառիթ.
 արքաների համար նոր—բաւական է մի ժպիտ.—

Միայն ակնարկ մի թեթեւ—և կտրւեն նրանք քեզ,
 քո հմայիչ ու անթեւ տարփանքներին հրակէզ:—

Կգան մէկ-մէկ ու սիրով—ու կտանջես նրանց դու
անյապ կըքի ու սիրոյ նիզակներով քո հատու:

Եւ այնպիսի տարփանքներ նրանք կտան հիմա քեզ,
որ կամօքի քո հոգին կարօտանքից սիրակէզ:

... Բայց կլինի մի գիշեր—ու հմայքով նախրեան
կրարձրանա մշուշից մանկածպիտ քո Արան:

Նորից հոգիդ անսփոփ կարօտանքով կլաուի—
ու սարսափով մի անօդ՝ նորից կեխես դու կուի:

Եւ որպէսզի չարուի նա ախտածէս քո հրին—
առքի կեխէ նրա հազարամեայ Նաիրին:

Եւ դաշտերում Նաիրի կպարտուի նորից նա,
կնանանջէ զօրքը ետ, երկիրը քեզ կմնա:

Նա կմեռնի, որպէս զոհ—բայց չես յաղթի դու նրան.
—դան է խորհուրդը սիրոյ, շամբշտաշուրթ Շամիրամ...

3. ԱՆԿՈՒՄՆԵՐԻ ՍԱՐՍԱՓԻՑ

Ես եմ հիմա—մի պօկտ. և իմ անունը—Չարենց—
պիտի վառուի դարերում, պիտի լինի բնորձր ու մեծ:

Ես եկել եմ դարերից ու գնում եմ յաղթական
դէպի դարերը նորից՝ դէպի վառուդ Ապագան:

Ինչ է ուզում ինձանից կապոյտ մորմոքը հրի.
Ինչ է ուզում քո հոգին, հազարամեայ Նաիրի:

Եւ ինչու ես դու փռել իմ դէմ քո բոյրը բոյր
և իմ մորմոքը վառել թախիծներով ահաւոր:

Եւ ինչու է իմ տառջ ելել աղջիկը քո հին՝
բոլոր աչքերով իր կանաչ ու հմայքով իր դեպին:

Ուզում է մերկ լինեմ ես ու անսփոփ, ու անօդ,
որպէս մեռել մի հրկէզ, որչպէս կորած մի մանուկ:

Եւ չարձակած ո՛չ մի նեւ, անկումների սարսափից
ես փախչում եմ ահա ետ—ես նահանջում եմ նորից:

Եւ աչքերս, որոնց զէմ կանգնել է բիւ մի նկար —
նորից յանուամ են զէպի ամբոխները խելագար:

Նրանք ելել են նորից, նրանք շատ են, նրանք վառ,
ու աւերեն պիտի ձեր քաղաքները լուսնահար:

Ո՛հ մի հմայք էլ պիտի ձեր աշխարհը շունենա՝
նրա աեղ մահ ու աւեր, վերք ու մոխիր կմնա:

Ու չի ելնի մոխիրից տխուր հմայքը ձեր տան,
ու չի լինի էլ սիրույ քաղցր ու կապույտ ձեր շղթան:

Ձեն վառւելու տոփակէզ կանանց աչքերը էլ ձեր —
նրանք մոխիր կդաննան, չեն բորբոքւի նրանք էլ:

Եւ չի յիշի ո՛չ մի սիրտ, որ դարերի մէջ մի օր
սիրտս եղել է զերի անկումներին ահաւոր:

Որ եղել է դարերում մի սարսափի հման կին,
որը նետել է հետու աստղանկար իմ հոգին:

Նրանք կգան, կաւերեն, և չի մնա էլ սչինչ՝
սչ զրախտը ձեր գեհեն, ոչ թախիծը ձեր զիւթիչ:

Եւ չի լսի ո՛չ մի կին իմ անկումի մասին այս,
որ դարձրեց իմ հոգին թարախակալ մի երագ:

Եւ չի մասնի ո՛չ մի բառ շնչում իմ տօթ երգերի,
որ եղել եմ ես տկար, որ եղել եմ ես դերի...

Ես պօէտ եմ — և հիմա իմ վառ երգերը պիտի
զէպի գալիքը թռչեն սլաքների պէս նետի:

Ես եկել եմ դարերից ու գնում եմ, յաղթական,
զէպի դարերը նորից, զէպի կարմիր ազագան...

4. ՎԱՐՍԱՎԻՐԻ ՀՄԱՅՔՆԵՐ

Վարսավիրի մօտ հիմա նա լուռ նստել է էլի.
դէմը փայլում է հսկա արծաթափայլ հայելին:

Դէմը նստել է մի կին ու աչքերով մեռելի
նայում է պաղ աչքերին՝ անվերջ, էլի ու էլի:

Թափել է վար, ճակատին դեղին մազերը հիմա
ու ակնարկում է մթին տաղնապաներով ակամա:

Այնպէս օտար է, այնպէս անսիրելի ու հեռու,
ինչ են գտել նրա մէջ դուրգուրելու, սիրելու:

Տխուր, տխուր, որպէս մահ, ակնարկում է հայելին.
սանրում է սակայն նա, դէմքը ժպտում է էլի:

Ու կանգնել է իրեն մօտ—մօտիկ, մօտիկ, որպէս սէր—
մի բարեկամ անծանօթ, հրաշագործ մի ընկեր:

Դէմքին՝ տաղտուկ մի ժպիտ, ձեռքին սրւակ ու փռչի՝
թափում է նսւրբ հմայքներ, ծախուղ բոյրեր ուրիշի:

Հարագատ է այնքան այդ զրնգունը մկրտաի.
ինչ է ուղում սակայն ծեր, չար ժամացոյցը պատի:

Նա ինչու է ազմկում, որպէս տաղտուկ թշնամի՝
սուր զարկերով ին՝ բեկուն՝ հարւածների պէս գամի:

... Մոգ-վարսավիրը սակայն թափում է նուրբ հմայքներ—
ու էլ դէմքով զիւթական ահա եփում է նա վեր:

Ում ինչ, որ նա էլ հիմա ինքն իրեն չի ճանաչի—
ու ժպիտով ակամա պիտի գերի ու խաչի:

Ես պօէս եմ ու գիտեմ, որ աշխարհում այս նսեմ
ճշմարիտ է միայն այդ ամոքող սուտը լուսէ:—

Սուրբ է կեանքում միայն դա—ամոքող վաղը ստի.
—օ, պչրուհի, հաւատան երազներին պօէտի...

5. ՀԱՅԵԱՅՔՆԵՐԻ ԹԱԿԱՐԴՈՒՄ

Ո՞վ է անցնում բուլվարում.

— Նա:—

Նայում են, շատ են նայում:

Ահա:—

Ա՜հ, աչքերով ու հրով

չարչարում են, տանջում.

համբուրում են աչքերով—

անյաղ, ծարաւ—պահանջում:

Թափում են նուրբ մի կրակ—

աչքերով:

Մերկացնում են արագ—

հրով:—

Բո՛ւրբ աչքերի կրակով

հրկիզում են, վառում.

կանչում են նուրբ ակնարկով

հեռու:

Լցնում են սիրաւ սիրով

այրոյ:

լցնում են սիրաւ սիրոյ

բոյրով:

Ու դառնում է ողջը—հուր,

ու կարօտ, ու փայլ:

Ու դառնում է կեանքը—նոր,

այլ:

Նիզակների նման շուշու

հիմա

խոցում են դառն ու անուշ—

ու նա՛

շէ՛կ տարփունու նման մի,

հայեացքների թակարդում—

յանձնում է ամեն մի

մարդու...

Անկարելի է կեանքում

այսքան սէր:

Յերե՛կ է, թէ—մի անքուն

դիշեր:

Տւէ՛ք, էլի՛ ու էլի՛—

անվերջ.

քաղցը է կեանքը, սիրելիս,

այնպէ՛ս...

6. ՇԱՆ ԿԱՐՕՏՆԵՐ

Պատուհանիս տակ հիմա որք մղկտում է մի շուն.
սիրտս լսում է նրան— և սիրտս քեզ է յիշում:

Նա տխուր է ու մենակ, ոչ-ոք չունի հիմա նա—
ու գանգատը զժնգակ լուսինը չի իմանա:

Պուրսը ամպ է ու մշուշ, անասող երկինք ու զիշեր.
մղկտում է այսքան ուշ, գանգատում է առանց սէր:

Հեռուն թարթում է տարտամ գազէ լապտերը բեկուն.
ինչ շուտ մարեց այս անգամ արեամբառ երեկոն...

Ինչ շուտ մարեց ցերեկի գլարթ ազմուկը ու մութ
զիշերն իշաւ՝ անհողի, անմխիթար ու անդութ:

Յերեկը լաւ է այնքան, ցերեկը խինդ է բերում—
փողոցների խրախճան, անմխիթար դեգերում:

Խոհանոցի դռն մօտ, կամ խոնութի մօտ հացի—
սպասումներ ու ամօթ՝ խուլ տաղնապներ փողոցի:

Բայց ցերեկները չունեն մղկտութիւն զիշերուս
ու հոգու ցաւը անհուն ցերեկը չի երևա:

Մղկտում է հիմա նա, սիրտը գգւանք է ուզում,
սիրտը ճշում է հիմա, մղկտում է անդեղու—

Բայց սիրտ չունեմ էլ քո խեղճ մղկտանքը լսելու.
—քնիր, քնիր, եղիր խեղճ, անօգնական ու հլու:

Ձի ուղարկի ո՛չ մի փայլ մեզ լուսինը հիմա էլ—
չո՛ւն, կարօտի իմ եղբայր, գառնաթախի՞ծ իմ ընկեր...

7. Խ Ե Ղ Կ Ա Տ Ա Կ

Ու գինու պէս քո հոգին
յորդ կթափւի նրանց մութ
ու մահաճոտ յատակին:
«Խորախմանք», Բալլադ 1-ին.

Կուղէք—երգեմ՝

ձեզ համար,

հիմա:

Այնպէս երգեմ, որ զգաք—

ինչ որ կուղէք՝ կուղէք—սէր,

կուղէք—մահ:

Ես երգում եմ, որ յուզեմ.

տալիս եմ երգս լուսէ

ո՛ւմ որ կուղէք. թէկուզ հա

լինի պոռնիկը վերջին.

դուր չի գալիս ձեզ միթէ

այս քնքշութիւնը—

արջի:

Ես երգում եմ ազամա:

Ի՛նչ էլ երգեմ, կուղէք—սէր,

կուղէք—մահ:—

Բայց չեմ կեղծում ես երբէք:

Լսէք երգերս—

ահա—

լսէք երգերս, լայց թէ—

չհարբէք:

Ես չեմ ուզում, որ հարբէք.

լաւ չէ, զխաէք, երբ որ մի

անհոն կարօտ դառնում է քաղցր

քամի...

Զէք հասկանում: Իզո՛ւր, իզո՛ւր: Դուք պէտք է որ

հասկանաք:

Թո՛չե՛լ է պէտք. սակայն ո՛ւր:—

Զէք հասկանում. ես կուզեմ,

որ իմ երգերը

լուսէ—

ձեզ թուղթ թւան ու թանաք:

Զէք հասկանում...—Դուք պէտք է որ

հասկանաք:

Ուրիշ—ոչինչ:

Ու հիմա—

հո՛յնն է նորից. ես երգում եմ, որ յուզեմ:

Ես երգում եմ—ականա:
 Ի՞նչ էլ երգեմ. կուզեք—սէր,
 կուզեք—մահ:

Ես—խեղկատակ եմ հիմա...

Նրինս 1920

Ա Ր Փ Ի Կ Ի Ն

ՈՒԹՆԵԱԿՆԵՐ ԱՐԵՒԻՆ

*

Նեաւել է երկաթէ մի ձեռք
 դէպի վեր ոսկի մի ծնծղա.
 բռնկւել է ոսկի ծնծղան,
 դարձել է արնածոր մի վէրք:
 Վառւել է երկնքում յակինթ
 ու ծորում է արիւնը իւր կէզ, —
 զոհւել է երկնքում վճիռ. —
 ինչքան լո՛ւ է հառնումը հրկէզ...

*

Այն արևն է՝ կարմիր ու հասուն,
 կախել է, որպէս վառ մի միրգ,
 կարօտող շրթեր է ուզում,
 բորբոքում է գրգիռ ու կիրք:
 Շոգ շրթեր ու կոնքեր է ուզում,
 գգուանքներ արնաքամ ու տաք,—
 այն արևն է՝ կարմիր ու հասուն,
 —ինչքան լսւ է համոռնութիւն յտակ:

*

Աղջկայ կոնքերի նման
 երազուն, կիզուն ու հասուն՝
 վառում է արևի ծնծղան
 աշխարհի անհուն երազում:
 Դաշտերից նժույգներ են վազում,
 վրնջում են կրքոտ ու վառ,—
 աղջկները չար խօսք են ասում—
 ու խնդում է արևը խեղառ...

Ինչ որ լաւ է—վառւում է ու վառում,
 ինչ որ լաւ է—միշտ վառ կմնա.
 այս արեւ, այս վառ աշխարհում
 քանի կաս՝ վառւիր ու գնա:
 Մոխրացիր արեւի հրում,
 արեւից թող ոչինչ չմնա,—
 այս արեւ, այս վառ աշխարհում
 քանի կաս՝ վառւիր ու գնա:

Տեսնում եմ՝ արեւի վրայ
 վրնջում են ձիեր ոսկենալ,
 մերկացել են աղջիկները խելառ
 ու ծծում են շրթերը նրա:
 Բորբոքել են շրթերը շող,
 համբուրում, բուրում են կէզ,
 վախենում են—մնան անշող.
 —ախ, այնպէ՛ս ուզում եմ—քեզ:

Ինչպէս շոգ, ճնշող ոսկի,
 բրնձեկծոյլ, հասուն, հոսուն—
 արևի տապն է հոսում,
 Ինչպէս շոգ, ճնշող ոսկի:
 Ախ, հոգիս մի նոր խօսքի
 արևոս շունչ է կիզում—
 Ինչպէս շոգ, ճնշող ոսկի,
 բրնձեկծոյլ, հասուն, հոսուն:

Ես գիտեմ՝ արևի վրայ
 հաւաքւում է վերք ու ժանգ,
 հասնումի տօթ մի հոսանք—
 անհատնում, ալ մի քուրա:
 Հատնելով լոյսը իրա
 արնոսում է կուրծք ու ծիծ.—
 Ինչ կանես— արնով արա,
 Թող լինի վերք ու քրքիջ:

*

Արնակէզ, սուր մի նիզակ
 զարկեցի ալ վահանիդ. —
 աշխարհքում էլ ի՞նչ կանի
 իմ հոգին փառք ու պատի.
 Դու արև, վառ մի նշան,
 իմ հոգուն գամւած մի նիշ, —
 միայն դու, լոյս ու շուշան —
 և չկայ ո՛չ մի ուրիշ:

*

Կարծես ես ճամբայ եմ ընկել
 երկնքի դաշտերում կապոյտ
 ու գնում եմ, զւարթ ու անփոյթ,
 և ունեմ լուսէ մի ընկեր:
 Նա և կին է, և քոյր, և հոգի,
 այլում և այլում է խենթ.
 խառնւել եմ կեանքին ամենքի —
 և իմ կեանքը հրաշք է ու տենդ:

*

Իմ ուղեղը բորբոք, կրակուն՝
 ալ գծեր ծփծփան, հուրհուր.
 լափլիզում, սրբում է մի հուր
 իմ ուղեղը բորբոք, կրակուն:
 Յղանում են գէմքեր ոսկեման,
 գալարում են կրքեր բորբոք,—
 ախ, ուղեղս—անի ալւան
 ու աշխարհը—ցնորք է մի շոգ:

*

Բայց ինչո՞ւ միայն կիրք ու կին,
 միայն շոգ ու հեշտանք անուշ.
 վառում է զո՞հերի հոգին,
 փռում է տխրութիւն ու մութ...
 Խնջքան տանք արիւն է հոսել,
 ոսկեծով հեղհեղներ արեան—
 նո՞յն արեն է կարմիր ու լուսէ,
 նո՞յն անուշ աշխարհի վրայ...

*
 Փայլում են ոսկի սւրճներ,
 սպաղում է ոսկի մի վահան,
 ոսկեղէմ արևի վրայ
 փայլում են ոսկի սւրճներ:
 Ախ, ինչ լաւ է զինուել ու զինել
 արևով, արիւնով, — ահա
 ոսկեղէմ արևի վրայ
 փայլում են ոսկի սւրճներ...

*
 Ու նորից, ելած խնդափառ,
 օրերի կապոյտ բանտում,
 ցրում է լոյս ու զոհար,
 ծփում է ու վառ խնդում:
 Ով որ կայ խեղճ ու անտուն,
 ով որ կայ մերկ ու վհատ —
 օրերի կապոյտ բանտում
 թող լինի զս'ն մի դարձ...

*

Միայն ծծիր—արնածծիր վերք ու ծիծ,
արև՝ դարձիր—արնանման—ամոքիչ:

Ուրիշ ոչինչ չի կամենա սիրտը իմ.—
ողջը—հրին, արնանման արևին:

Սուր ախոսներ, արնածծեր, վերք ու թոյն,
տենդը արեան—հնադարեան խնդութիւն:

Ու նոյններ, ոսկի ու ծափ, ժանգ ու ծիծ.—
ո՞վ է քեզ պէս արնանման—ամոքիչ...

*

Մերկ մի աղջիկ գարկեց ձեռքով իր բաց կոնքին
ու վերևից խնդաց զւարթ ու ոսկեծախ.—

հազար վարդեր կրակեցին շուրջը, կողքին,

հազար խաշխաշ, ու գարնան օր, ու ծիածան:

Քաղցր ծփաց հեշտանք ու տապ, թոյն ու գրգիռ,

զաշտերը խառ ծաղիկներով ծփծփացին.—

աշխարհը—ալ, նաբնջագոյն, վառքը—կարմիր,

ողջը—հրաշք ու խնդութիւն արեգնածին...

*

Հոսում է ամբ, խնչպէս հեշտանք, կամ ձոյլ ոսկի,
 հոսում է ծանր ու յորդանոս ու արնափառ.
 լցում է թէ՛ ինդուլթիւնով կուրծքը հասկի.
 օրերը—տօթ, ձիերը—վառ, վազքը—խեղառ:
 Լնւթ երկինքներ՝ իջած հասուն երկրի վրայ,
 բարձր ճիչեր ու հրդեհներ ու ծիածան.—
 վառում է շոգ կաթսաներում կեանքը քուրա.
 —ախ, վայ նրանց, որ չապրեցին ու չտեսան...

1921 Մայիս. Երևան.

ՏԱՂԱՐԱՆ

Հիդս էսսի, մի կենա խոսվի պէս,
 տալիս տվիր, գէմիս տարար ծովի պէս.
 կու մէռնիմ—չիս տիսնի Սայեաթ-Նովի պէս...

Սայեաթ-Նովայ

Խնչքան որ հուր կայ իմ սրտում—բոլորը քեզ.
 Խնչքան կրակ ու վառ խնդում—բոլորը քեզ.—
 բոլորը տամ ու նւիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝
 դու չմքսես ձմրան ցրտում,—բոլորը քեզ...

Երեսն, 1921, փետրւար.

Ամռան անուշ, հուրհրատուղ տօթ ես, ջան,—
 նախշուն՝ նռան ու նարնջի հոտ ես, ջան.
 երբ խառագէժ ինձ ես նայում դու յանկարծ—
 ասես սրտիս մահւան դաժան բօթ ես, ջան...

Մոսկւա, 1921 թ.

Ա.

Երազ տեսայ. Սայեաթ-Նովէն մօտս էկաւ սաղը ձեռին,
 հըի նման վառման գինու օսկէջրած թասը ձեռին,
 նասեց, անուշ երգեր ասաւ՝ հին քամանջի մասը ձեռին,
 էնպէս ասաւ, ասես ունէր երկնքի արմատը ձեռին:

Ու էն երգին օրօր-շորոր, ինչպէս հուրի, տալաս ու խաս,
 երազիս մէջ գօղալն էկաւ՝ ինքն էլ վառման քաղցր երազ.
 նազանք արաւ, Սայեաթ-Նովի սիրտը լցրեց միւրգ ու մութազ,
 կանգնեց-մնաց՝ դէմքից քաշած օսկէկարած խասը ձեռին:

Նայեց-նայեց Սայեաթ-Նովէն, ամսլի նման տխուր մնաց.
 ասաւ՝ Չարենց, էս գօղալից սրտիս մէ հին մըմուռ մնաց.
 սիրտս վառեց, մոխիր դարձաւ՝ ինքը կրակ ու հուր մնաց.—
 դո՛ւ էլ նրա դովքը արա, որ գոյ՝ օսկէ մաղը ձեռին:

Էնպէս ասաւ Սայեաթ-Նովէն ու վեր կացաւ, որպէս զիշեր,
 զնաց նորից տխուր ու լուռ՝ սիրտը հազար մութազ ու սէր.
 երազն անցաւ—դո՛ւ մնացիր, սլաակերքը քո մնաց լուսէ,
 մէկ էլ իմ խեղճ սիրտը մնաց՝ Սայեաթ-Նովի սաղը ձեռին:

Բ.

Աշուղ Սայեաթ-Նովի նման ես երգ ու տաղ պիտի ասեմ,
երգեմ պիտի գիշեր-ցերեկ—ու սրտի խաղ պիտի ասեմ,
և էն սրտին, որ իր խորքում սիրոյ երգեր ունի ու սէր—
ես էն սրտին դրախտային մրգերի բաղ պիտի ասեմ:

Աստղ ու նկար շորեր հագած՝ դէմս ելար երազի պէս,
էշխո՛ւ կրակ՝ սիրտս էրեց անհամեսի մուրազի պէս,
անուշ հոտով սիրտս լցրիր—վարդաստանի, Շիրազի պէս,—
ինչ էլ լլի էշխոյ, գօղալ, —երգս ուրախ պիտի ասեմ:

Աշխարհը մէ բաղ է, գօղալ, —նստել ես դու բաղի մէջը,
վարդ ես բացւած՝ առաւօտուայ դրախտային շաղի մէջը,
ժամ ես զարձել տեսքով քո սուրբ՝ Հաւաքարի թաղի մէջը, —
սրտիս անուշ արտասուքին երկնային շնոյ պիտի ասեմ:

Էնքան լլի մէ մէ անգամ տեսքդ տեսնեմ՝ վարդ ես, գօղալ,
էս փուշ կեանքում սրտիս աւած անմահական զարդ ես, գօղալ,
էնպէս արտ, որ քեզ շասեմ՝ դո՛ւ էլ ինձ ^{պէս} մարդ ես, գօղալ, —
թէ լի քնա սիրտս քեզնով՝ ափսոս ու ախ պիտի ասեմ:

Գ.

Ես մէ անգին գօղալ տեսայ—Գիւրջատանի քաղաքումը,—
վղին՝ վարդեր ու խալ տեսայ—Գիւրջատանի քաղաքումը:

Կանգնել էր լէն քուշի մէջը, հագին առլաս ու խաս ունէր,
գլխին օսկի ու շալ տեսայ—Գիւրջատանի քաղաքումը:

Արեգակի շողքն էր ընկել վրէն օսկէ չիքիլի պէս՝
շրթերը խաս ու ալ տեսայ—Գիւրջատանի քաղաքումը:

Անցայ, կամաց աչքով արի, ուղի տեսմ՝ ջան ես, էլի,—
դէմս կեցած մէ սար տեսայ—Գիւրջատանի քաղաքումը:

Հիմի տխուր երգ եմ ասում, էշխա կրակ լլի տեսմ՝
անմահական մէ ես ար տեսայ—Գիւրջատանի քաղաքումը:

Գ.

Կուգեմ հիմի փչէ գուռնէն—հարբած ըլիմ մինչև էգուց,
ամեն մարդու ընկեր ըլիմ—ու բաց ըլիմ մինչև էգուց:

Փայտան նստած՝ անցնեմ քուչով, պատուհանից վրէս նայես՝
էշխդ անքուն սիրտս ընկնի—ու լաց ըլիմ մինչև էգուց:

Խելքս քամուն, հովին աւած՝ երթամ ընկնեմ գուքան ու բաղ՝
ընկերների սուփրին գինի ու հաց ըլիմ մինչև էգուց:

Երթամ—ուրիշ գողալների գիրկը դնեմ գլուխս առք՝
քո էգ անուշ, ազիդ տեքով հարբած ըլիմ մինչև էգուց:

Ե.

Ես մէ հարբած գութանդար եմ—գութանիս մէջ բան չմնաց,
ամենքի հետ սեղան նստա՝ սուլթան, վէզիր, խան չմնաց,
ամենայն տեղ գովքդ արի, տաղեր առի դրախտային—
էլ ի՞նչ ասեմ սիրեկանին՝ գողալ, հողի, ջան չմնաց:

Թողի ամենն, ինչ ունէի՝ կեանքս դարձաւ հովի նման,
էշխդ ելաւ, ճամբէս կտրեց՝ Հնդստանի ծովի նման,
հարբած՝ խալխի նոքար դարձայ աշուղ Սայեաթ-Նովի նման,
կարօտ կեցայ հրամանիդ՝ ուրիշ հրաման չմնաց:

Ես մէ հարբած գութանդար եմ—գութանիս մէջ բան չմնաց,
էլ ի՞նչ ասեմ սիրեկանին—գողալ, հողի, ջան չմնաց:

2.

Մէ ձեռիս արադ է, մէկէլը գինի.
Երկուսն էլ քո անուշ կենացը, գոգալ:
Կարօտ եմ սուլթանի, սիրեկան խանի—
անուշ է քո էշխի բերածը, գոգալ:

Սրտիս համար անուշ երազ ես հիմի,
քնիս մէջը տւած մութրազ ես հիմի,
հետու ես—Վարդապետան, Շիրազ ես հիմի—
չի լաւանայ էշխիդ էրածը, գոգալ:

Մէ ձեռիս արադ է, մէկէլը գինի.
Երկուսն էլ քո անուշ կենացը, գոգալ:
Էշխդ թող թուր ըլի, իմ սիրտն հանի—
անուշ կենա սրտիդ սիրածը, գոգալ:

է.

Խնջքան, զանգ են տալիս—իմ միտն ես գալիս՝
զանգի նման անուշ, հալալ ես, գոգալ:
Խնջքան գարուն բացւի—գու հետն ես գալիս՝
գարնան ջրի նման վարար ես, գոգալ:

Ինչ որ պանգուխտ ըլիմ աշխարհում հիմի,
անունիդ ուլխտ ըլիմ աշխարհում հիմի,
ասես թէ՛ թո՛ւխտ ըլիմ աշխարհում հիմի—
գարնան քամու նման տարար ես, գոգալ:

Ձեռ հասկանայ իսկի, թէ ի՞նչ ես արէ.
հազար մարդ ես էշխից գերեզման տարէ.
էշխդ օսկէ գրիչ, սիրտս դաւթար է—
արնէ գրով գրած գարար ես, գոգալ:

Ը.

Էսօր մեր փողոցով անցար—շրթերդ գինու թաս էին,
մազերդ օսկի—արբէշում, աչքերդ արմատ էին:

Փողոցում կեցած մնացի՝ աչքերս պղտոր ու գինով.
արեւ խաղում էր վրէժ՝ հազիւ շորերը խաս էին:

Մէ աչքով վրէս նայեցիր, ասի թէ՛ սիրով է էլի.
կարմրագուն կրակի նման աշտերդ կարմիր—կաս էին:

Ասի թէ՛ սաքերդ ընկնեմ, բայց սեղում կեցած մնացի՝
աշտերիդ կարմիր կրակին աչքերդ անմաս էին:

Թ.

Շրթերդ կրակով լիքը օսկէջրած չինի են, ջան,
խօսքերդ դրախտի խմիչք՝ անմահական գինի են, ջան:

Էսօր անում սուփրա ունեմ՝ էշխիցդ քէֆ պիտի անեմ.
ինչ կլի որ օթախս գաս—ու մէ անգամ լինի էն, ջան:

Փռել եմ խոս խալիչէքը, վրէն ծաղիկ ունեմ շարած՝
սաքիդ կարօտ սպասում են—շահնշահի, խանի են, ջան:

Աչքերս թող կրակ ըլին քո սուրբ չրադւանի համար.
դափ ու դուննէն հազրել եմ՝ մաքերդ ինչ բանի են, ջան:

Կուզեմ՝ հոգիս ճամբայ անեմ, սիրտս գնեմ ոտքերիդ տակ՝
սրտիցս արին է հոսում—ինչ որ ուզես կանի էն, ջան:

Ժ.

էլի գարուն կգայ, կբացւի վարդը,
սիրեկանը էլի ետրին կմնա:
կփօխեն տարիքը, կփօխի մարդը,
բլբուլի երգն էլի սարին կմնա:

Ուրիշ բլբուլ կգայ կմանի բաղը,
ուրիշ աշուղ կասէ աշխարհի խաղը,
ինչ որ ես չեմ տես—հա կտես վաղը.
օրերը ծուխ կլին, տարին կմնա:

Հազար վարդ կբացւի աշխարհի մէջը,
հազար աչք կթացւի աշխարհի մէջը,
հազար սիրտ կխոցւի աշխարհի մէջը—
էշխը կրակ կլի՝ արին կմնա:

Ուրիշ սրտի համար կհաւի խունկը,
կբացւի շուշանը, վարդերի տունկը.
գօգալը լաց կլի, կնկնի արցունքը—
գերեզմանիս մարմար քարին կմնա:

ԺԱ.

Հազար ու մէ գիրք կարդացի— խելացի գիրք չտեսայ,
հազար կնկայ գիրկն ընկայ— սիրեկան գիրկ չտեսայ:

Հասայ մինչև Փռանգստան, երգ ու տաղեր լսեցի—
Սայեաթ-Նօվի ձիւրքի նման երկնային ձիւրք չտեսայ:

Աղէքի հետ սեղան նստայ, նոքարի հետ խմեցի՝
մարդու տաճ խօսքերի մէջ արդար կշիռք չտեսայ:

Հազար գօգալ սիրտս էրեց ու հազարին սիրեցի—
քո սուրբ կրքից աւելի վառ ու անմար կիրք չտեսայ:

Ամեն բանից բար ու բէգար երեսս շուռ աւեցի—
բազերն ընկայ՝ քեզնից անուշ ու հասած միրգ չտեսայ:

ԺԲ.

Ամեն տեսակ երգ երգեցի—ամենից լաւ տաղն է էլի,
Սայեաթ-Նովի գրախառնին, անմահական խաղն է էլի:

Խնչքան էլ լէն դուքաններում ունեւորանգ մրգեր ըլին շարած,
անմահական մրգերի տեղ—շահնշահի բաղն է էլի:

Բախչի միջի ծաղիկները ինչքան էլ լաւ ջրով անես,
ծաղիկների ջուրը ուզած—առաւօտեայ շաղն է էլի:

Գնա կուզես Թոանգստան, ամենամեծ քուշէքը տես,
սրտիդ ուզած տեղը միակ—սիրեկանի թաղն է էլի:

Վայ քեզ, Չարենց, լաւ իմացի, տկանջ արա սիրեկանին,
ամեն բանից լաւ ու անուշ սիրեկանի դաղն է էլի:

ԺԳ.

Խնչքան կանչես ու տաղ ասես, խելքի արի՛ բաւ է, էլի,—
առանց անգին գողալի էլ աշխարհը լէն, լաւ է էլի:

Խնչքան էլ խառ, առլառ հագնի, երեսը ալ, գողալ անի—
աքլորների հոգի հանող սիրեկանդ հաւ է էլի:

Խնչքան էլ ֆանդ, դար ունենաս, ինչքան էլ թիբար ունենաս,
սիրող սիրտը ծովըն ընկած անօգնական հաւ է էլի:

Թէկուզ սիրի, գիրկդ ընկնի, գնես օսկէ դափազի մէջ—
կնկայ էշխը հոգի հանող անհանգչելի ցաւ է էլի:

Վայ քեզ, Չարենց, լաւ իմացի, խելքդ թող միշտ գլխիդ մնա,
ամենասուբբ խօսքը կնկայ արիւնաքամ դաւ է էլի:

ԺԴ.

Հիմի շատ են երգիչները—հոգու ուզած տաղը չկայ,
ամենայն տեղ խնդութիւն է՝ սրտի ուզած խաղը չկայ,
ուր ուս կոխես—բաղ է հիմի, շահնշահի բաղը չկայ,
ման եմ գալիս քուշա-քուշա—սիրեկանի թաղը չկայ:

Ես ճամ տեսնեմ երգս հիմի՝ ոչ դու կուգես, ոչ էլ ետղը,
թէկուղ անուշ տաղերիցս չէ հեռացէ Աստու մատը,
ոչ-ով ուզեց ականջ դնի, իմանայ սրտիս գանգատը՝
ուզում եմ սիրտս հովանայ՝ արտասուքի շաղը չկայ:

Ասում եմ թէ՛ թողնեմ սաղը, ամենքի պէս մարդ ըլիմ ես,
թէ որ վարդ եմ—փուշ ունենամ, անհամեմելի վարդ ըլիմ ես,
դուշմանի հետ դուշման ըլիմ, վատերի հետ վատ ըլիմ ես,
որ ինձ կարօտ ամեն անգամ տեսն՝ սուփրի աղը չկայ:

Մարդիկ են փուշ ու բէղամաղ—աշխարհը լէն, լաւ է, Չարենց,
մարդու խօսքը մարդու սրտին անհանգչելի ցաւ է, Չարենց,
ականջ արա ազդու խօսքիս՝ ասում եմ թէ բաւ է, Չարենց,
քեզ չեն սիրի, քանի որ քո սրտի տւած դաղը չկայ:

ԺԵ.

Երբ էս հին աշխարհը մտայ ես տաղով, սաղով-քամանջով
ինչ պիտի անէ աշխարհում էս անմիտ-անճարը, ասին:

Սակայն երբ խալխի քէֆերին ես անուշ տաղերս ասի՝
ամառայ մրդերի նման անուշ է քո բառը, ասին:

Բայց խալխի անսիրտ քէֆերին ես տխուր, մենակ մնացի,
ուզեցի թողնեմ—հեռանամ՝ հպարտ է ու չար է, ասին:

Եւ սրտի ցաւից յուսահատ ես մէ թառ օղի խմեցի—
Չարենցը ցնդած—գինեմոլ, հարբեցող-խմար է, ասին:

Ու ձմրան բուքերի միջին ես բոպիկ ու մերկ մնացի.
դուբը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մէջ ամառ է, ասին:

Ասի թէ՛ մարդ էք տխար դուք, չէք տեսնում մարմինս ծւատ.
Չարենցի հոգին տաղերում աննկուն, յամառ է, ասին:

Խնդացին, քրքջացին միայն, որ այդպէս մնացել եմ մերկ.—
դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է, ասին:

ԺԶ.

Բախչոյն անցան, բոյր շնչեցին, ափսոս որ վարդը չտեսան,
չոր ու դատարկ տեսքով տարւած՝ հոգեկան, բարդը չտեսան:

Երգիս ձայնին մէջլիան եկան, ու անտարբեր անցան նորից՝
սրտիցս իրենց սիրաւ գցած հոգեղէն կարթը չտեսան:

Նդայ ինչպէս ամառւայ արտ՝ քանի զեռ սիրա կար ու կրակ՝
ցողունների օսկով տարւած՝ անսահման արտը չտեսան:

Քոյր, սիրեկան, օտար մարդիկ, բարեկամ ու անծանօթ
մօտովս անցան՝ տաղերիս տակ կենդանի մարդը չտեսան:

ԺԷ.

Հիմի անտուն ման եմ գալիս, զիշեր ցերեկ երգ եմ ասում.
մոռցել եմ էշխիդ անունը, հարցնողաց՝ վերք եմ ասում:

Էշխդ հին եարա է, զօղալ, վառւում է կրակի նման—
ու էն եարէն տուղ ձեռքին շահնշահի ձեռք եմ ասում:

Պանգատ չունեմ սրտիս միջին. սիրեկան պատկերքիդ նման
սիրում եմ սրտիս մոխիրն՝ անմահական բերք եմ ասում:

ՓԸ.

Աշխարհիս մէջ ես էլ մէ օր կանցնեմ անդարձ ու կերթամ,
եւ չեմ նայի, չեմ պահանջի ես փառք ու վարձ—ու կերթամ:

Աշուղ Սայեաթ-Նօվի նման ես էն գլխէն իմացայ,
որ աշխարհում փուչ է ամեն երազ ու լաց—ու կերթամ:

Էն էլ, որ ես իմ վառ սրտով ու կարօտով սիրեցի—
քամուն կտամ, կմոռանամ ամեն մէ հարց—ու կերթամ:

Ու գօզալի պտտկերքը վառ, դէմքը մախմար ու անուշ
կմոռանամ... կառնեմ խոնաւ, հողէ մէ բարձ ու կերթամ:

Կեանքիս նման հեռու մարդիկ, անանուն ու անծանօթ,
ձեզ կթողնեմ երգերս այս՝ կեանքս երազ—ու կերթամ:

ՓԹ.

(Հայաստանին)

Հազար ու մէ վերք ես տեսել—էլի կտեսնես,
հազար խալխի ձեռք ես տեսել—էլի կտեսնես:

Աշնան քաղած արտի նման՝ հազար գոհերի .
չհաւաքած բերք ես տեսել—էլի կտեսնես:

Գլուխդ չոր քամուն տւած պանդուխտի նման
հազար տարւայ հերք ես տեսել—էլի կտեսնես:

Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Յովնաթան—
ինչքան հանճար, խելք ես տեսել—էլի կտեսնես:

Քո Չարենցին լեզու տւող երկիր Հայաստան,
հազար ու մէ երգ ես տեսել—էլի կտեսնես:

Ի.

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
մեր հին սագի ողբանազ, լացակումած լարն եմ սիրում,
տրնանման ծաղիկների ու վարդերի բոյրը վառման,
ու նաիրեան աղջիկների հեղածկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
արևն ամռան ու ձմռան վիշապաձայն բուքը վսեմ,
մթում կորած խրճիթների անհիւրընկալ պատերը սև
ու հնամեայ քաղաքների հազարամեայ քարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ—չեմ մոռանայ ես ողբաձայն երգերը մեր,
չեմ մոռանայ աղօթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
ինչքան էլ սուր սիրտս խոցեն արիւնաքամ վէրքերը մեր—
էլի ես որը ու արնավառ իմ Հայաստան-եւորն եմ սիրում:

Իմ կարօտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հէքեաթ չկայ.
Նարեկացու, Քուչակի պէս լուսապրակ ճակատ չկայ.
աշխարհ անցիր՝ Արարտաի նման ճերմակ գագաթ չկայ.
ինչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս սօրն եմ սիրում:

1920—1921

Երեսն—Մոսկով

ԽԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ Օ Է Տ

Թե՛ համար չարը դառնում է բարի,
անգոյն առօրեան—մոգական երազ,
սիրում եմ բոլոր գոյներն աշխարհի՝
երկրային հեռուն ու աստղերն անհաս:

Եւ շրջիկների երգերը անհոգ,
վազքը կառքերի, փողոցի ուղին—
դառնում են յանկարծ հեռաւոր ցնորք,
որ երազել է պօէսի հոգին:

Երբ համբուրում եմ շրթերը կնոջ,
շրթեր, որ հազար մարդ է համբուրել—
հաւատում եմ ես, որ նրանք քրոջ
շրթունքներ են կոյս—ու մաքուր են դեռ:

Ո՞վ կհասկանայ պօէսի ուղին...
Երբ փողոցներում թափառում է նա—
նրա թեւաւոր, աստղային հոգին
հախրում է հեռու աստղերի վրայ:

Ո՞վ կհասկանայ, թէ ինչո՞ւ է նա
համբուրում նեխած շրթերը կնոջ,
երբ նո՞յն վայրկեանին ազօթում է նա
սուերի առաջ հեռաւոր քրոջ:

Ո՞վ նրա տրտում երգը կլսի,
երգը խելագար, կամ ցնդած մարդու:
Բայց նա մեռնելիս կժպտայ, կասի.
— Օրհնութիւն քեզ, կեանք: Հրաշք էիք դու...

1916

Գ Ի Շ Ե Ր Ա Պ Ա Հ Ը

Ես արթնանում եմ, երբ քնում էք դուք
և գիշերն ամբողջ անխոնջ ու անքուն,
երբ փողոցներով չի անցնում ոչ-ոք—
քայլում եմ, քայլում անկիւնից-անկիւն:

Քայլում եմ և լուռ մտածում եմ ես,
որ չունեմ ձեզ պէս ոսկիներ, գանձեր,
բայց գիշերների մենակութեան մէջ
ձեր ոսկիների հսկողն եմ դարձել:

Հսկում եմ, հսկում, որ ոչ-ոք չգայ
և չգողանայ ոսկիները ձեր:
Հանդարտ է շուրջս՝ ձայն, շշուկ-շկայ.
— իմ կեանքն էլ, միթէ, այսպէս չի՞ անցել:

Ես չեմ շտապել առաւօտ ծէգին,
ոսկի չեմ դիզել, չեմ գանձել ոչինչ.
Նայել եմ միայն հեռու աստղերին,
որ ահա նորից հեզ թարթում են ինձ:

Նայում եմ լուսնին: Հսկում եմ արթուն:
Աշխարհը—անհուն, աստղազարդ տեսիլ:
Իսկ երբ արթնանաք—կգնամ ես տուն—
և անուշ, անուշ կքնեմ ես էլ...

1916

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԱՆՑՈՐԴԻՆ

Մենք երկուսս էլ, մենք երկուսս էլ անվերադարձ աշխարհում
ապրում ենք, կանք, գնում ենք—ուր. միևնույնն է մեր հեռուն:

Կանգնիր, անցորդ: Կանգնիր: Նայենք: Նայենք իրար—գուցե՝ մենք
յանկարծ ժպտանք՝ չճանաչած մի բարեկամ ճանաչենք:

Կանգնիր, կանգնիր. ուր ես վազում, ուր ես գնում դու արագ.
աչքերիս մէջ գուցե՝ գտնես ոսկեժպիտ մի կրակ:

Դու ուրախ չե՞ս, որ ապրում ենք—ու հանգիպել ենք իրար.
ուր ես անցնում անվերադարձ, որպէս անդարձ ճանապարհ...

Նս էլ կանցնեմ—տրտում, մենակ,—ու կգնամ իմ անծայր
երազ-ճամբան, որով դու էլ այս իրիկուն կոյր անցար:

Դու կոյր անցար, չնայեցիր ու հեռացար մշուշում.
բայց ես երկնք քո անծանօթ, օտար դէմքը կյիշեմ:

Կյիշեմ, որ դեգերումիս ճանապարհին, որպէս յուշ,
մէկը անցաւ. իրիկուն էր. իրիկուն էր ու մշուշ...

1916

ԴԱՀԻՃԸ ԿԱՐՄՐԱԶԳԵՍՏ

Դու կգնես. քո գլուխը իմ բարձին՝
սև հիւսերդ ջրերի պէս թափած վար,
սրտատրոփ, լուռ կսպասես հարւածին՝
գոհ, անտրտունջ, երազօրէն—հոգեվար:

Կիջնի, կիջնի իմ հարւածը մահաբեր—
կոյր հարւածը կարմիր հագած դահիճի.
դուրսը քամին կծիծաղի անտարբեր
ու մութը, չար, կիտանայ ու կաճի:

Բայց մեռնելուց առաջ, վերջին վայրկեանին,
դու կտեսնես և կժպտաս հպարտ, գոհ,—
որ դահիճը, այդ կարմրագգեստ վայրենին
համբուրում է ջղածգետդ ձեռքը քո...

Յիշում եմ. հսկեց զանգը միջանցքում
և ես ներս մտայ հին սենեակը քո:
երկար քայլեցի անկիւնից—անկիւն:
Յետոյ դուրս եկայ՝ քեզանից դժգոհ:

Յետ դարձայ կրկին: Այնքան մութ էին
խօսքերդ այն գիշեր: Մութ ու առօրեայ:
Եւ մի ժամ յետոյ հեռացայ կրկին՝
արիւնի հետքեր ձեռքերիս վրայ:

Եւ չհասկացաւ ոչ-ոք այն գիշեր,
որ սենեակիդ մէջ սպանել են քեզ:
Միայն իմ հոգում մշուշ էր իջել
և սուերդ ինձ մինչև լոյս հոկեց:

Շ Ա Մ Ի Ր Ա Մ

Իրիկնային փողոցում ես տեսայ նրան:
 Նա — ներկա՞ծ պչրուհի, գուցէ — Շամիրամ:

Եւ ինձ աւելց հինաւուրց յուսուքները նա.
 Երկու համբոյր — փողոցում, մայթերի վրայ:

Եւ հմայեց ու տարաւ նա զդեակը հին:
 Կապտերները ժպտալով ճանապարհ դրին:

Եւ, չնայած որ անթիւ դարեր են անցել՝
 Նոյնն է երազը նրա, լոկ մարմինն է — ծեր:

Նոյնն է խօսքը, կարծես նոր արեւոյ աղջկայ —
 միայն մարած աչքերում էլ հրդեհ չկայ:

Կան անտես հիւրեր: Գալիս են նրանք
 անխօս ու անձայն, լուսթեան ծոցում:
 Գալիս են, ապրում ու անցնում նրանք՝
 ոչ գուռ ենք բացում և ոչ գուռ գոցում:

Ոչ անուն ունեն, ոչ ստեր, ոչ ձայն:
 Գալիս են, ապրում և անցնում են լուռ:
 Եւ ինչո՞ւ եկան, և ինչո՞ւ անցան —
 մենք չենք իմանում աշխարհում անդուռ:

Միայն մի անծայր ու խոր տխրութիւն
 երբ փռում է իր թեն ամենուրեք —
 զգում ենք յանկարծ կարօտով անհուն,
 որ մէկը անդարձ անցել է երեկ...

Կեանքը—երգի, երկնքի պէս անհուն, անհուն,—
 Կեանքը—կորած աստղերի պէս հազարամուկ:

Կեանքը—կրակ ճահիճներում՝ կայ ու չկայ,—
 Կեանքը—ճամբորդ, սպասուած հիւր, որ պէտք է գայ:

Կեանքը—երգի, երկնքի պէս անհուն, անհուն,—
 Կեանքը—կորած աստղերի պէս հազարամուկ...

Հմայում է ինձ լապտերը փողոցային,
 հմայում են մանրկէները անմարմին,
 հմայում է պատուհանի ջահը թարթող,
 հմայում են հայելիները կախարդող.—
 ու փողոցում թերթեր ծախող զւարթ տղան,
 և կառքերն ու վազքը նրանց յաւերժական,
 և զանգերի երգը տխուր ու հոգեթով—
 դժբաղատեան՝ իր ճանձրոյթով ու հէքեաթով:

Փողոցների մէջ կայ մի անանուն,
 անըմբռնելի կարօտի ճախրում:
 Լսում ես, զգում, բայց չես հասկանում
 և չես ըմբռնում կարօտը ճախրուն:
 Կառքերի վազքում, ղէմքերում օտար,
 անհասկանալի հայեացքում կանանց—
 Թւում է յանկարծ, թէ անա գտար
 յաւերժականի ուրւականն անանց:
 Ճախրում է մէկը փողոցի վրայ՝
 հզօր ու անմահ, որպէս ժամանակ—
 Իսկ ինքդ կարծես սուերն ես նրա՝
 մի անմիտ ժպիտ, մի ախուր հանաք:

Երգում է քաղաքն իր երգն առօրեայ,
 Իսկ ես—մտածկոտ, տրտում ու լռին—
 Կանգնել եմ անա կամուրջի վրայ
 և նայում եմ յորդ, հեռացող ջրին:
 Նայում եմ տարւած, մոռացւած, անթարթ:
 Վազում են, վազում ջրերը անվերջ:
 Փրփուրի միջից անա մի նայեալ
 ինձ ձեռքով արաւ և իր մօտ կանչեց:
 Որպէս մանկական կապոյտ երազում—
 Խառնուեց անա ճերմակ փրփուրին.
 և թւում է, թէ կամուրջն է վազում,
 որ հասնի անդարձ հեռացող ջրին...

Դուրսը, հեռուում—դաշտեր ու դաշտեր:
Երկինքը—կապույտ, արևոտ, անհուն:
Ամպի պէս կախւած օրօրւում է դեռ
կեանքը աշխարհում:

Դաշտեր ու դաշտեր: Ու արեւը—վառ:
Եւ կեանքը—անտես: Զգում եմ, որ ես
դուրս կգամ հիմա, կնկնեմ ճանապարհ:
Միթէ չգիտես:

Կգնամ, մենակ: Կեանքում, աշխարհում:
Եւ մի իրիկուն կմթնի ուղին:
Ու կվերջանայ երկրային հեռուն—
ճանապարհը հին:

Ճանապարհը—գորշ, փոշապատ, ոլոր:
Տերեթափ ծառեր:
Խամբել են գարնան գոյները բոլոր:
Այդ սիւ է արեւ:

Պարզ, մարմանդ մշուշ: Նայում եմ հեռուն—
դաշտերին, ծովին:
Ինչո՞ւ է հոգին արամօրէն լռում
աշնան օրերին:

Ու գոյները—գորշ, ու գունատ, ու պաղ,
ու անմխիթար:
Եւ հոգի կրծող կսկիծը, որ՝ ան—
անդա՞րձ չգտար...

Այս շէնքի վրայ ամպերն են թառել,
 քնել է քամին:
 Մէկը սենեակում կրակ է վառել
 իրիկնաժամին:

Կրակ է վառել, իսկ ինքը չկայ:
 Գատարկ սենեակում
 կախած է պատկերն օտար աղջկայ:
 Լոյսը չի հանդում:

Քնել է քամին: Ու ծառերը մունջ
 նիւրհել են մութում:
 Իսկ կրակը գեռ վառւում է անխոնջ
 ներսը—մշուշում:

Կարինէ Բոթանճեանին

Գիշերը յոգնած նստել սենեակում,
 նայել շորերիդ ծալքերին լուսէ,
 ու լոյսը լամպի տխրութեամբ անհուն
 գուրգուրէ հոգուս յոգնութիւնը սե:

Լուռ, անձայն նստել մի բաժակ թէյի:
 Ձեռքերդ դնես յոգնած ծնկերիս:
 Ու հին, փոշապատ հայելիների
 մշուշում կորած՝ խոնջանայ հոգիս:

Եւ սիրել բախտը՝ պարզ ու երկրային,
 ցանկութիւններդ մեզկ ու կամակոր—
 և սիրել քո տան փոշապատ ուղին
 և սենեակներիդ տխրութիւնը գոյ...

ՄԱՐՄՆԻՍ ԵՐԱԶԸ

Շոգ վերմակի տակ զոդում է, տենդում մարմինս այս գիշեր:
 Գնել չեմ կարող: Աչքերիս առաջ ցատկում են, պարում:
 Աչքերիս վրայ մի հրաբորբոր մշուշ է իջել—
 Իսկ նրանք գալիս ու դառնում են ցոփ, խայտառակ պարում:

Գալիս են նրանք, անվերջ շարքերով անցնում են նրանք,
 աչքերիս առաջ հորվւում են դիրք, տուփասէր ձևեր:
 Մօտենում են ինձ, համբուրում են շոգ շրթերով կրակ
 ու կրկին—կրկին ոգի են դառնում ու ցատկում են վեր:

Եւ նորից, նորից մօտենում են ինձ ու գրկում են ինձ,
 երակներիս մէջ լցնում են գինի, մարմինս խանձում:
 Եւ երբ զոգացող ձեռքերով նրանց սեղմում եմ կրծքիս—
 դառնում են կրկին անմարմին ոգի—կրքերի ցանցում:

Եւ վերմակի տակ զոդում, գալարւում ու տենդում է դեռ
 մարմինս՝ թաղւած քրախնքում, ինչպէս տիղմերում ճղճիմ:
 Իսկ հոգուս խորքում աղօթում է դեռ մէկը, կարեմէր,
 որ չկատարւի մարմինիս կարմիր երազը վերջին...

Դուքսը քամին թափառում է, անմխիթար դեգերում:
 —Նի մոռանայ պօէտը քեզ, չի մոռանայ քո հեռուն:

Նա մենակ է ու ծեծում է փակ դռները հիմա նա.
 —Քեզ մօտ կգայ, երբ էլ ոչ-ոք իր դռները չբանայ:

Ուսու... նւոցը աշնան քամու, սրպէս լացը ջութակի.
 —կրկին կգայ, քո մենտուր պատուհանը կթակի:

Կէս գիշերին ու վերանայ իր դռները քամու գէմ.
 —դու գրկաբաց ինձ կնդունես, դու կնդունես, ես գիտեմ:

Կու... կուշ եկաւ աշնան քամին պտտերի տակ անկիւնի.
 —յոգնած սիրտս քո մեղաւոր գլուխներում կքնի...

ՈՒՐԻԱԿԱՆՍ ՆՈՐ

Ձեմ ճանաչում ինքս ինձ,
 չգիտեմ ես էլ,
 թէ ով իվեց ինձանից
 մի սակի տեսիլ:
 Փողոցներում—հեռաւոր
 ու անմարդ, ու մութ,
 ես տեսնում եմ դէմքս նոր,
 անորոշ ու սուտ:
 Ես տեսնում եմ՝ մշուշում
 մէկը, մոլորած,
 դեգերում է ու յիշում
 դարբանները բաց...
 Դարբանները, որ երեկ
 փակեցին մթում,
 որ շրջիկը, յուսաբեկ,
 չդառնայ էլ տուն...

Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ
 ու կըվերջանայ իմ կեանքի ուղին:
 Մոռացած բոլոր երգերս լուսէ՝
 կյանքս ինձ էլ արգաւանդ հողին:

Արեւ նորից անհող կխնդայ
 փռելով չորս դին լուսաւոր գանձեր:
 Եւ մայրս անգամ էլ չի հաւատայ,
 որ եղել եմ ես, ապրել ու անցել:

Եւ գերեզմանս երբ փակւի ինձ հետ—
 կեանքս կմոռնան, սիրոյ խօսք կասեն,—
 և անցած կեանքս կդառնայ լեզենդ՝
 օրերիս նման անդարձ ու վսեմ...

ՀԵՌԱՅՈՒՄԻ ԽՕՍՔԵՐ

Իմ աչքերի մէջ աշխարհն կրակներ եմ մարել ես
և հոգուս մէջ, յուսահատ, աշխարհն ատուղեր եմ մարել:
Կեանքս, որ յուշ է զարձել, հեռանալիս չանիծես.
Կեանքս կանցնի, կմարի—բայց երգս կայ, կապրի գեո:

Կեանքս կանցնի, կմարի, որպէս կրակ ճանիծում՝
աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անշոյս:
Երգերիս մէջ—զու գիտե՛ս—ինձ ոչ-որ չի ճանաչում՝
կարծես ուրիշն է երգում կապոյտ կարօտը հոգուս:

Յաւիտեան գոց ու անխօս՝ թափառել եմ ու լռել.
ոչ-որ, ոչ-ո՛ք չգիտե՛՜ս արդեօք ինչ է կեանքս, ես.
միայն գիտեն, որ կեանքում ինչ-որ երգեր եմ գրել,
ինչպէս գիտեմ, որ դու կաս, որ սիրում է մէկը քեզ:

Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսաւոր,
քո աչքերի, քո գէմքի տխրութիւնը սրբազան.
Կեանքս թողած անհունում—ես երգել եմ սէրը խոր
ու կարօտը թեւերիս, որ երբէ՛ք քեզ չհասան...

Մօտենում է, քո՛յր իմ, ախ, իրիկունս միգամած.
ես ի՞նչ անեմ, որ հոգիս չհեծկտայ կարօտից.
Ի՞նչպէս, ի՞նչպէս ընդունեմ կեանքիս բաժակը քամած,
որ ձեռքերս չղսղան, որ օրերս ներէն ինձ:

Գուցէ՛ յանկարծ կառկածեմ, չհաւատամ ինքս, ես,
ու սուտ թւայ իմ հոգուն քո կարօտը սրբազան...
—Ի՞նչ էլ լինի, քո՛յր իմ, քո՛յր, հեռանալիս չանիծես
խեղճ կարօտը թեւերիս, որ երբէ՛ք քեզ չհասան...

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինւած անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով
և Կարինէ Քոթանճեանին անգամ չասած մնաս բարով—
անց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Անց եմ կենում. շուրջս—մարդիկ, շուրջս գէմքեր հազար-հազար.
շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կեանքն անհաւասար.
և ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թէ ո՞ւր հասար,—
գէմքերը, ախ, բուժ են այնպէս՝ կարծես շինւած են տապալրով:

Գորշ, տաղակալի ու խելագար երգ է կարծես այս կեանքը մի.
ինչ-որ մէկի սրտում բացւած—վերք է կարծես այս կեանքը մի.
և ո՞ւմ համար—էլ ո՞ւմ համար կարօտակէզ երգէ հիմի
սիրտս՝ լցւած տարիների սեղմ արձիճով ու կապարով:

Բայց շուրջս թող որքան կուգէ աշխարհը այս խնդա, ցնդի—
ես—հաշմանդամ ու խելագար ու յաւիտեան վտարանդի՝
գէպի երկինք պիտի գնամ, գէպի եզերքը Ամենտի—
իմ բարձր, հին ու աստղային երազների ճանապարհով...

Աւել տմեհ մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ աչքս է հեռուն.
Թէ Կարինէ Քոթանճեանին տեսնէք Կարսի վտղոցներում—
ասէք նրան՝ Չարենցն ասաւ—մնաս բարով, մնաս բարով...

Ոսկեփրփուր, ոսկեպուրպուր,
 փռեմ չորս գին, թափեմ բուռ-բուռ
 երգերը իմ հրահրան.
 երգով խնդամ թող բուրբին,
 որ մեռնելիս զգամ, որ իմ
 օրերն անցան ու չկորան:

1919

ԱՇՆԱՆԱՅԻՆ

1

Արևն արծաթել է ամպերը թիթեղ.
 լոյսից սփրթնել են ամպերը տեղ-տեղ:

Գանդաղ բարձրանում է արևն արծաթե—
 սառցի պէս հալչում է երկինքը կաթե:

Ու պաղ հիացքով մի, կարծես թէ իզուր,
 սահում են լոյսերը սարսուռ առ սարսուռ:

1919

2

Աշունը թափում է թերթերս հիմա,
ու թօնը թրջում է արտերս հիմա:

Օ, սիրտ իմ, դու լուռ ես ու երգդ տխուր է.
բոլոր իմ յոյսերը ջարդել ես հիմա.

գարնան պէս, ծաղկանց պէս անցել է քո հուրը
ու հովը քաղում է վարդերս հիմա...

1919

Ա Ն Ք Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Դուփում են, դոփում են, դուփում են ձիերը,
մթի մէջ դուփում են, խփում են պայտերը,
պայտերը խփում են, խփում են հողին.—
անծայր է գիշերը, անյայտ է ուղին:
Գնում են, գնում են, գնում են ձիերը,
մօտիկ են, հեռու են, դուփում են պայտերը—
պայտերը դուփում են քունքիս մէջ հիմա.—
—անյայտ է աշխարհը՝ անցնում է ու մահ...

1919

*

Աշունը դեղնաթուխ նստել է դռանը:
Մրսած ու կծկւած՝ դողում է, վայում է:
Երկինքը թխպակալ կարծես մի բերան է՝
ուզում է կլանել կանաչը, գարունը:

Մրսած ու կծկւած դողում է իմ շունը:
փարւել է սաքերիս՝ մենակ է, տխուր է:
Աչքերը լացկումած, քաղցած են ու խորը՝
աչքերը աչքերիս ասում են՝ աշուն է...

Աշուն է, օ, շուն իմ, աշուն է, աշուն է,
դուրս, փաթաթւիր իմ ստեղծին հիմա.
քաղցած, ամենի է գայլի պէս աշունը—
աշունը մշուշ է, մարմնք է ու մահ...

*

Խաւար է, գիշեր է: Մթում սպասում եմ:
Սենեակս անլոյս է ու լուռ է գիշերը:
Գիշերը մթի մէջ հասում ու խօսում է՝
կասկածը ու անը իմ սիրտը մաշել են:

Լուել եմ: Լսում եմ: Անծայր է գիշերը:
Իսկ մութը մանւում է, մանւում է, մանւում է:
Իսկ սիրտս բոլոր այն աները յիշել է.
ահով ու մահով, ախ, լցւել է իմ տունը:

Պոկում են ձերպերը: Մթում քրթմնջում են:
Անտես փափսում են—ու սիրտս լսում է:
Գաղանիք է ու ան է ամեն մի հնչիւնը—
մահու պէս դժուար է անլոյս սպասումը...

Կարմիր են գալիքի լոյսերը ու մուգ են.—
կարմիր են, կրակէ,—բայց ախ անամոք են:

Եւ ո՞վ կկանչի նրանց, որ կեանքում այս
մենակ են, տխուր են, տխուր ու անօգ են...

Նւում է սրտիս մէջ ծանօթ մի մորմոք հին.
—լոյսերը հեռու են, անփոյթ են, անհոգ են...

Ի՞նչ էս արդեօք, չգիտեմ, էս չգիտեմ մինչ հիմա,
գիտեմ միայն, որ դու կաս, անհերքելի, որպէս մահ,
ու անխուսափ, որպէս օր, որ բացւում է ու մարում—
եղել էս դու, այժմ կաս—ու կլինես աշխարհում:
Օրերիս պէս, որ անցան—անմխիթար դու անցար,
արևի պէս այսօրւայ—դու վառել էս իմ ներկան,—
և էս գիտեմ, որ կգաս՝ մխիթարիչ ու պայծառ—
օրերի պէս, որ դեռ նոր պիտի բացւեն, պիտի գան:
Օրերի պէս գոյնզգոյն—բացւում էս դու ու մարում,
նոր էս ընդմիջա ու անդարձ՝ յաւերժօրէն քաղցր, խոր.
և էս գիտեմ՝ կլինես դու, պայծառ ու լուսաւոր—
քանի ապրում եմ էս դեռ, քանի էս կամ աշխարհում:

*

Ազմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարօտ,
ազմկում է, որպէս խուլ ու հեռաւոր մի քամի,
ազմկում է մինչև լոյս, գանդատում է վարանոտ
ու ժամերն է հաշւում իմ, վայրկեանները միառմի:

Գիշերի մէջ լռանիստ ազմկում է անորոշ,
խուլ ծփում է իմ սրտում և ուղեկում և հոգում.
ու թւում է, թէ նրա երգը ուրիշ, մի ուրիշ
աշխարհից է մօտենում հեռուներին իմ հոգու:

Զարթնում է մէջս յանկարծ հագարամեայ մի քառս,
ծփում է յորդ, տարուբեր, ովկիանի պէս վարար,
ժամանակի պէս անդէմ, մշտահոլով, մշտահոտ,
զառանցանքի պէս շփով ու անհատաւոր ու խաւար:

Հնչում է մերթ, որպէս երգ անծայրածիր մշուշում,
հիւանդ մանկան պէս անօգ՝ մերթ գանդատում է կամաց,
ու ունում է մերթ ախուր, յուսակաւոր, որպէս շուն՝
լուռ, լուսնկայ ու անդորր գիշերի մէջ միգամած:

Եւ լսում է իմ հոգին երգը այդ մութ քառսի,
շփով աղմուկը նրա, ոռնոցները կատաղի. —
և ես գիտեմ, որ այդպէս պիտի իմ կեանքը հոսի
մինչև մարի յաւերժի ովկիանի մէջ աղի...

1919

Կարմիր են գալիքի լոյսերը ու մուգ են.—
կարմիր են, կրակէ,—բայց ախ անամոք են:

Եւ ո՞վ կկանչի նրանց, որ կեանքում այս
մենակ են, տխուր են, տխուր ու անօգ են...

Նւում է սրտիս մէջ ծանօթ մի մորմոք հին.
—լոյսերը հեռու են, անփոյթ են, անհոգ են...

Խնչ ես արդեօք, չգիտեմ, ես չգիտեմ մինչ հիմա,
գիտեմ միայն, որ դու կաս, անհերքելի, որպէս մահ,
ու անխուսափ, որպէս օր, որ բացւում է ու մայրում—
եղել ես դու, այժմ կաս—ու կլինես աշխարհում:
Օրերիս պէս, որ անցան—անմխիթար դու անցար,
արևի պէս աշտօրւայ—դու վառել ես իմ ներկան,—
և ես գիտեմ, որ կգաս՝ մխիթարիչ ու պայծառ—
օրերի պէս, որ դեռ նոր պիտի բացւեն, պիտի դան:
Օրերի պէս գոյնզգոյն—բացւում ես դու ու մարում,
նոր ես ընդմիջա ու անդարձ՝ յաւերժօրէն քաղցր, խոր.
և ես գիտեմ՝ կլինես դու, պայծառ ու լուսաւոր—
քանի ապրում եմ ես դեռ, քանի ես կամ աշխարհում:

Կ Ա Ր Պ Տ

Մի ոտս աղջկայ

1

Հիմա ես հեռու եմ, հիմա
 օրերը ուրիշ են արդէն.
 անցած հրապոյրն էլ չկայ,
 անցած տխրութիւնը այն թէն:
 Ու փողոցները չկան,
 ու կրակները հիւանդ.
 կարմիր փոթորիկել է ներկան—
 վառել է այլ կարօտ ու խանդ:
 Բայց ես, քո սիրով օրօրուն,
 հրեղէն օրերում այս անգին,
 յաճախ երազում եմ քո հեռուն,
 քո գորշ հմայքները այն հին:
 Նրազում եմ փողոցները տաճուկ,
 քո ծախւող հմայքները անթով—
 ու ճշում է հողիս մանուկ՝
 յուսահատ, շրջմուխ, անտուն...

2

Կապոյտ իրիկուն էր իջնում—
 ելնում էի փողոց:
 Գալիս էիր միշտ դու՝
 լուռ, յոգնաբեկ, անխօս:
 Աչքերիդ մէջ միշտ մի
 մեղքի փայլ էր լինում.
 ու շորերդ—խամբած,
 ու թթւած բոյր գինու:
 Ոչ խօսք էր պէտք, ոչ վէճ,
 ոչ ակնարկներ զգուշ:
 շրջում էինք անվերջ
 փողոցներում մշուշ:
 Իսկ յոգնելիս—էժան
 հիւրանոցում մի մութ
 քնում էինք մէկտեղ,
 սրպէս եղբայր ու քոյր:
 Մոռացել էս արդեօր
 գիշերները այն մեր...
 ես քեզ յիշում եմ միշտ,
 ես քեզ սիրում եմ դեռ:

1920

*

Գարունը սիրտ է յուզում—հուր ու հրդեհ է վառել,
 ջինջ օրերի երազում—հուր ու հրդեհ է վառել:

Փռել է բոյր ու շշուկ ու զարկել է ծիածան՝
 հորիզոնից-հորիզոն՝ հուր ու հրդեհ է վառել:

Գարնան բոյրի պէս անուշ՝ անմխիթար իմ հոգում
 այսօր թավիչ քո լեզուն հուր ու հրդեհ է վառել:

Դու եկել ես գարնան պէս ու զարկել ես ծիածան.
 սիրտդ իմ սիրտն է ուզում—հուր ու հրդեհ է վառել:

*

Դու իմ գարնան առաւօտ—ինչպէս կանչեմ քեզ հիմա.
 դու հարազատ, սրտիս մօտ—ինչպէս կանչեմ քեզ հիմա:

Եւ դու, ոսկի իմ ամառ, հրանման, հրավառ,
 ամռան կէսօր դու իմ տօթ—ինչպէս կանչեմ քեզ հիմա:

Եւ դու, ոսկի իմ աշուն, աշնան մրդի պէս հասած,
 անուշացած մրդի հոտ—ինչպէս կանչեմ քեզ հիմա:

Դուք բոլորդ հեռացել, մնացել եմ հիմա ծեր
 և իմ սրտով արիւնոտ—ինչպէս կանչեմ ձեզ հիմա:

Ահա սրտին իմ արդէն մօտեցել է մի պառաւ
 ու բերել է մահւան բօթ—ինչպէս կանչեմ ձեզ հիմա...

* //

Հիմա յիշում եմ բոլոր օրերս հին ու անցած,
լուսազարդ ու թևաւոր օրերս հին ու անցած:

Եւ թւում է, թէ նորա կարկաչելով պիտի գան—
մանուկների նման հուր—օրերս հին ու անցած:

Բայց գալիս են նորա լուս, ու յոգնաբեկ, ու տխուր,
անցորդների պէս մոլոր—օրերս հին ու անցած:

Պանդուխտների նման այն, որ հեռացել են վաղուց—
տուն են դառնում նորից նոր—օրերս հին ու անցած:

Եւ նստում են, յոգնաբեկ, ահա սրտիս վրայ ծեր
ու յորանջում են տխուր—օրերս հին ու անցած:

Եւ չեն կանչում ոչ-որի. մատրում են ու լուս.—
քնն են փնտրում ու անգործ օրերս հին ու անցած:

ՄՕՐՍ ՀԱՄԱՐ ԳԱԶԼԻ

Յիշում եմ դէմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
լոյս խորշոմների ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:

Ահա նստած ես տան դէմ ու կանաչած թթենին
դէմքիդ սուեր է գցել, մայր իմ անուշ ու անգին:

Նստել ես լուս ու տխուր, հին օրերն ես յիշում այն,
որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:

Եւ յիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց—
նւր է արդեօք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:

Ո՛ւր է արդեօք հիմա նա, ողջ է արդեօք թէ մեռած,
և ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Եւ երբ յոգնած է եղել, և երբ խաբւել է սիրուց—
նւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Մտորում ես դու տխուր և օրրում է թթենին
տխրութիւնը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին:

Եւ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մէկ-մէկ
քո ձեռքերի վրայ ծեր, մայր իմ անուշ ու անգին...

«Ք Ո Վ Ա Ր Դ Ա Ր Ա Ն Ը»

Նաարդի համար

Քո աչքերի պէս խոնաւ ու լազուր լճի
հեռուների նման բիլ իմ հոգում հիմա
տխրութիւն է ու թախիծ, գառնութիւն ու մահ:

Եւ ես ուզում եմ, որ այդ տխրութիւնն աճի
ու խտանայ, մշուշի պէս կապոյտ ու թէն—
որ ես ոչինչ չտեսնեմ մշուշից բացի...

Սակայն նստել եմ, տխուր, իրիկւայ մէզին,
ու տւել եմ մատներիս վարդարանը քո.
մտորում է գանգերի յուսահատ հոգին
հեռուներում՝ ամպերի տխրութեան ներքոյ:

Ու վարդարանը քո հին՝ հեռաւոր յուշի
ճառագայթի նման բիլ՝ իմ լազար հոգում
թափում է հին կարօտի մի կապոյտ փոշի...

Ընկնում են, մեղկ ու մէկ-մէկ, հատիկները բիլ
ու հոսում են մատներիս տխրութեան միջով
ջրերի պէս անձրիի՝ պարզ, կաթիլ-կաթիլ:

Ի՞նչ է ուզում մատներից իմ տխուր ու մեղկ
քո վարդարանը հիմա, երբ հեռու ես դու,
որպէս անցած կարօտի մոռացած մի երգ:

Եւ ինչո՞ւ եմ ես նստել իրիկւայ մէզին
և ձեռքս առել յակինթէ վարդարանը քո,
երբ մտորում է հեռուն գանգերի հոգին
իրիկնային մոխիրէ ամպերի ներքոյ...

Ախ, թո՛ղ հոգուս լազարէ գառնութիւնն աճի
ու խտանայ, մշուշի պէս խոնաւ ու թէն,
որ ես ոչինչ չտեսնեմ մշուշից բացի:

Սակայն գանգերը հեռուն մտորում են դեռ
հեռագհետէ ծանրացող ամպերի ներքոյ—
ու երգում է մատներիս կարօտի երգեր
հնամենի, յակինթէ վարդարանը քո...

Մ Ա Ր Ի Ո Ն Ե Տ Կ Ա

կամաց, կամաց, կամաց, կամաց,
 ոտքերն հողին, հողին, հողին՝
 եկաւ-գնաց, եկաւ-գնաց,
 գունատ, դեղին, գունատ, դեղին:

Ձեռքը շարժեց—մէկ վեր, մէկ վար,
 ոտքը խփեց—մեռել, մեռել,—
 առաջ եկաւ դժւար, դժւար,
 ձեռքը շարժեց—մէկ վար, մէկ վեր:

Ահա, ահա—թեքւեց, թեքւեց,
 կնկնի, կնկնի... բայց չէ. նայի..
 շուրթը շրթից դանդաղ շոկւեց,
 մնաց մի պահ՝ աչքը մահի:

Ու սուր ճշաց՝ կարծես բռնի
 աչքերն, անշարժ, հեռուն գամած.—
 այդպէս հողին պիտի մեռնի—
 կամաց, կամաց, կամաց, կամաց...

Պ Ր Ի Ն Յ Ե Ս Ս Ա Մ Ա Հ

Նաարդին ու Գոնարին

Սպիտակ վարդեր կան շրթերի վրայ քո,
 աչքերիդ լճի մէջ—մոռացման թերթեր:
 Յաւիտեան հանգել է աչքերիդ կրակը
 ու բացւել են տեղը սպիտակ վարդեր:

Դու խաղաղ նիրհել ես, յաւիտեան լռել ես
 և այնպէ՛ս է քաղցր լուծիւնը քո,
 որ մի պահ մարել եմ առաջւայ հրերս
 ու խմում եմ նիրհդ՝ լուսաւոր ու դոհ:

Ախ, կարծես թէ սիրտս քեզ դարեր սիրել է
 ու գտել է լոյսդ դադաղում հիմա.
 քո գունատ աչքերը քո մարմնւ աչքերը
 իմ հողին դերել են, օ, պրինցեսսա Մահ...

Եւ ահա թեքւել եմ ու զոգոջ շրթերս
 համբուրում են կարծր քո ճակատը սառ—
 համբույրով տալիս եմ կարօտի վարդերս՝
 քո լուսէ յուշի հետ մոռացմանը տար...

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

1

Վահան Տէրեան, ինչպէս երգեմ յիշատակը քո.
 Թող լուս փութի հիմա իմ դէմ անլոյս երեկոյ:
 Սրտիս վրայ իջնի թող մութ մի ամպի քուլայ,
 քամին բերէ թող մահւան բօթ ու անձրեր լայ:
 Եւ թող թափուեն շուրջս աշնան տերեւներ՝ գեղին
 և զարդարեն, Վահան Տէրեան, քո անցած ուղին:
 Ու մշուշում տխուր երգով բիւրատուր գանգեր
 Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու ընկեր...

2

Դու արդէն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու,
 ու լուել է երգը քո արդէն հիմա,
 բայց զգում է սիրտս, որ նորից կգաս դու,
 երբ իջնի գիշերը ու անձրեր լայ:

Երբ իջնի գիշերը ու անցած յուշերը—
 անցածի փշերը դառնօրէն խոցեն—
 որք, մենակ կգաս դու և կերգես քո սէրը,
 որ վերջին մեր սէրն է աշխարհում գուցէ:

Որք, մենակ կգաս դու և նորից քո երգը
 կվառէ սրտում մեր կարօտանք ու սէր.
 անարե սրտում մեր կվառէ քո երգը
 երազներ անմար ու ցնորքներ լուսէ:

Եւ նորից կգանք, որ մեր սրտին դու մժա ես,
 մորմարող հրի պէս մեր հիւանդ արեան,
 որ լուսէ երգին քո մեր հոգին կարօտ է,
 օ, հեռու ընկեր իմ, օ, Վահան Տէրեան...

3

Դու—լուսէ, անցար ու չկաս:
 Դու—թեթև, անմարմին, անծիր:
 Դու ուրիշ խնդութեան երազ:

Դու սրտում մեր ընդմիջա վառեցիր
 կրակներ անմար ու թաղուն:
 Փռեցիր լուսաւոր գանձեր:

Եւ երբէք, երբէք չի աղօտի
 քո կանթեղը խաւար մեր հոգում,—
 քո կանթեղը—հեռու կարօտի:

Մ Ա Ն Ի Ա Ն Տ Ե Ս Ի Լ

Սիրելի Գառիկ Անանունին

Որպէս լքած թաւջութակի ձգած մի լար՝
 գողում է սիրտս կարօտով մի տնարկու.
 կարօտներին դադաթն է այն՝ վերջին քնար.—
 մի պիղկ պարան ու երկնուղէշ՝ փայտեր երկու:
 Որպէս բախտիս մոգթ քամահրանքը, կամ որպէս
 մի հին խոստում, որ անկատար, դժբաժ թողի—
 կախաղանի փայտերն ահա քաղաքի մէջ
 կանգնել են, սէգ, ու սպասում են կախաղի:
 կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,⁸
 ու մէջտեղում գողում է, մեղկ ու երերուն,
 մի գորշ պարան, ինչպէս տխուր այս օրերում
 անբոց մորմոքը նախրեան իմ սրբ հողու:
 Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
 ու լուծիւն մի անատեր, անլուր, անդող,
 ինչպէս մորմոքը օրերի, ինչպէս դաժան
 մահւան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանասող:
 Ու խանութները, գորշ կքած, ու այն մարդիկ,

որ հաւաքել են փայտերի շուրջը հիմա—
 մահւան բեկուն այդ քնարին այդքան մօտիկ—
 ինչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամայ:
 Եւ արդեօք ո՞վ է երազել այդքան դաժան—
 ու լուսաւոր առաւօտները իմ հողու
 ո՞վ դարձրեց—մի անկրակ իրիկնաժամ,
 ու գորշ պարան, ու երկնուղէշ փայտեր երկու:
 Գուցէ այդ ես եմ, որ սրտով իմ լուսնահար
 ո՛չ մի կրակ հեռուններից ձեզ չբերի,
 ու ցանկացայ, որ չօրհներգէ ո՛չ մի քնար
 լուսապսակ, պայծառ գալիքը նախի...

Երթամ հիմա: Ու կարօտով անմխիթար,
 իմ երգիչի երազներով ու հրերով,
 անհրապոյր իմ օրերի երգով մթաբ
 ու նախրեան իմ երազի վերջին սիրով—
 երթամ մարող ու մարմող իրիկւայ մէջ,
 որպէս ուրու հալածական, որպէս տեսիլ—
 տամ պարանոցս կարօտին այն երկնուղէշ
 ու օրօրւեմ՝ եղերական ու անբասիր...
 Թող ո՛չ մի գոհ չպանջւի ինձնից բացի,
 ուրիշ ոտքեր կախաղանին թող մօտ չգան.
 Եւ թող տեսնեն իմ աչքերի մէջ կախածի
 իմ սրբ երկիր, լուսապսակ քո ապագան:

Թող զուրս ընկած իմ աչքերի մէջ կախածի
 նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագայ—
 Թող ո՛չ մի զոհ չսպաննուի ինձնից բացի,
 ո՛չ մի սուեր կախադանին Թող մօտ չդայ...

1920. 6. X.

ՏՐԻՕԼԻՏ Լ. Բ.—ին

Խնջքան աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս—
 աչքքան աշխարհը անուշ ու ցանկալի կլինի.
 Թէ ուզում ես չսուգւել ճահճուտները անհունի—
 պիտի աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս:
 Այնպէս արա, որ կեանքում ո՛չ մի գանգատ չիմանաս,
 իմիր թախիծը հոգու, որպէս հրճւոնք ու զինի.—
 որքան աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս—
 աչքքան աշխարհը անուշ ու ցանկալի կլինի...

1921

ՆՐՐԱԿԻՐԹ Լ. — Ին

Ձեր հոգին—նուրբ, օսլայեած,
 ձեր սիրտը—գուրգուրած շնիկ:
 Իսկ ես սովորել եմ, գիտէ՞ք,
 որ հոգիս փողոցում քնի:

Ձեր հոգին նուրբ, օսլայեած:
 Ներեցէք... բայց կարո՞ղ է նա
 յետևի ոտքերին նստած—
 մինչև լոյս կարօտից ոռնալ:

Կարո՞ղ է արգեօք փողոցում,
 ուր անգամ արգելում է ծեծել—
 առաջին հանգիպած շան հետ
 միանալ, այսինքն—կցել:

Ախ, օրիորդ, ներեցէ՛ք: Դէ, ես
 որքան էլ բանաստեղծ լինեմ,
 բայց ձեզ պէս բարեկիրթ, ձեզ պէս...
 իմ յոյզերը զսպել չգիտեմ:

Ես առանց քաշելու, գիտէ՞ք,
 վաղը, երբ գարուն բացւի,
 կթողնեմ, որ հոգիս շրջիկ
 ամենքի հետ միանայ—կցւի:

Թէկուզ ես գիտեմ, որ նա
 երբ յետոյ յագեցած երգէ—
 իմ հոգու լնդերքի վրայ
 կբացւեն կապոյտ վերքեր:

Բայց էլի, մայիթերի վրայ
 փնտրելով փշրանքներ հացի—
 կվատնեմ իմ հոգին շոայ,
 կտամ շներին փողոցի:

Պոռնիկները ինձ քոյր կդառնան,
 շները—եղբայրներ անգին,—
 բայց ափսոս որ օտար կմնայ.
 ձեր մաքուր, օսլայեած հոգին...

ՆՐՔԱԿԻՐԹ Լ. — Ին

Ձեր հոգին—նուրբ, օսլայեամ,
 ձեր սիրտը—գուրգուրած շնիկ:
 Իսկ ես սովորել եմ, գիտե՞ք,
 որ հոգիս փողոցում քնի:

Ձեր հոգին նուրբ, օսլայեամ:
 Ներեցէք... բայց կարո՞ղ է նա
 յետևի ոտքերին նստած—
 մինչև լոյս կարօտից ոռնալ:

Կարո՞ղ է արգեօք փողոցում,
 ուր անգամ արգելւում է ծեծւել—
 առաջին հանդիպած շան հետ
 միանալ, այսինքն—կցւել:

Ախ, օրիորդ, ներեցէ՛ք: Դէ, ես
 որքան էլ բանաստեղծ լինեմ,
 բայց ձեզ պէս բարեկիրթ, ձեզ պէս...
 իմ յոյզերը զսպել չգիտեմ:

Իս առանց քաշելու, գիտե՞ք,
 վաղը, երբ գարուն բացւի,
 կթողնեմ, որ հոգիս շրջիկ
 ամենքի հետ միանայ—կցւի:

Թէկուզ ես գիտեմ, որ նա
 երբ յետոյ յագեցած երգէ—
 իմ հոգու ընդերքի վրայ
 կբացւեն կապոյտ վերքեր:

Բայց էլի, մայիթերի վրայ
 փնտրելով փշրանքներ հացի—
 կվառնեմ իմ հոգին շոայլ,
 կտամ շներին փողոցի:

Պոռնիկները ինձ քոյր կղաւնան,
 շները—եղբայրներ անգին,—
 բայց ափսոս որ օտար կմնայ
 ձեր մաքուր, օսլայեամ հոգին...

ԿԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԵՍ

Ինձ առաջին, որ ես իզուր եմ ապրում,
որ ես իզուր վերապրում եմ իմ խեղճ
ու խայտառակ գոյութեամբ
վեհութիւնը աշխարհի...

Ինձ առաջին, որ ես իզուր եմ ապրում...
Եւ ո՞վ առաջ. մի կատու,
որ գարնան դէմ, սիրակարօտ մլաւելով,
երազում էր տաք գգւանքներ ու խնդում:

Նա նստել էր կտուրին,
ու իր մըռած կողերն հողին քսելով,
մլաւելով աղիոգորմ,
կանչում էր սրճ կատուների, որ, աւանդ,
չկային...

Գարնան արեւն իրիկնային
դցել էր սլաղ մի ճառագայթ կողերին,
ու արեւի տակ գարնան
տաքանում էր կարօտը սրբ կողերի...

Ու կատուային աչքերում,
արդէն մարող ճառագայթի նման խեղճ,
հուրհուրում էր վերջին տաքնապը սիրոյ,
որ դեռ միտւմ էր ցամաքած սրտի մէջ:

Երկար, երկար մլաւում էր յուսահատ:
Եւ որպէս սև դաճնութիւն—
այդ աղեխարշ մլաւիւնը իրիկւայ
հոտում էր վար կտուրից,
որպէս թախիծ, որպէս թոյն...

Նայում էի ես երկար:
Լուռ էր այնպէս: Ու միայն ջուրն էր կաթում,—
երբ դիմացի կտուրից,
գաղտնի մօտենալով—
ցատկեց յանկարծ մի կատու:

Գեւ չէր տեսել: Բայց յանկարծ
նա նկատեց—ու մլաւիւնը խղճուկ
փոխեց մի սուր, արնափրփուր խնդութեան:
Եւ իրարու մօտեցած,
արդէն մարող լոյսերի տակ արեւի,
նրանք իրար միացան,
չիմանալով, որ նայում է մի չար աչք—
նեղքից...

Յետոյ... ներքի ինձ, երկինք,
որ հախլոցը դարնան
ու տեսարանը հեթանոս աշդ սիրոյ
մէջս շարժեց չար մի կիրք...
Եւ ես, յանկարծ,
ինքս էլ դեռ լաւ չհասկացած, թէ ինչու,
վերցրեցի մի բուռ ձիւն
ու խփեցի կատուներին սիրարժարծ...

Եւ այդ պահուն միայն ես
նկատեցի, որ եթէ՝
ես պատահմամբ այդ շար քայլը չանէի—
սիրով տարւած կատուները կառուրից
պիտի դետին ընկնէին...

Ստեղծ իմ թաց ձիւնսողնդից արթնացած,
սուր զայրացած, որ չթողին որ խաղան—
նրանք անեղ մլուսեցին դէպի ցած—
ու փախան...

Ո՛վ երկինք,
ներքի, որ ես ոչնչի չեմ պէտք եկել,
որ կեանքս ողջ երգ է եղել ու քամի...

Բայց մի անգամ, միայն մի,—
երբ դարուն էր, հախլոց—
ես փրկել եմ—թէկուզ կամքիս հակառակ—
երկու կատուի... կառուրից վայր ընկնելուց...

Ա Մ Ա Ռ

Աբղէն ամառ է շոգ, ջերմին,
արդէն հասել է բերքը բոքբ,
ծաղկել է վառ պարտէզը իմ. —
ինչո՞ւ եմ ես անօդ ու որբ:

Տւել է ինձ արևն ամռան
ինչ որ միայն կարող էր տալ.
սերմերն հասան ու չկորան. —
ինչո՞ւ ես չեմ կարող խնդալ...

Ամառը ինձ բերք է բերել,
տունս լցւի պիտի բերքով. —
բայց սիրտս մութ ու զուրկ է դեռ
և չի՛ լցւում ամռան երգով...

Ո՞վ գիտէ, սիրտ, ուղին քո մութ
ու խորհուրդները քո խաւար.
— սիրտ իմ, անհաս կեանքի խորհուրդ,
սիրտ իմ խաւար...

ԿԱՐՄԻՐ ՍՕՆԷՏ

Поэт всегда с людьми, когда
шумит гроза.

Брюсов.

Որպէս դաշոյն՝ օրերի հնամենի պատեանից
եղնում է, կարծր ու բոսոր, ու վառւում է ապագան.
և չի մտնի նա հնի փոշոտ պատեանը նորից
ու չի թաղւի օրերում, որ վառւեցին ու չկան:

Ի՞նչ է ուզում էլ տաղտուկ յիմարութիւնը ձեր խեղճ
և ձեր մեռնող աշխարհի տխրութիւնը յուսահատ.
այն, որ օրերն ապրեցին և բանաստեղծը երգեց —
չի խորտակւի տագնապից ու սարսափից ձեր վհատ:

Իմաստուն է օրերի վայրագ նահանջը հիմա,
ինչպէս փոշոտ պատեանի բիրտ հեռացումը սրից —
երբ ոտիս հանդիպած՝ պիտի կուես ահամա: —

Եւ ես, պօէտ իմաստուն, անա երգում եմ նորից.
նահանջում են օրերն ետ, հեռանում են ու չկան —
ու թռչում է երգս՝ նետ՝ դէպի վառնող Ապագան...

Ա Ս Տ Ղ Ի Կ

Քնար չկայ ձեռքիս և ոչ սրինդ անուշ,
որ քեզ երգեմ, Աստղիկ, կին դու՝ յաւերժ բեղուն,
ցնորք դարձած դու կին, արդէն մեռած վաղուց,
քարի կոտորած բեկոր՝ անդարձ կորած հողում:

Աստղիկ, հեռու տեսիլ, ինչպէս դարերն հեռու,
ո՞վ թարմութիւն գարնան, անուշ կարկաշ առւի,—
ինչո՞ւ սուեր դարձար, ինչո՞ւ դարձար ուրու,
և երբ պիտի նորից հմայքը քո վառւի:

Վաղուց անցել ես դու, Աստղիկ, կեանքից մեր մութ,
թողել ես կեանքը այս հիւանդ քրոջդ մեղկ,
թողել ես, որ երգեն նրան երգեր լուսնոտ,
լուսնոտ երգեր երգեն տխուր ձայնով բեկբեկ:

Նրանք սրինդ ունեն, նրանք ունեն քնար,
գեղգեղ երգում են մութ, տարտամ սէրերն իրենց,
սիրում են քո քրոջ մարմինը պաղ մարմար՝
սիրով անկիրք ու մեղկ, սրտով մեռած ու խեղճ:

Աշնան տնոյս, տխուր օրերն անոյս, բեկուն,
աշնան քամին, առուն, աշնան հովերը թաց
խօսում են մեղմ ձայնով նրանց հիւանդ հոգուն
սիրոյ մասին՝ վաղուց արդէն ցնորք դարձած:

Նրանք սրինդ ունեն, նրանք ունեն քնար,
գիտեն երգել աշնան հովի նման անուշ,
երգում են քո քրոջ մարմինը պաղ մարմար,
երգում են սէր, աշուն, աշնան ցնորք ու յուշ:

Եւ չեն սիրում նրանք էլ քո մարմինը տաք,
սիրոյ խնդում չկայ նրանց համար հիմա—
սիրում են սէրն իրենց, ցնորքը ջինջ, յստակ,
որ ամ պիտի իրենց անսուտ գգանք ու մահ:

Ու սուերներ դարձած՝ նրանք շրջում են լուռ
պուրակներում խոնաւ, բուլվարներում անմարդ:
Եւ չի վառւի նրանց կեանքում էլ ո՛չ մի հուր
և չի լցւի խանդով նրանց հոգին վհատ:

Աստղիկ, ինչո՞ւ անցար, ինչո՞ւ նրանց երգից,
երգած քո թոյլ, նւաղ, հիւանդ քրոջ մասին—
թողի՞ր դու կեանքը մեր և որք թողի՞ր դու ինձ,
և կեանքը սուտ դարձաւ՝ գիշեր, ցնորք, լուսին:

Ես ինչ անեմ հիմա. նրանք երգեր ունեն,
 նրանք գիտեն ապրել՝ լուսնի լուսին գերի,—
 բայց չեմ կարող հօ ես սիրել օրերը թէն—
 ուզում եմ ես գգւանք, գալարք ու խաղ հրի:

Ուզում եմ ես հիմա քո շէկ մազերը բոց,
 կարմիր շրթերը քո, կոնքերը քո հասուն,
 ուզում եմ կիրքը քո՝ կրակ դարձած կնոջ,
 տարփանքը քո բեղուն, որ չի երբեք կասում:

Ուզում եմ քո բրնձեղէ անյաղթ թևերը ձիգ,
 ու կուրծքը քո հրէ, արգանդը քո դարուն,
 ուզում եմ ջերմ կրքիդ ետերը շոգ, հրձիգ,
 անհուն աստղեր ավուդ երկրի անծայր հեռուն:

Անցնում եմ ես ահա փողոցներով քարէ,
 հսկայ շէնքերը ինձ նայում են խիստ, խոժոռ,—
 ապրել եմ ես այստեղ հարիւր, հազար տարի,
 բայց նոր եմ ես նորից՝ քաղաքներում այս նոր:

Անցնում եմ ես ահա քաղաքներով երկաթ՝
 շուրջս մարդիկ անվերջ, կրքի գալարք ու վէճ,—
 վառել եմ ես հզօր երգեր կեանքում վհատ
 ու, խենթ, փշրել կուզեմ վերջին պատրանքն իրենց:

Քնար չկայ ձեռքիս և ոչ արինգ անուշ—
 չեմ էլ ուզում նրանց երգերը մեղմ, յուզիչ,—
 շեփո՞րն եմ ես կեանքի՝ համակ կորով ու ուժ,
 շեփո՞ր եմ ես ահեղ՝ մի նոր կեանքի երգիչ:

Ու շուրջը իմ արդէն օրերը՝ կուռ, պողպատ՝
 ահեղ շաշում են՝ նոր երգով առոյգ ու ժիր,
 կանչում են ինձ նրանք, որ ես խօսքով երկաթ՝
 վառեմ նրանց հոգում երգեր կարմիր ու հիր:

Եւ իմ հոգին հիմա նրանց երգից այդ կուռ
 լցւել է բոլր հրով, կայտառ սիրով մի նոր.
 ես սէ՛ր կուզեմ հիմա, կնոջ գգւանք ու հուր,
 բեղուն մարմին կուզեմ՝ կրքիս նման հզօր:

Արի, Աստղիկ, հիմա, որպէս գալիք կեանքի
 անհուն, բեղուն խաւար՝ աստղի համար իմ վառ.
 եղիր, որպէս պղինձ, երկաթ եղիր հանքի,
 շինող կամքիս համար եղիր կարմիր մարմար:

Արի, որպէս անմար կրքով լցւած դարուն,
 ու կոյս եղիր՝ դարնան դաշտի նման խոպան,
 դարնան խանդի նման եղիր բորբոք, եռուն,
 որ ես, կայտառ, վառեմ քո մէջ իմ նոր ճամբան:

Արի հիմա, ծաղկուն, խնդուն, որպէս ամառ,
 Ժրգոյ՛մ, պարոյ՛մ արի ու ցանկութեամբ որոշ,
 Եղիր, Աստղիկ, տոկուն, կամքի պէս իմ յամառ,
 ի՛նչ կին, եղիր հիմա, որպէս կարմիր դրօշ:

Ինչպէս օրերը այս՝ գալիքներով բեղուն—
 այնպէս արգանդը քո անհուն լինի թող սօթ.
 Աստղիկ, գալիք դարձիր, դարձիր տարերք գեղուն,
 այլևս մայր դարձիր՝ գալիք կեանքի խորհուրդ:

Գալիս է կեանքը նոր—ու իմ ձայնից շեփոր
 քո դալիպազէ՛մ քրոջ ցնորքը ծնւի գարձաւ.
 Նրա հմայքը մեղկ ցնդեց երգից իմ նոր—
 սրինդ չկայ արդէն, դողգոջ քնար ու ցաւ:

Կանգնել եմ ես, հզօր, գալիք կեանքի առաջ,
 ու կիրքը իմ անսանձ յորդէ պիտի հիմա.
 Աստղիկ, իջիր նորից, որ իմ հրով վառած,
 արիւնդ արեւ ծնի գալիք կեանքի համար:

Արի, Աստղիկ, ու ան պայծառ յաւերժը իմ
 և միադ թող ծաղկի, ինչպէս իմ կամքը ձիգ,—
 ջարդել եմ ես արդէն նրանց քնարը հին—
 շեփոր-մարմինն է իմ կանչում խանդով հրձիգ...



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Արպէս սկիզբ	15
Յարդագողի ճամբորդները	21
Երեք երգ Տիւր. Աղջկան	27
Տեսիլաժամեր	37
Երեքը	47
Հէտերա-երազ	59
Հրդեհը	65
Եղերքը Աիդ	69
Մարի, էգ թռչուն	73

Ծ Ի Ա. Ծ Ա. Ն Ը

Ծիածանը	83
Կապոյտը	87
Ոսկին	98
Մանուշակագոյն	103
Հրաժեշտի երեկոն	110
Գաղէլներ	114

ՈՂ. ՉԱԿԻԶԻՈՂ ԿՐԱԿ

Իրիկունը	129
Վերադարձ	140
Առաւօտ	154

ԷՄԱԼԷ ՊՐՕՖԻԼԸ ՁԵՐ

Սօնէտ	179
Գալանտ երգեր	180
Տըիօլէտներ	195

ՓՈՂՈՅԱՅԻՆ ՊԶՐՈՒՀՈՒՆ

Արախճանք	207
Շամիրամ	209
Անկումների սարսափից	211
Վարսավիրի հմայքներ	214
Հայեացքների թափարդում	216
Շան կարօտներ	218
Խեղկատակ	220
ՈՒԹՆԵԱԿՆԵՐ ԱՐԵԻՒՆ	226
Տ Ա Ղ Ա Ր Ա Ն	243

ԽԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Պօէտ	267
Գիշերապահը	269
Պատահական անցորդին	271
Դահլճը կարմրազգեստ	272
Յիշում եմ հնչեց զանգը	273
Շամիրամ	274
Կան անտես հիւրեր	275

Կեանքը	276
Հմայում է ինձ լապտերը	277
Փողոցների մէջ կայ	279
Երգում է քաղաքն	280
Գուրար, հեռուում	281
Ճանապարհը գորշ	282
Այս շէնքի վրայ	283
Գիշերը յոգնած	284
Մարմնիս երազը	285
Դուրսը քամին	286
Ուրախանա նոր	287
Գիտեմ, որ մի օր կմեռնեմ	288
Հեռացումի խօսքեր	290
Տաղ անձնական	292
Ոսկեփրփուր, ոսկեպուրպուր	293
Աշնանային	295
Անքնութիւն	296
Աշունը գեղնաթուխ	297
Պառար է, գիշեր է	298
Կարմիր են դալիքի լոյսերը	299
Խնչ ես արգեօջ չգիտեմ	300
Աղմկում է իմ սրտում	302
Կարօտ	304
Գարունը սիրտ է յուզում	

Դու իմ գարնան առաւօտ	305
Հիմա յիշում եմ բոլոր	306
Մօրս համար գաղէլ	307
Քո վարդարանը	308
Մարինէտիկա	310
Պրինցեսա մահ	311
Վ. Տէրեանի յիշատակին	312
Մահւան տեսիլ	314
Տրիօլէա Լ. Բ.-ին	317
Ներակիրթ Լ.-ին	318
Կատուներն ու ես	320
Ամառ	323
Կարմիր սօնէտ	324
Ասողիկ	325
Բովանդակութիւն	
Նկատւած վրիպակներ	

ՆԿԱՏԻԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ծրցս	Տող	Տպւած է	Պէտք է լինի
9	24	Հեմ անցել	Հեն անցել
60	8	հրաւարս	հրավարս
83	1	լուսամփոփի մէջ	լուսամփոփի պէս
146	8	ու գնում էի	ու գնում է
157	13	երե քաղցր	երբ քաղցր
210	10	Ոտքի կելնէ նրա հազարամեայ Նաիրին	Ոտքի կելնէ նրա հետ հազարամեայ Նաիրին
211	12	որչպէս կորած	որպէս կորած
246	15	դու էլ ինձ մարդ ես	դու էլ ինձ պէս մարդ ես
249	4	ջան մնաց	ջան չմնաց
257	10	կեանքս կմոռնան	մեղքս կմոռնան

ՀԱՅԵՆԱԿԻ ԳԻՏԱՆԿԱՐԱՆ—

ԳՐԹ ՄԻԲՈՅԷԼ ՄԱԶՄԱՆԵՐԻ



